An. en

Գրոլետարներ բոլոր յերկիրների, միացե՛ք

ԱՆԱՐԽԻԶՄԻ
ԳԵՍՏԱՎՐԱՏՈՐՆԵՐԸ
ՅԵՎ ՆՐԱՆՑ
ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

Հայ ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի Գրադարան

ՊԵՏՀՐԱՏ • 1936 • ԵՐԵՎԱՆ

323.28/08
Կ-24

41

Կապիտալիզմի ոգու

... Ցայտն ի երանց տավրատորենները և

Գրոլետարներ բոլոր յԹրկիրների, միացեք՛

323.27(08)
Կ-24

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՌԵՍՏԱՎՐԱՏՈՐՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

632

Ա-II
81226

ՀՍՍՄ ԳԱ ԳՐԱԽՈՒՅՍ
ՀԱՏՈՒԿ 8

ՀՍՍՄ ԳԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՀԱՏՈՒՅՑԻ ԳՐՆԴԱՐԱՆ
ԵԿՄԻԱ

ԱՅԿՈՒՍՀՐԱՏ ● 1936 ● ՅԵՐԵՎԱՆ

РЕСТАВРАТОРЫ КАПИТАЛИЗМА
И ИХ ЗАЩИТНИКИ

Армпартиздат, Ереван, 1986

ԱՀԱ ԹԵ ՈՒՐ ԳԼՈՐՎԵՑԻՆ...

ԽՍՀՄ–ի Հոկտեմբերյան հեղափոխությունը ճեղքված առաջացրեց կապիտալիզմի մեջ, բանալով համաշխարհային պատմության նոր էջ: Սակայն բոլշևիկյան հեղափոխության հաղթանակով ջախջախվեց կապիտալիզմը միմիայն մի յերկրում: Այդ հաղթանակը հանդիսացավ կապիտալիզմի վախճանի սկիզբը, սակայն համաշխարհային կապիտալիզմը բնավ պարտված չճանաչեց իրեն: Ընդհակառակը: Մեր հեղափոխության հաղթանակը կապիտալիզմի մեջ ձգտում առաջացրեց մոբիլիզացիայի յենթարկելու բոլոր ուժերն ու բոլոր միջոցներն ինքնապահպանության նպատակով: Իսկ այդ ինքնապահպանությունը կապիտալիզմը չի տեսնում խորհրդային իշխանության ջախջախումից դուրս, մեր յերկրում հաղթանակ տարած սոցիալիզմի ջախջախումից դուրս: Այդ ե հիմնականը մահու և կենաց այն պայքարում, վորը մեր աչքի առաջ ծավալվում ե կապիտալիզմի և սոցիալիզմի միջև:

ԽՍՀՄ–ում սոցիալիզմի ձեռք բերած հաջողությունները բնավ չեն թուլացնում այդ պայքարը: Այդ հաջողությունները դնալով ավելի յեն համախմբում Խորհրդային Միության ժողովրդական բազմամիլիոն մասսաներին սոցիալիզմի շինարարության գործի շուրջը, մեր կուսակցության և մեր առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը: Յերկիրը հաստատուն քայլով առաջ ե գնում կապիտալիզմի մնացորդների վերջնական վերացման ուղիով, դասակարգերի վերացման ուղիով: Այժմ աշխատավորների ամենահետամնաց խավերը տեսնում են, վոր սոցիալիզմը յերջանիկ կյանքի հնարավորություն ե բացել նրանց համար: Բանվորական և գյուղացիական մասսաների նյութական բարեկեցությունն ու կուլտուրականությունն աճում են որեցոր: Մեր յերկրի աշխատավորները հպարտ են սոցիալիստական շինարարության հաջողություններով, անհողդողդ են դժվարությունները հաղթահարելու գործում, հավատացած են վերջնական հաղթանակի մեջ: Ամբողջ աշխարհի բանվորների և աշխատավորների աչքում, կապիտալիզմի կողմից բոլոր ճնշվածների աչքում, պրոլետարական դիկտատուրայի յերկիրը դարձել և իրենց սեփական վերահաս հաղթանակի ու ազատագրման խորհրդանշանը: Ներկայումս ամբողջ աշխարհում չկան դիտակից այնպիսի աշխատավորներ, վորոնք չտեսնեն ԽՍՀՄ–ի մեջ իրենց ամե-

նախատեսելի հենարանը՝ իրենց ապատագրման համար, իրենց ապագայի համար, յերջանկության համար մղած պայքարում:

Սակայն Խորհրդային Միության մեջ սոցիալիզմի ճեռք բերած հաջողություններն ավելի ու ավելի մեծ ատելություն և ուղղակի դաղանային կատաղություն են առաջացնում սոցիալիզմի թշնամիների մեջ: Յերկրի ներսում դասակարգային թշնամին, վորը —ինչքան էլ տրորված լինեն նրա կողերը — դեռ կենդանի յե, հաճախ պատրաստ է հուսահատության ամենատոր ակտեր գործելու սոցիալիզմ կառուցող աշխատավորների դեմ մղած իր պայքարում: Կապիտալիզմի յերկիրների բուրժուազիայի տիրապետող ուժերն այդ հաջողությունների մեջ տեսնում են իրենց կործանման մոտեցումը: Առանձնապես անհանգիստ են զգում իրենց այն յերկիրների կապիտալիստներն ու կալվածատերերը, վորտեղ արդեն կապիտալիզմը պահպանվում է միմիայն ֆաշիստական տեռորով և իմպերիալիստական արտաքին ագրեսիայի հույսերով:

Գաղազած ֆաշիզմը բոլշևիզմի դեմ արշավելու իր ճչան կոչերով ոսկ չեշտում է բուրժուազիայի անզորությունը՝ հակադրելու սոցիալիստական Խորհրդային Միության հզոր վերելքին հակասությունների մեջ խճճված կապիտալիզմի թեկուզ վորոշ հաջողությունները:

Հասկանալի յե, վոր կապիտալիզմը պատրաստ է կառչելու ամեն մի միջոցի, վորպեսզի թեկուզ մի կերպ պաշտպանի իր անհուսալի գործը և ինչով էլ լինի մնասի Խորհրդային Միությանը: Այդ հողի վրա միացել են ֆաշիստները ու տրոցկիստները վերջին տարիներս: Նրանց ճանապարհները միացան:

Տրոցկիստական–զինովյեվական տեռորիստական բանդայի Մոսկվայում տեղի ունեցած դատավարությունն ակնհայտ կերպով ցույց տվեց, թե ինչպես է տեղի ունենում այդ գործնականում, կենդանի կյանքում: Այդ դատավարությունը տրոցկիստներին ցույց տվեց իրենց նոր կերպարանքով՝ վորպես ֆաշիզմի ուղղակի գործակիցների: Պատահական չե այն փաստը, վոր ֆաշիստական մամուլն իր պաշտպանության տակ վերցրեց խորհրդային դատարանի կողմից դատապարտված տրոցկիստական–զինովյեվական տեռորիստներին:

Այդ պրոցեսը ցույց տվեց, վոր այնպիսի գործում, ինչպիսին և աշխատավորության ամենասիրելի առաջնորդներից մեկի՝ Ս. Մ. Կիրովի սպանությունը և մեր յերկրի մյուս առաջնորդների սպանության նախապատրաստումը, —նրանք գործել են միասին, սերտ դաշինք կնքած: Կիրովի սպանությունը գլուխ բերելու և մեր մեծ առաջնորդի ու յերկրի մյուս ղեկավարների դեմ մահափորձեր նախապատրաստելու համար բուրժուական որինականությունից ոգտվող Տրոցկին սերտ դաշինք կնքեց Գերմանիայի ֆաշիստական պահնորդական բաժ-

նի՝ Գեստապոյի հետ։ Հուդա Տրոցկու հետ համաձայնած՝ տրոցկիստա-կան-ֆաշիստական տեռորը գործնականորեն ղեկավարում էին մեր յերկրում արգահատելի Զինովյեվը, Կամենեվը, Սմիրնովը և նրանց ամբողջ կեղտոտ խմբակը։

Բավական է միայն այն, վոր ցույց տվեց Մոսկվայի դատավարությունը, վորպեսզի հասկանանք, թե ինչ են դարձել տրոցկիզմը և տրոցկիստները։ Բայց միայն տրոցկիստական-զինովյեվական բանդայի գործերի ծավալված հետաքննությունն և հնարավորություն տալիս վերջնականապես հաստատելու, թե ուր են գլորվել տրոցկիստները և նրանց զինովյեվական մանկլավիկները։

Մենշևիկների և եսերների կրած կրախից հետո տրոցկիստները նոր որինակ տվին, վոր կապիտալիզմի և սոցիալիզմի միջև այժմ ծավալվող կատաղի պայքարի պայմաններում վորևե միջանկյալ քաղաքական խմբակի համար տեղ չկա, վոր այդպիսի խմբակն անխուսափելիորեն գլորվում է դեպի բանվորների ու գյուղացիների ամենավոխերիմ թշնամիների բանակը։ Տրոցկիստները բոլշևիկյան կուսակցության և ԽՍՀ Միության դեմ իրենց մղած պայքարում վաղուց արդեն դրկվեցին աշխատավորության հետ իրենց ունեցած վերջին կապերից, վաղուց ընկան կապիտալիզմի բանակը, դարձան միջազգային հակահեղափոխության ավանգարդը։

Սակայն այժմ միայն այդ չէ, վոր պետք է ասել։ Այժմ պարզ է, վոր տրոցկիստները սոսկ ԽՍՀՄ-ի թշնամիներ չեն, սոսկ միջազգային բուրժուազիայի ավանգարդը չեն սոցիալիզմի դեմ մղվող պայքարում։ Հեղափոխության ուենեգատ տրոցկիստները, կորցնելով մասսաների հետ իրենց ունեցած կապերի մնացորդները, մերկացված լինելով աշխատավորների առջև, դարձել են բուրժուազիայի գործակիցները հակահեղափոխության ամենակեղտոտ, ամենատգոր գործերում։

Առաջ բուրժուազիան պետք է լինեիր ամենահետին քրեական տիպեր՝ ԽՍՀՄ-ում խորհրդային իշխանության ու բոլշևիկյան կուսակցության ղեկավարների դեմ մահափորձեր կազմակերպելու համար։ Վերջին տարիներս դրությունը փոխվեց։

Այժմ տրոցկիստները՝ դաղդած մեր կուսակցության դեմ իրենց մղած պայքարի անհաջողություններից, հակահեղափոխական բանդիտներ մատակարարող են հանդիսանում բոլշևիզմի ու խորհրդային իշխանության ղեկավարների նենգ սպանություններ կազմակերպելու համար։ Տրոցկիստները նախ և առաջ նշան են բռնում կուսակցության դեմ, սակայն — ինչպես և բուրժուական մյուս այլասերվածները — նրանք պատրաստ են, վորտեղ էլ հնարավոր լինի, վոչնչացնել վոչ միայն բոլշևիկյան կենտրոնը, այլև խորհրդային իշխանության տեղական ղեկավարներին։ Յեթե տրոցկիստական այդ տեսակ պլաններից

շատերն անիրագործելի յեն մնացել, ապա դրանում մենք տեսնում ենք վոչ միայն մեր շատ թշնամիների կատաղության անզորությունը, այլև աշխատավորական մասսաների մեջ բոլշևիկյան ղեկավարության ունեցած ամենամեծ հենարանի ցուցանիշը:

Առաջ բուրժուազիան թվեռք և իր շայկաներն ստեղծեր մեր արդյունաբերության մեջ, մեր գյուղատնտեսության մեջ՝ վնասարարություն անելու համար, սոցիալիստական տնտեսությունը և աշխատավորների բարեկեցությունը քայքայելու համար: Կարելի՞ յեր արդյոք կարծել, վոր այդ ստոր գործի համար ևս կգտնվեն վիժվածքներ, վորոնք դեռ յերեկ կոմունիստ եյին համարում իրենց: Այժմ մեր առջև կանգնած են արդեն մերկացված վնասարար տրոցկիստները: Յեթե դեռ վերջերս, տրոցկիստական-զինովյեվական բանդայի դատավարության ժամանակ, և՛ Զինովյեվը, և՛ Կամենևը լիտի անդորրությամբ պնդում եյին, թե հենց իրենք են կազմակերպել ու շտապեցրել Կիրովի սպանության իրականացումը, ապա այժմ, փաստերից նեղն ընկնելով, տրոցկիստները վայր են առնում իրենց դիմակները, վորոնց տակ իրենց վնասարար աշխատանքն են կատարել խորհրդային արդյունաբերության՝ մեջ, տրանսպորտում ու կոլտնտեսային շինարարության մեջ, նպատակ ունենալով թուլացնել վստահությունը դեպի մեր կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը:

Մենք գիտենք, վոր բուրժուազիային և նրա տրոցկիստական թափթփուկներին չհաջողվեց հասնել իրենց նպատակին, վոր արդյունաբերությունը, տրանսպորտը և կոլտնտեսությունները, չնայած բանվորների ու գյուղացիների թշնամիների բոլոր վտանգություններին, անշեղորեն ամրապնդվում, առաջ են գնում: Մեր թշնամիների այդ քարոզն ևս խափվեց: Սակայն տրոցկիստների հակահեղափոխական վնասարարությունը մեր արդյունաբերության մեջ, գործարաններում ու հանքահորերում, յերկաթուղիներում, շինարարություններում և գյուղատնտեսության մեջ՝ այժմ ապացուցված է և այդ արդեն խոստովանեցին մի շարք աչքի ընկնող տրոցկիստներ: Այդ նշանակում է, վոր վերջնականապես վոնդելով տրոցկիստներին մեր տնտեսական ապարատից, վերջ տալով նաև վնասարարների այդ բանդային, ավելի համարձակորեն առաջ քաշելով սոցիալիզմին նվիրված կազմակերպիչների նոր կադրեր, մենք ավելի մեծ հաջողություններ ձեռք կբերենք մեր արդյունաբերության մեջ, տրանսպորտում, խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում, ավելի արագորեն կբարձրանա աշխատավորների բարեկեցությունը:

Բուրժուազիան միշտ մեծ գումարներ է ծախսել լրտեսներ ու դիվերսանտներ գնելու և այլ յերկիրներ, մանավանդ Խորհրդային Միություն, ուղարկելու համար: Այդ դեղը հանձն եյին առնում սովորա-

քաոր բուրժուական հասարակության միայն վերջին թափթփուկները։ Այժմ, հանձինս տրոցկիստների, բուրժուազիան ԽՍՀՄ-ի դեմ դործակիցներ ստացավ նաև այս կեղտոտ դործի համար։

Արտասահմանի տրոցկիստական կազմակերպություններում վրխտում են բուրժուազիայի լրտեսները ու դործակալները։ Նրանք այնտեղ իրենց համար նպաստավոր միջավայր են դտել։ Փաստերը և մի շարք աչքի ընկնող տրոցկիստների բացահայտ խոստովանությունները ցույց են տալիս, որ այդ սրիկաները, ոչ միայն վախից դողդողած, այլև խղճի մտոք Խորհրդային Միության մեջ լրտեսի ու դիվերսանտի ծառայություն էլին կատարում և փառա իրենց իմպերիալիստ ու ֆաշիստ տերերի, հույս ունենալով արագացնել իրենց՝ իշխանության գլուխ անցնելը։ Պարտվողական դիրք բռնելով Խորհրդային Միության նկատմամբ, լրտեսության ու դիվերսիայի տրոցկիստական դործակալությունն արդեն նախապես փոս էր փորում ԽՍՀՄ-ի աշխատավորության համար, ձգտելով հեշտացնել իմպերիալիստական ու ֆաշիստական դորքերի հաղթանակը մեր յերկրի դեմ մղվելիք առաջիկա պատերազմում։ Մարդ սրեռք և յերկու մարտնչող բանակների միջև անզոր կերպով տատանվող թուլամորթ քաղքենի լինի, որ չբռնի, թե հատկապես դրան և հացնում ստորներից ստոր տրոցկիստական հակահեղափոխականների հակախորհրդային պայքարի տրամաբանությունը։ Ցավ չնայած այդ բոլորին, ԽՍՀՄ-ի՝ նրանց համար ցանկալի թուլացման փոխարեն, մեր յերկրի զինված պաշտպանության դործն աշխատավորների աչքի առջև հզոր թափով ամրապնդվում է՝ ի սարսափ բոլոր և ամեն տեսակ թշնամիների։

Այս ամենը վկայում է, որ այժմ տրոցկիստները ոչ մի հանցագործության առջև կանգ չեն առնում բոլշևիզմի դեմ իրենց տածած ատելության մեջ և մեր հեղափոխության դեմ, Հոկտեմբերի նվաճումների դեմ, աշխատավորության կենսական շահերի դեմ իրենց մղած հակահեղափոխական պայքարում։ Նրանք դարձել են ԽՍՀՄ-ի ժողովուրդների թշնամիները, դավաճաններն այն հայրենիքի, որի շահերը նրանք պատրաստ են վաճառքի հանելու քաղաքական դաղտնի առևտրի բորսայում, մի առևտուր, որն արդեն սկսել են նրանք ռուսերկրյա բուրժուազիայի վերնախավերի հետ։

Սրանք են փաստերը։

Սրանք տրոցկիստական առանձին վիժվածքների անջատ դործողություններ չեն։ Ոչ, այդ և այլասերված Տրոցկու և բուրժուական հակահեղափոխության տիզմի մեջ ընկղմած ամբողջ տրոցկիստական բանդայի քաղաքական դիրքը։

Տրոցկիստները, որպես հեղափոխության իսկական թափթփուկներ, դլորվեցին տեռորիզմի, վնասարարության, լրտեսության ու դի-

վերսիայի գիրքը՝ հոգուտ ռասաների բուրժուազիայի և նրա ֆաշիստական ուժերի։ Նրանք մնալով միջազգային հակահեղափոխության ավանգարդում, դարձան բուրժուազիային ծառայող հակահեղափոխական տեռորիստներ ու վնասարարներ, անարդ լրտեսներ ու դիվերսանտներ։ Մենք չենք ունեցել ավելի սոսկ, անազնիվ թշնամիներ, քան տրոցկիստները՝ յերկերեսանու իրենց դավաճան դիմակով։ Պարզ է մի բան՝ տրոցկիստները գլորվել-հասել են անկման վերջին աստիճանին...

Կարիք կա՞ արդյոք ծանրանալու այն հարցի վրա, թե ինչ պատասխան կտան Խորհրդային Միությանաշխատավորները տրոցկիստների այդ հանցագործություններին։ Արդյոք պրոլետարական դիկտատուրայից ներում կարո՞ղ է սպասել տրոցկիստական սրիկաների բանդան։ Մեր յերկրի աշխատավորները և ԽՍՀՄ-ի՝ ամբողջ աշխարհում գտնվող բարեկամները կարող են միմիայն մի պատասխան տալ դրան— հեղափոխական դատաստան՝ ահա պատասխանը տրոցկիստների հանցագործություններին։

Բոլշևիկները հիշում են իրենց պարտականությունը՝ բացատրելու մասսաներին քաղաքական նոր անցուդարձերի իմաստը և իրենց պայքարի խնդիրները։ Այդ անհրաժեշտ է թե՛ կուսակցության ներսում և թե՛ աշխատավորների ամբողջ մասսայի մեջ, մանավանդ յերիտասարդության մեջ։ Անհրաժեշտ է, վոր մեր պայքարի նոր դասերը բարձրացնեն մեր հեղափոխական զգաստությունը, բոլշևիկյան դիտակցականությունը։

Մենք դիտենք նաև, վոր հակահեղափոխական տրոցկիստներից պետք է բաժանել առանձին ազնիվ խորհրդային մարդկանց պատահական սատանումներն ու կապերը։ Յերկերեսանի տրոցկիստները ցնցուցին այն ամենը, ինչ և վորտեղ կարող էին։

Իսկ տրոցկիստական բանդային, վորը գլորվել-հասել է մինչև տեռորը, վնասարարությունը, լրտեսությունն ու դիվերսիանները, մենք պետք է վերջ տանք։ Վորքան ավելի վճռական լինի տրոցկիստական բանդային մեր հասցրած հարվածը, այնքան ավելի ուժգին կլինի այդ հարվածը մեր մահացու թշնամին՝ բուրժուական ֆաշիստական հակահեղափոխությունը։

«Правда», 8 հոկտեմբերի 1936 թ.

ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ-ԶԻՆՈՎՅԵՎՅԱՆ ԲԱՆԴԻՏՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՏԱՎՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՋԱՎՈՐ ՋՈԿԱՏՆ ԵՆ

Տրոցկիստական–զինովյեվյան տեռորիստական կենտրոնի դատավարությունը լուսարձակի պայծառ ճառագայթով լուսավորեց Տրոցկու, Զինովյեվի, Կամենևի և նրանց արբանյակների ամբողջ նողկալի գործունեությունը, հակահեղափոխական, տրոցկիստական–զինովյեվյան ընդհատակի բոլոր գարշահոտ անկյունները:

Տրոցկիստական–զինովյեվյան մարդասպանների դատավարության նշանակությունը նաև այն է, որ այդ պրոցեսը մինչև վերջ մերկացրեց տրոցկիստական–զինովյեվյան բանդիտիզմի ֆաղաֆական բովանդակությունը, *բանդիտիզմ, որն իր խայտառակ ուղին ավարտեց սերտ բարեկամություն հաստատելով գերմանական ֆաշիզմի հետ և աշխարհիս առաջին սոցիալիստական պետության ղեկավարների, խորհրդային ժողովրդի և նրա կուսակցության — Համամիութենական կոմունիստական բոլշևիկների կուսակցության ղեկավարների սպանություններ կազմակերպելով:*

ԽՍՀՄ Գերագույն դատարանի ռազմական կոլեգիայի դատավճռի համաձայն դնդակահարված տրոցկիստական–զինովյեվյան բանդիտները լիովին մերկացվել են իբրև ժողովրդի ամենավտանգավոր թշնամիներ, որոնք մի շարք տարիների ընթացքում պայքարել են սոցիալիզմի և Խորհուրդների դեմ, սոցիալիստական ինդուստրացման և կոլեկտիվացման դեմ, ԽՍՀՄ աշխատավորների առաջ բարեկամության դեմ:

Տրոցկիստներ–զինովյեվականները մերկացվեցին իբրև ֆաշիզմի ուղղակի գործակալներ և աշխատակիցներ, որոնք անցել էին կուսակցության և խորհրդային իշխանության դեմ մղվող պայքարի ամենատար միջոցներին, այն է՝ խորհրդային ժողովրդի լավագույն մարդկանց սպանությանը, միայն նրա համար, որպեսզի վոչնչացնեն սոցիալիզմը, վերականգնեն կապիտալիստական կարգերը, վերականգնեն 19 տարի սրանից առաջ տապալված կալվածատերերի, ֆաբրիկանտների ու գործարանատերերի իշխանությունը:

Վորքան էլ խնամքով ծածկեն տրոցկիստական – զինովյեվյան բանդայի պարագլուխները նույնիսկ դատավարության միջոցին իրենց չա-

գործունեության իսկական առիթները, վորքան էլ որքեր-բանդիտ Տրոցկին և ֆաշիստական մամուլը ոգնեն իրենց գործակիցներին, վորքան էլ հնարագիտություն ցուցաբերեն բանդիտների կամավոր պաշտպաններ Սիտրինը, Ֆր. Աղլերը և մյուսները—փաստը մնում է փաստ, վոր տրոցկիստական-զինովյեվյան տեռորիստական կենտրոնի իսկական դրոշ յեղել է կապիտալիզմի restավրացիան յերկրագնդի այն մասում, ուր կապիտալիստական կարգերը տապալվեցին 1917 թվի հոկտեմբերին և ուր ազատ ժողովուրդը Լենինի և Ստալինի դեկավարությամբ կառուցեց սոցիալիստական հասարակություն:

Այս միակ նպատակին են ծառայել հակահեղափոխական տրոցկիզմի բոլոր յուրատեսակ թեորիական «հիմնավորումները» մի շարք տարիների ընթացքում:

Այս նպատակին է յենթարկված յեղել տրոցկիստներ-զինովյեվականների հակակուսակցական և հակախորհրդային վնասարար աշխատանքը մեր յերկրում և մեր յերկրի սահմաններից դուրս:

Այս նպատակով եյին տրոցկիստական-զինովյեվյան տեռորիստները պատրաստում ընկեր Ստալինի և նրա ամենամերձավոր զինակիցների դաղրելի սպանությունը, վորոնց անունները մարմնացնում են այն նոր հասարակակարգը, սոցիալիզմը, վորը դալիս է փոխարինելու կապիտալիզմին և վորը հաղթանակել է Խորհուրդների յերկրում:

Կապիտալիստական restավրացիայի գրոհային ջոկատը ԽՍՀՄ-ում — ահա՛ տրոցկիստական-զինովյեվյան բանդայի իսկական դեմքը:

Դեռ 1921 թվին կուսակցության X համագումարում Լենինը, մերկացնելով Տրոցկուն և անարխոսինդիկալիստական ոպոզիցիային կուսակցության մեջ, զգուշացնում եր, վոր ֆրակցիոներները, մարդիկ, վորոնք հանդես են գալիս կուսակցության դեմ, կոմունիզմի դեմ, համառելով իրենց սխալների մեջ, իրենց քաղաքական դծի մեջ, շարունակելով պայքարը կուսակցության դեմ, անխուսափելիորեն պետք է դլորվեն սպիտակ-գվարդիական հակահեղափոխության բանակը:

Մարդասպանների տրոցկիստական-զինովյեվյան բանդայի խայտառակ և ստոր ուղին ցույց է տալիս, թե ինչպես փայլուն կերպով արդարացավ Լենինի այդ մարգարեական նախազգուշակությունը:

Սկսելով հակակուսակցական ֆրակցիա կազմելուց, անցնելով կուսակցության դեմ պայքարելու ավելի և ավելի սուր մեթոդների, կուսակցությունից վտարվելուց հետո դառնալով բոլոր հակախորհրդային, հակահեղափոխական խմբակների և հոսանքների կիզակետն ու շեփորը, տրոցկիստներ-զինովյեվականները, աստիճանից աստիճան գլորվելով, դարձան ֆաշիզմի շղթայած շները, ժողովրդի ամենավոխերիմ թշնամիները, վորոնք մահափորձ են կատարում նրա առաջնորդների

գեմ, դարձան հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատը, նրա կամքի ու ակնկալությունների արտահայտիչը:

Կուսակցության XIV համագումարում, 1925 թվին, Զինովյեվն ու Կամենևը հանդես եկան մեկ մեր երկրում սոցիալիզմ կառուցելու Լենին–Ստալինյան թեորիայի դեմ:

Համագումարից հետո շատ չանցած կազմվեց տրոցկիստների ու զինովյեվականների սերտ բլոկ:

Տրոցկիստներ–զինովյեվականների մոլեգին դրոհն ընդդեմ սոցիալիզմի կառուցմանը մեր երկրում կազմում էր նրանց ծրագրի — կապիտուլյացիայի, կապիտալիզմի վերականգնման ծրագրի հիմքը:

Կապիտուլյացիան, Մեծ պրոլետարական հեղափոխության նվաճումների հանձնումը միայն մի բան էր նշանակում՝ կուլակների ու կապիտալիստների իշխանության վերադարձը, կապիտալիստական կարգերի վերադարձը:

Հենց այն պատճառով, որ տրոցկիստներ–զինովյեվականները ամենից ավելի վարպետորեն էին քողարկում այդ ծրագիրը, միջազգային բուրժուազիան և երկրի ներսում գեղած դասակարգային խորթ ուժերը հույսերը դրել էին Տրոցկու, Զինովյեվի, Կամենևի և նրանց արբանյակների վրա:

ԽՍՀՄ–ում կապիտալիստական տարրերի վերացման պրոցեսում մեկը մյուսի հետևից ասպարեզից դուրս եկան էսերների, մենշևիկների ջախջախված ու վոչնչացված հակախորհրդային բուրժուական կուսակցությունները. նրանց տեղը բռնեց տրոցկիստական–զինովյեվյան խմբակը, վորը դարձավ սոցիալիզմի բոլոր թշնամիների վերջին հույսը:

1925–1926 թվականներին Տրոցկին, Զինովյեվը և Կամենևը Համ. Կ(բ)Կ ներսում գեղած մանր–բուրժուական այն ոպոզիցիայի մարմնացումն էին, վորը ձախ ֆրազներով քողարկված դիմադրում էր ինդուստրացման և կոլեկտիվացման քաղաքականությանը: 1925 թվականը մեծադույն պատմական մի նշանաձող էր պրոլետարական հեղափոխության զարգացման ասպարեզում: Կուսակցության առաջ ծառացան խնդիրներ, վորոնք իրենց պատմական թափով այդ ժամանակաշրջանը մոտեցնում էին նախահոկտեմբերյան ժամանակաշրջանի հետ: Այս մասնանշեց կուսակցությանն ընկեր Ստալինը՝

«Այն ժամանակ, 1917 թվին, խոսքն այն մասին էր, վորպեսզի անցում կատարենք բուրժուազիայի իշխանությունից դեպի պրոլետարիատի իշխանությունը: Այժմ, 1925 թվին, խոսքն այն մասին

և, վերջապես անցում կատարենք այժմյան տնտեսությունից, որն ամբողջությամբ վերցրած չի կարելի սոցիալիստական անվանել, դեպի սոցիալիստական տնտեսություն, դեպի այն տնտեսությունը, որը պետք է սոցիալիստական հասարակության նյութական հիմք ծառայի»[1]:

Սոցիալիստական տնտեսությունն անցնելու այս մեծագույն պատմական խնդրի դրումն ու լուծումը նախապատրաստվել էին Լենինի ու Ստալինի ղեկավարած բոլշևիկների նախորդ վճռական ու անձնուրաց ամբողջ պայքարով: Կուսակցությունն սկսեց նոր պայքար — պայքար՝ դեպի սոցիալիստական վերակառուցում չբնաջնջած կատարելու համար հսկայական տնտեսական-քաղաքական դժվարությունների պայմաններում, բարդ միջազգային պայմաններում: 1925 թվին փաստ դարձավ կապիտալիզմի մասնակի և հարաբերական կայունացումը, հեղափոխության տեմպի դանդաղումը կապիտալիստական յերկրներում: Մեր յերկրին այդ ժամանակամիջոցին զգալի նվաճումներ ձեռք բերեց ժողովրդական տնտեսությունը վերականգնելու համար մղվող պայքարում: Բայց սոցիալիստական շինարարության գլխավոր դժվարությունները դեռ մեր առջևն էին: ԽՍՀՄ շարունակում էր մնալ հետամնաց յերկիր աննշան ինդուստրիալ բազայով, որը մի փոքրիկ կղզի էր հանդիսանում անհատական գյուղացիական մանր ու մանրագույն տնտեսությունների ովկիանում:

Հատկապես այդ շրջանում առանձին, սկզբունքային նշանակություն ձեռք բերեց ընկեր Ստալինի զարգացրած՝ մեկ յերկրում սոցիալիզմի հաղթանակի վերաբերյալ լենինյան թեզիսը, առանձին նշանակություն ձեռք բերեց սոցիալիզմի ճակատագրի հարցը մեր յերկրում: Կապիտալիստական աշխարհը չափազանց թշնամաբար էր նայում ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար մղվող՝ բոլշևիկների պայքարին: Միջազգային իմպերիալիզմը տեսնում էր ի դեմս Խորհուրդների յերկրի իր գլխավոր թշնամուն, միջազգային սոցիալիստական հեղափոխության բազան և հզոր հենարանը:

Պաշտպանելով հակահեղափոխության ներքին ուժերը — ջախջախված, բայց դեռ չվոչնչացված շահագործող դասակարգերին, իմպերիալիզմը ուժեղ կերպով ինտերվենցիա յեր պատրաստում ընդդեմ ԽՍՀՄ-ի: Կապիտալիստական աշխարհն այդ պայքարում փնտռում էր և 1925 թվին գտավ նոր դաշնակիցներ ի դեմս հակակուսակցական, տրոցկիստական-զինովյևյան օպոզիցիայի: Իրականացնելով ընկեր Ստալինի նախաձեռնությունները այն մասին, թե ինչպես 1917 թվի Հոկտեմբերից առաջ մարդիկ կային, որոնք փորձում էին խանգարել կուսակցությանը Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության

---

[1] *Сталин*, «Об октябрьской революции», *էջ 106*.

համար մղվող պայքարում, այնպես էլ այժմ, 1925 թվին, կդառնվեն մարդիկ, վորոնք կաշխատեն խանգարել կուսակցությանը մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի համար մղած նրա պայքարում: Յեվ պատահական չե, վոր այդ մարդիկը դուրս յեկան Զինովյեվն ու Կամենևը. անարդ դավաճաններ— Հոկտեմբերի շտրայկբրեխերները— հանդես յեկան խղճուկ կապիտուլյանտների դերում, վորոնք փորձում էին կուսակցությանը ստիպել հրաժարվելու դիկտատուրայի հիմնական մասերի հետ սոցիալիզմ կառուցելու լենինյան պլանից, հրաժարվելու սոցիալիստական ինդուստրացման քաղաքականությունից, անձնատուր լինել դասակարգային թշնամուն և այդպիսով ճանապարհ հարթել մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու համար:

Թե՛ մեր պետական ձեռնարկությունների կապիտալիստական բնույթի վերաբերյալ գրպարտչական պնդումները, վորոնք ուղղված էին յերկրի ինդուստրացման դեմ, թե՛ Ստոլընիկովի առաջադրած «դաուեսացման»—ԽՍՀՄ կապիտալիզմի կցորդ դարձնելու— պլանը, — այդ բոլորն էլ մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու հակահեղափոխական, տրոցկիստական–զինովյեվյան ծրագրի պրակտիկ կետերն էին:

Զուր չե, վոր խորհրդակցություններից մեկում Ֆ. Ե. Զերժինսկին հակակուսակցական ճառով հանդես յեկած Զինովյեվի և ամբողջ տրոցկիստական–զինովյեվյան խմբակի հասցեին շպրտեց «դուք կրոնշտատցիներ՛ ք էք, դուք դավաճաններ՛ ք էք» ցասկոտ և խարանող խոսքերը:

Տրոցկու հին թեզիսը մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի անհնարինության մասին, սոցիալիստական Ռուսաստանի կործանման անխուսափելիության մասին՝ դուրս յեկով ամենապիտանի ծրագիրը Զինովյեվի ու Կամենևի համար, վորոնք 1917 թվին ակտիվ կերպով պայքարում էին ընդդեմ սոցիալիստական հեղափոխության: Հենց այդ տրոցկիստական ծրագիրն էլ միացրեց Տրոցկուն, Զինովյեվին և Կամենևին կուսակցության դեմ, ժողովրդի դեմ, սոցիալիզմի դեմ նրանց մղած պայքարում:

Կուսակցությունը վոտնատակ անելով դավաճանների ու շտրայկբրեխերների դիմադրությունը՝ լայն տնտեսական շինարարություն եր ծավալում, ամրացնելով պրոլետարիատի դիկտատուրայի տնտեսական դիրքերը: Վերականգնման շրջանից դեպի վերակառուցման շրջանն անցնելու պահին սկսվեց սոցիալիստական շինարարության պայքարի պատմության մեջ ամենավճռական մոմենտներից մեկը: Սրվեց դասակարգային թշնամիների դիմադրությունը: Խորհրդային Միության առաջ ամենայն արագությամբ ծառացավ ինտերվենցիայի սպառնալիքը:

Այս պայմաններում տրոցկիստական–զինովյեվյան բլոկը կատաղի

դրոհ սկսեց կուսակցության և նրա ղեկավարության դեմ։ «Տերմիդորի» — կուսակցության և խորհրդային իշխանության վորպես թե բուրժուական այլասերման — զրպարտչական աղաղակների ծխածածկույթի տակ տրոցկիստներ–զինովյեվականները ծավալում էին կապիտուլյացիայի, Մեծ սոցիալիստական հեղափոխության նվաճումները լիովին թշնամուն հանձնելու և կապիտալիստական կարգերի վերականգնման ծրագիրը։

Տրոցկիստական–զինովյեվյան բլոկը հուշակեց պարտվողականության լոզունգը Խորհրդային Միության և իմպերիալիստների դեմ։ Տրոցկիստներ–զինովյեվականները իմպերիալիստներին կուսակցության և խորհրդային իշխանության վերաբերյալ զրպարտչական նյութեր և տուտ տեղեկություններ էին մատակարարում, հեշտացնելով իմպերիալիստների՝ ԽՍՀՄ–ի դեմ տնտեսական ճնշում և ռազմական հարձակում կատարելու գործը։

Տրոցկիստներ–զինովյեվականները բացահայտ կերպով կանգնեցին ֆեոդալ կուսակցություն — կապիտալիզմը վերականգնողների կուսակցություն կազմակերպելու ուղու վրա։ Կուսակցությունից դաղտնի աշխատող ընդհատակյա ֆրակցիոն կազմակերպություն, դաղտնի ժողովներ, բացահայտ սպիտակ գվարդիականների՝ վրանգելյան ոստանների աջակցությամբ, հակախորհրդային գրականություն տպելու համար անհրաժեշտ տպարաններ կազմակերպելը, հակախորհրդային ցույցերը — ահա տրոցկիստներ–զինովյեվականների հակահեղափոխական վերաբերմունքի ուղին։ Սպառելով տրոցկիստական–զինովյեվյան հակակուսակցական խմբակի դեմ կուսակցության շրջանակներում պայքարելու բոլոր միջոցները, կուսակցությունը XV համագումարում մերկացրեց տրոցկիստական–զինովյեվյան հակահեղափոխության իսկական էությունը և իր շարքերից վտարեց նրա պարագլուխներին ու ակտիվ մասնակիցներին։ Կուսակցությունից դուրս մնացած Տրոցկին, Զինովյեվը, Կամենևը և նրանց արբանյակներն ամբողջությամբ, առանց քաշվելու իրենց դրսևորեցին իբրև կապիտալիզմի restauրատորների հակախորհրդային կուսակցություն, վորը թշնամի յե խորհրդային իշխանությանը, կոմունիստներին, թշնամի յե սոցիալիզմի գործին։

Տրոցկիստներ–զինովյեվականներն արագ կերպով դեն նետեցին ձախ դեսանների այն մնացորդները, վորոնցով առաջ նրանք քողարկվում էին։ Տրոցկիստներ–զինովյեվականների ձախ ֆրազը կուսակցության կողմից մերկացվեց։ Ձախջախված և մեկուսացված տրոցկիստական–զինովյեվյան խմբակը չեր կարող մասսաների մոտ դնալ կապիտալիզմի վերականգնման բացահայտ պլատֆորմով։ Այդ պատճառով ել տրոցկիս-

տական–զինովյեվյան հակահեղափոխությունը հենց այդ ժամանակվանից ի վեր սկսում է առանձնապես լայն կերպով կիրառել ամենազզվելի յերկերեսանիության, կուսակցության ու բանվոր դասակարգին խաբելու մեթոդները:

Կուսակցության XV համագումարում ընկեր Ստալինը յերկերեսանիությունը մատնացույց արավ վորպես տրոցկիստական–զինովյեվյան բլոկի ընորոշ ու հիմնական գծերից մեկը: Ընկեր Ստալինը Կամենևի ճառը խարազանեց՝ այն անվանելով «ամենակեղծ, ամենափարիսեցիական, ամենախարդախ և ամենախաբեբայական ճառը ոպոզիցիոն բոլոր ճառերից»:

«Ինչո՞վ բացատրել ոպոզիցիայի այդպիսի վարմունքը — հայտարարեց ընկեր Ստալինը կուսակցության XV համագումարում: — Այդ վարմունքը կարելի յե բացատրել միայն մի բանով՝ կուսակցությանը խաբելու, նրա աչալրջությունը թմրեցնելու, կուսակցությանը մի անգամ ևս մոլորության մեջ դցելու ցանկությամբ: Ոպոզիցիան յերկու յերես ունի՝ մեկը փարիսեցիորեն–սիրալիր, մյուսը մենշևիկյան–անտիհեղափոխական: Նա կուսակցությանը ցույց և տալիս իր փարիսեցիորեն–սիրալիր դեմքը, յերբ կուսակցությունը նրան հռչակ և տալիս և նրանից պահանջում և հրաժարվել ֆրակցիոնականությունից, պառակտման քաղաքականությունից: Նա ցույց և տալիս իր մենշևիկյան–անտիհեղափոխական դեմքը, յերբ հանձն և առնում բողոքով դիմելու վոչ–պրոլետարական մասսաներին, յերբ հանձն և առնում բողոք ուղղելու վոդոցին կուսակցության դեմ, խորհրդային իշխանության դեմ... Կարելի՞ յե արդյոք հետագայում ևս հանդուրժել այդ յերկվությունը, այդ յերկդիմությունը: Պարզ է, վոր այլևս չի կարելի հանդուրժել և վոչ մի բոպե»:

Կուսակցության XV համագումարի ժամանակամիջոցին տրոցկիստական–զինովյեվյան բլոկը հայտնաբերում է հակահեղափոխության կուսակցության բոլոր տարրերը: Տրոցկիստներ–զինովյեվականներն ունեցին իրենց ծրագիրը—մեր յերկրում սոցիալիզմի դեմ պայքարելու ծրագիր, մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու ծրագիր: Տրոցկիստական–զինովյեվյան բլոկն ուներ իր ընդհատակյա կազմակերպությունը, վորը գինտուում և իրեն դաշնակիցներ եր գտնում սպիտակգվարդիականների մեջև, վորը քանի գնում, այնքան ավելի սերտ կերպով եր շաղկապվում մեր յերկրի ներսում և յերկրից դուրս գտնված հակահեղափոխական թափթփուկների հետ: Տրոցկիստական–զինովյեվյան բլոկն ուներ Տրոցկու, Զինովյեվի և Կամենևի կողմից կուսակցության և նրա ղեկավարության հանդեպ դաղանային ատելության վոգով, մեր կուսակցության առաջնորդի հանդեպ — հանճարեղ Ստալինի

հանդեպ ատելության վրդով դատապարտված իր կադրերը: Դրանք ամեն ինչի ընդունակ թռկից վախածների կադրեր էին, որոնք նախապատրաստված էին քաղաքական մարդասպանների ու բանդիտների իրենց ապագա դերի համար:

Դեռ այն ժամանակ, կուսակցության XV համագումարի նախորյակին Մոլոտովը մատնանշեց, որ ոպոզիցիայի շարքերում կան հանցագործ, տեռորիստական տրամադրություններ:

«Սակայն ներկա պայմաններում, — հայտարարեց ընկ. Մոլոտովը Մոսկվայի կուսակտիվի նիստում 1927 թվի հոկտեմբերի 26-ին տված իր զեկուցման մեջ, — յերբ ոպոզիցիայի շարքերում գտնվում են մարդիկ, որոնք կուսակցականությունը թանգ չեն գնահատում, կուսակցության դեմ ծայր աստիճան դաղաղած են, ֆրակցիոն պայքարի սրումը կուսակցության առանձին դեկավարների դեմ, մասնավորապես ընկ. Ստալինի դեմ, ուղղակի հանցագործ բնույթ է ընդունում: Ոպոզիցիան իր շարքերում վորոշ այնպիսի տարրեր է դաստիարակում, վորոնք պատրաստ են կուսակցության դեմ պայքարելու ամեն միջոցներով: Ուստի պայքարի սրումը՝ անձնական հարձակումների և առանձին անձնավորությունների հալածելու ուղղությամբ կարող է ուղղակի ընդդեմ կուսակցության պարագլուխների հանցագործ տեռորիստական տրամադրություններ հրահրելուն ծառայել»: (Ձայներ՝ «ճիշտ է»)[1]:

Անցյալ կառավարության մեջ տրոցկիստական-զինովյևյան հակահեղափոխությունն աշխատում էր կանգնեցնել սոցիալիզմի հաղթական առաջխաղացումը:

1930 թվին Տրոցկին մի անգամ ևս ձևակերպեց տրոցկիստական-զինովյևյան հակախորհրդային խմբակի ծրագիրը:

Տրոցկին պահանջում էր՝ «գյուղատնտեսության բնագավառում կատեցնել հետագա կոլեկտիվացումը... արդյունաբերության բնագավառում դադարեցնել ինդուստրիայի մրցարշավը, դեն նետելով «Հինգամյակը չորս տարում» լոզունգը... Թեորիական բնագավառում վերացնել մի յերկրում սոցիալիզմի թեորիան»:

Հենց այն մոմենտին, յերբ կուսակցությունն Ստալինի բերանով ամբողջ աշխարհով մեկ հայտարարեց սոցիալիզմի ծավալուն հարձակման մասին, հակահեղափոխական տրոցկիստներ-զինովյևականները պարզեցին կապիտալիզմի լիակատար ռեստավրացիայի, կուլվածատե-

---

[1] Ընդգծումը մերն է։ Խմբ.

A II 81726

ների, ֆաբրիկանտների ու գործարանատերերի իշխանության ռեստավրացիայի դրոշը: Հակահեղափոխական տրոցկիստական–զինովյևյան խմբակի այս ծրագիրը մի անգամ ևս հաստատեց այս կապիտուլանտների դիմակը մշտապես պատռող ընկեր Ստալինի մերկացումների պատմական արդարացիությունը:

«Իրականում կապիտուլանտություն՝ վորպես բովանդակություն, «ձախ» ֆրազներ ու «հեղափոխական»–ավանտյուրիստական հակումներ՝ վորպես ձև, վորը քողարկում և ռեկլամում է կապիտուլանտային բովանդակությունը — այս է տրոցկիզմի էությունը», — ասում էր ընկեր Ստալինը կուսակցության XVI համագումարում:

Տրոցկիստական–զինովյևյան հակահեղափոխական տականքներն իրենց թևավորված զգացին 1931 և 1932 թվականներին: Բանն այն է, վոր հենց այդ ժամանակ կուսակցությունը բավականին մեծ դժվարությունների հանդիպեց գյուղատնտեսության բնագավառում: Պրոլետարիատի դիկտատուրայի կողմից վոչնչացվող շահագործող դասակարգերի մնացորդները, զգալով իրենց անխուսափելի կործանումը, նոր տակտիկայի անցան: Դասակարգային թշնամիները վորձում էին ներս սողոսկել կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների ղեկավարության մեջ և այնտեղ աշխատանքը կազմալուծել վնասարարության, պետության առաջադրանքների սաբոտաժի միջոցով: Այդ մի վորձ էր կոլտնտեսությունները ներսից պայթեցնելու, նրանց քայքայելու: Թշնամին կամենում էր այս ծայրից տապալել խորհրդային իշխանությունը, կապիտալիստական կարգեր հաստատել:

Տրոցկիստական–զինովյևյան հակահեղափոխականներին թևավորում էր պրոլետարական դիկտատուրային թշնամի դասակարգերի մնացորդների դիմադրության աճումը, նրանց վոգևորում էր ԽՍՀՄ–ի կապիտալիստական շրջափակումը: Հույս դնելով խորհրդային թիկունքի թուլացման վրա՝ միջազգային հակահեղափոխությունն արագացրեց ինտերվենցիայի նախապատրաստումը: Ինչպես հայտնի է, ինտերվենտները Խորհրդային Միության դեմ հարված էին պատրաստում 1931 թվի ամառը, իսկ Ճապոնիան, մասնավորապես, մանրամասն պլան էր մշակել Խորհրդային Միության վրա հարձակվելու 1932 թ.:

Վերջապես հակահեղափոխական տրոցկիստներ–զինովյևականների բեկորները գիտեին, վոր նրանց հետ կողք–կողքի գործում են կապիտալիզմի վերականգնման այլ պաշտպաններ ևս:

Ցեվ իրոք, Արդյունաբերական կուսակցությունը, հակահեղափոխական կոնդրատյևական «Աշխատավորական գյուղացիական կուսակցությունը», «Մենշևիկների Միութենական բյուրոն» — լրտեսների, վնասարարների, դիվերսանտների այս բոլոր կազմակերպությունները

ԳՈՒ ԿԵՆՏՐՈՆԱԿ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԿ. ՍՍՌ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

վաղջունեցին տրոցկիստների պայքարը կուսակցության դեմ, իմանալով, վոր ի դեմս տրոցկիստների նրանք ունեն պրոլետարիատի դիկտատուրայի տապալման և կապիտալիզմի վերականգնման իրենց նման պաշտպաններ:

Հակահեղափոխական արտաստահմանյան մենշևիկյան կենտրոնը ԽՍՀՄ-ի իրենց գործակալներին ուղղված դիրեկտիվ նամակում մատնանշում եր, վոր «տրոցկիստները Համ. Կ(բ)Կ Կենտկոմի դեմ մղած պայքարի հետևանքով ըստ էության անցել են սոցիալ-դեմոկրատիայի դիրքերը» և վոր տրոցկիստներին անհրաժեշտ է ցույց տալ աջակցություն, «վորը պետք է արտահայտվեր տրոցկիստների հետ համերաշխորեն կուսակցությունը քննադատելու մեջ»[1]:

1932 թվին տրոցկիստական-զինովյևյան հակահեղափոխականները իրենց վրա յեն վերցնում հակախորհրդային խմբակների կոնսոլիդացիայի (համախմբման) ինդիրը:

Տրոցկիստներ-զինովյևականները կապ են հաստատում աջ ոպոզիցիայի հետ կուսակցության դեմ միատեղ պայքար մղելու համար: Այս կապերի հիմքը և նրանց իսկական բովանդակությունը մերկացրեց ընկեր Ստալինը: XVI և XVII կուսակցական համագումարներում ընկեր Ստալինը մատնանշեց, վոր կապիտալիզմը ԽՍՀՄ-ում վերականգնելու ձգտումը միացնում է հակահեղափոխական տրոցկիստներ-զինովյևականներին «առանց դիմակի կապիտուլյանտների» հետ, ինչպես անվանում եր աջերին ընկեր Ստալինը:

«Ահա ձեզ անարդ յերկչոտների ու կապիտուլյանտների ծրագիրը, ԽՍՀՄ-ի մեջ կապիտալիզմը վերականգնելու հակահեղափոխական ծրագիրը,— ասում եր ընկեր Ստալինը կուսակցության XVII համագումարում:— Ինչո՞վ է այն տարբերվում ծայրահեղ աջերի ծրագրից: Պարզ է, վոր վոչնչով»[2]:

Զինովյևի, Կամենևի անարդ անունները նորից յերևան են գալիս, յերբ կուսակցությունը մերկացնում է կապիտալիզմի ռեստավրատորներ Ռյուտին-Սլեպկովի հակահեղափոխական խմբակը և աջ ոպոզիցիայի (Ուգլանով) ու աջ-«ձախ» բլոկի (Ստեն) շարքերից յելած նրանց արբանյակներին:

Այսորվա ըույսի տակ առանձնապես պարզ յերևում է, թե ինչ հակայական, պատմական դերծ կատարեց ընկեր Ստալինը, վորը 1931 թվի վերջում ցույց տվեց տրոցկիստական-զինովյևյան հակահեղափոխության իսկական դեմքը նրա «նոր» վորակի մեջ:

Ընկեր Ստալինի նամակը «Պրոլետարսկայա Ռևոլյուցիա» ժուռնալի

---

[1] Процесс контрреволюционной организации меньшевиков, եջ 83, 1931 թ.

[2] Ստալին, Լենինիզմի հարցերը, եջ 728։

խմբագրությանը պայծառ լուսաբաձակի նման լուսավորեց տրոցկիզմի իսկական դեմքը.

«Իրոք տրոցկիզմն առաջավոր ջոկատն է հակահեղափոխական բուրժուազիայի, վորը պայքար է մղում կոմունիզմի դեմ, խորհրդային իշխանության դեմ, ԽՍՀ Միության մեջ սոցիալիզմ կառուցելու դեմ:

Հակահեղափոխական բուրժուազիային ո՞վ տվեց բոլշևիզմի դեմ ուղղված հոդվոր զենք՝ ինչպես այն թեզիսը, թե սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում անհնարին է, ինչպես այն թեզիսը, թե բոլշևիկների վերաբերումն անխուսափելի յե և այլն: Այդ զենքը նրան տրոցկիզմը տվեց: Չի կարելի պատահականություն համարել այն փաստը, վոր բոլոր հակախորհրդային խմբավորումները ԽՍՀՄ-ում խորհրդային իշխանության դեմ պայքարելու անխուսափելիությունը հիմնավորելու վերաբերյալ իրենց փորձերում վկայակոչում էին տրոցկիզմի հայտնի թեզիսը մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության մասին, խորհրդային իշխանության վերականգնման անխուսափելիության մասին, կապիտալիզմին վերադառնալու հավանականության մասին:

Հակահեղափոխական բուրժուազիային ԽՍՀՄ-ում ո՞վ տվեց տակտիկական զենք՝ խորհրդային իշխանության դեմ ուղղված բացահայտ յելույթների փորձերի ձևով: Այդ զենքը նրան տվին տրոցկիստները, վորոնք փորձում էին հակախորհրդային ցույցեր սարքել Մոսկվայում ու Լենինգրադում 1927 թվի նոյեմբերի 7-ին: Սա փաստ է, վոր տրոցկիստների հակախորհրդային յելույթները բարձրացրին բուրժուազիայի վողին ու սանձալուծեցին բուրժուական մասնագետների վնասարար աշխատանքը:

Հակահեղափոխական բուրժուազիային ո՞վ տվեց կազմակերպական զենք՝ ընդհատակյա հակախորհրդային կազմակերպություններ ստեղծելու փորձերի ձևով: Այդ զենքը նրան տվին տրոցկիստները, վորոնք իրենց սեփական հակաբոլշևիկյան անլեգալ խումբն էին կազմակերպել: Սա փաստ է, վոր տրոցկիստների ընդհատակյա հակախորհրդային աշխատանքը հեշտացրեց հակախորհրդային խմբավորումների կազմակերպական ձևավորումը ԽՍՀՄ-ում:

Տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատն է:

Ահա թե ինչու լիբերալիզմը տրոցկիզմի նկատմամբ, թեկուզ և ջախջախված ու դիմակավորված տրոցկիզմի, քայլայողություն է, վորը սահմանակցվում է հանցագործության հետ, բանվոր դասակարգին դավաճանելու հետ»:

Տրոցկիզմի եվոլուցիայի այս նշանավոր բնութագիրը կուսակցությանն ոգնեց բոլշևիկյան աչալրջությունը բարձրացնելու, թշնամուն տեսնելու, ինչպես վոր նա իրականում կա:

Իրենց հաշիվները 1932 թվին սոցիալիստական շինարարության դժվարությունների վրա կառուցող կապիտալիզմի տրոցկիստական-զինովյեվյան ռեստավրատորների հույսերը ջուրն ընկան: Դասակարգային թշնամու դեմ մղվող պայքարի պարզ ստալինյան գիծը կուսակցությանը լիակատար հաղթանակ բերեց: Կուսակցությունը ջախջախեց կուլակության կազմակերպած սաբոտաժը և համախմբեց կոլտնտեսականներին:

«Հնգամյակը չորս տարում» լոզունգը, վորի դեմ այնպես կատաղի կերպով հարձակվում եր Տրոցկին, փայլուն կերպով կենսագործվեց: Ընկեր Ստալինի հանճարեղ առաջնորդությամբ կուսակցությունն այնպիսի արագ տեմպերով ամրացրեց Խորհրդային յերկրի պաշտպանունակությունը, վոր թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում յեղած թշնամիները ստիպված յեղան ռազմական հարձակումը հետաձգել ավելի ուշ ժամանակի համար: Կուսակցությունը, վերջապես, ջախջախեց բոլոր հակահեղափոխական այն խմբավորումները, վորոնց մուտքագրվեն եյին հանդիսանում տրոցկիստներ-զինովյեվականները:

Այն ժամանակ տրոցկիստական-զինովյեվյան հակահեղափոխությունը [illegible] խորհրդային իշխանության և կուսակցության դեմ պայքարելու: Կապիտալիզմի վերականգնման համար:

Առաջները, 1927 թվին, Տրոցկին, Զինովյեվը, Կամենևը փորձում եյին հակախորհրդային ցույցեր կազմակերպել, ձեռնարկություններում գործադուլներ տարածել, հակահեղափոխական թռուցիկներ տարածել: Հակախորհրդային պայքարի այս բոլոր մեթոդներն այն հաշվով եյին կիրառվում, վորպեսզի տրոցկիստական-զինովյեվյան հակահեղափոխության ուռկանն ընկնի մասսաների վորոշ մասնիկը, դժգոհություն գրգռելով այդ մասսաների մեջ կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքականության դեմ, ոգտագործելով դժվարությունները: Սակայն պայմաններն արմատապես փոխվեցին:

Այլևս չի կարելի ոգտագործել դժվարությունները, վորովհետև սոցիալիստական հարձակման ստալինյան պլանը որ որի վրա նորանոր հաղթանակներ, Խորհրդային Միության աշխատավորների բարեկեցության ավելի մեծ աճ է բերում: Հակախորհրդային ցույցի կանչելու համար մարդ չկա, վորովհետև սոցիալիզմին թշնամի դասակարգերի մնացորդները ջախջախված են, իսկ ժողովուրդը, խորհրդային

ժողովուրդը, խիտ, համախմբված շարքերով գնում է կուսակցության հետևից, նրա դրոշի, Ստալինի դրոշի տակ սոցիալիզմ է կառուցում: Անգոր է դուրս գալիս տրոցկիստական–զինովյեվյան դրպարտության թույնն ընդդեմ Խորհրդային Միության սահմանից այն կողմը. ամբողջ աշխարհս աշխատավորները տեսնում են, թե ինչպես է աճում և ամրանում սոցիալիզմի հենարանը, համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադը:

Չի կարելի հույս դնել ինտերվենտների անմիջական հարվածի վրա. չէ՞ որ արդեն խորհրդային սահմանները շրջապատված են ամրություններով, արդեն վերազինված է Կարմիր բանակը, արդեն դղրդում են տանկերը, արդեն ոդում սավառնում են ստալինյան բազեները, խորհրդային անվեհեր ոդաչուները, որոնք պատրաստ են ամեն մի րոպե հակահարված տալու չափը կորցրած թշնամուն:

Վերջնականապես ոնտնկացած, ժողովրդի կողմից արհամարհված տրոցկիստական–զինովյեվյան հակահեղափոխական խմբակը վորոշում է իր նպատակին — կապիտալիստական կարգերի վերականգնմանը — հասնել գաղտնի, սպիտակ–գվարդիական տեռորի միջոցով: Տրոցկիստական–զինովյեվյան ճիվաղները, վոտք կոխելով քաղաքական բանդիտիզմի ուղին, խաբեբայությամբ վերադառնում են կուսակցության մեջ, լոյալության դիմակ են հագնում ավելի լավ թաղնվելու և քողարկվելու նպատակով, մամուլում, համոզումներում զղջում են իրենց անցյալ հանցագործությունների համար:

[illegible] Տրոցկին իր ձեռնասուններին դիրեկտիվ և տալիս կազմակերպել կուսակցության և խորհրդային իշխանության ղեկավարների սպանություններ:

Կուսակցության և կառավարության ղեկավարների սպանության նախապատրաստումով ավարտեց իր հանցագործ ուղին տրոցկիստական–զինովյեվյան խմբակը: Քանի՞ անգամ այդ խմբակի յելույթների սկզբում ընդդեմ կուսակցության կուսակցությունը նախազգուշացրել է տրոցկիստներ–զինովյեվականներին նրանց հակակուսակցական գործունեության անխուսափելի հետևանքներից: Քանի՞ անգամ կուսակցությունը ներել է տրոցկիստներ–զինովյեվականների հանցագործությունները, հույս ունենալով, վոր նրանք կուղղվեն: Կամենեվն ու Զինովյեվը, քարթու տրոցկիստներ Մրաչկովսկին ու Սմիրնովը դատարանում ստիպված եյին ընդունել, վոր կուսակցությունը, Կենտրոնական Կոմիտեն և ընկեր Ստալինը արել են այն ամենը, ինչ հնարավոր եր՝ նրանց հակահեղափոխությունից հետ պահելու համար: Սակայն մի անգամ վոտք կոխելով սոցիալիզմի դեմ պայքարելու ուղին՝ տրոցկիստներն ու

զինուժեվականներն անխուսափելիորեն ցած եյին դլորվում աստիճանից աստիճան: Կուսակցության մեծամասնությանը չենթարկվելուց, Ֆրակցիոն պայքարից դեպի անլեգալ թռուցիկների տպագրություն, դեպի կոնսպիրացված ընդհատակի ստեղծում, դեպի հակախորհրդային ցույցերի ու գործադուլների կազմակերպում, դեպի զոդում սպիտակդվարդիականների հետ և վերջապես դեպի դարշելի տեռոր կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության ղեկավարների դեմ, դեպի Սերգեյ Միրոնովիչ Կիրովի սպանությունը, դեպի մահափորձ ժողովրդի առաջնորդ ընկեր Ստալինի և նրա զինակիցների դեմ, դեպի դաշինք դերմանական Ֆաշիզմի արյունոտ պահնորդական բաժնի հետ (Գեստապո)—ահա տրոցկիստական-զինովյեվյան հակահեղափոխության խայտառակ ուղին:

Այս որինակով միանգամայն արդարացի դուրս յեկան Լենինի ցուցումները 1921 թվին կուսակցության X համագումարում այն մասին, թե մանր-բուրժուական, անարխիստական հակահեղափոխությունը «քաղաքական մի աստիճան է դեպի սպիտակ-դվարդիականությունը» և վոր իր սխալները պնդող Ֆրակցիան անպայման սոցիալիզմի թշնամիների, խորհրդային իշխանության թշնամիների բանակը կանցնի:

Տրոցկիստական-զինովյեվյան, տեռորիստական կենտրոնի դատավարության ժամանակ Կամենևն ու Զինովյեվն իրենց դարշելի, տեռորիստական գործունեությունը բացատրում եյին...«իշխանության ծարավով»...

Աղճուկ Ֆա՛րս:

Իսկ ինչո՞ւ եյին այդ մասին այնքան շաղակրատում Ֆաշիստական բանդիտների պարագլուխները: Ինչո՞ւ այս «բացատրությանը» այնպիսի ուրախությամբ կառչեց Ֆաշիստական մամուլը, վորը «Ֆրանկֆուրտեր Ցայտունգի» նման խոսում եր Կամենևի ու Զինովյևի «սատիկ վատասիրության» մասին, վորը այս առթիվ հիշում եր Դոստոյևսկուն և այլն:

Այնն վոր, ով մարքսիստորեն է մտածում, գիտե, վոր իշխանությունն ինքնին ոչինչ չարաչար չեն գործում: Գիտե, վոր իշխանությունը ինքնին հետաքրքրական բարբերբ տերերդատ ունալ շահեր, դասակարդային շահեր, կանգնած են դասակարդ կամ դասակարդեր:

Այնն մի մարքսիստի համար այբուբեն է, վոր իշխանության են «ձգտում» և այդ իշխանության համար են պայքարում հենց այն պատճառով, վորպեսզի վորոշ միջոցառումներ, վորոշ դասակարդի շահերով թելադրվող, այդ շահերը արտացոլող ու արտահայտող ռեալ ծրագիր կենսագործեն: Ճիշտ է, այդ ծրագիրը վոչ միշտ է բացահայտորեն ձևակերպվում կամ հրապարակվում. հաճախ այդ ռեալ ծրագիրն ամեն կերպ քողարկվում է լայնախոստում դեկլարացիաներով, շաղակրատու-

թյամբ, որը համեմվում է սոցիալական դեմագոգիայով, ինչպես, որինակ, ֆաշիստների կամ սոցիալ-դավաճանների մոտ։ Բայց այս հանգամանքը դրությունը ամենևին չի փոխում։ Մարքսիստը հենց պետք է կարողանա առանձնել ու ցույց տալ այն իսկական, իրական ծրագիրը, որով իրոք ղեկավարվում է տվյալ քաղաքական խմբակը կամ կուսակցությունը։

Միայն ապուշը կամ իր հաշիվն իմացող ֆաշիստական դեմագոգը Իտալիայի կողմից Հաբեշստանը գրավելը կբացատրի Մուսոլինիի «իշխանության ծարավով», իսկ իսպանական ֆաշիստների խռովությունը՝ գեներալներ Մոլայի ու Ֆրանկոյի անզուսպ փառասիրությամբ։

Մի՞թե Հիտլերին իշխանության մերկ ծարավն է ստիպում կտրել գերմանական կոմունիստների գլուխները։

Հանցանքի մեջ բռնված տեռորիստական բանդայի պարագլուխների կողմից կուսակցության և խորհրդային կառավարության ղեկավարների դեմ կատարվող տեռորն իրենց փառամոլությամբ բացատրելու փորձը ժողովրդի թշնամիների վերջին սուտը, վերջին յերկերեսանիությունն էր։

Կամենևն ու Զինովյևը չկարողացան նույնիսկ դատարանում — նրանց ֆաշիստական պաշտպանները չեն կարողանում նաև այժմ — ասել տրոցկիստական-զինովյևյան տեռորիստական կենտրոնի ծրագրի մասին ճշմարտությունը։

Սպիտակ-գվարդիական տեռորը յերբեք ծրագրից զուրկ չի յեղել։ Յերբ սպիտակ եսեր Կապլանն ատրճանակի փողն ուղղում էր Լենինի սրտին, նա, ինչպես և մահափորձի կազմակերպիչները—սպիտակ եսերների կենտրոնական կոմիտեն—իր առաջ միանգամայն վորոշակի խնդիր էր դնում՝ վերականգնել այն, ինչ արրել էր Մեծ պրոլետարական հեղափոխությունը 1918 թվի ոգոստոսի 30-ից 10 ամիս առաջ։

Յերբ 1922 թվին սպիտակ-գվարդիական Կոնրադին կրակում էր ընկ. Վորովսկու դեմ Լոզաննում, իսկ 1927 թվին սպիտակ գվարդիական Կովերդան ընկ. Վոյկովի դեմ Վարշավայում, կրակող բանդիտները հասատաս ծրագիր ունեին։ Դրանց ետևում կանգնած էր դաքսակցությունը, պատերազմ հրահրել խորհրդային երկրի դեմ։ այդ ձևով հասնել խորհրդային իշխանության տապալմանը, կապիտալիզմի վերականգնմանը։

Յեվ խորհրդային իշխանությունը վոչնչացնելու, սոցիալիստական կարգերը վոչնչացնելու, կապիտալիզմը, կալվածատերերի ու ֆաբրիկանտների իշխանությունը վերականգնելու նույն ծրագիրն էին դնում իրենց առաջ Տրոցկին, Զինովյևը, Կամենևն ու նրանց աբրանյակները, յերբ սպանում էին ընկ. Կիրովին, ատրճանակ էին բարձրացնում ընկեր Ստալինի և նրա զինակիցների դեմ։

Այժմ դնդակահարված բանդիտ Սմիրնովը դատարանում ասում էր, որ ծրագիրը չի հանդիսացել տրոցկիստական–զինովյևյան հակահեղափոխական ընդհատակի քննարկման առարկա:

Հասկանալի է, թե ինչու տեռորիստները կարիք չունեին ծրագիրը քննարկման ենթարկելու, որովհետև այդ ծրագիրը նրանք վաղուց իվեր կրում էին իրենց արգանդում կուսակցության դեմ մղած նրանց բազմամյա պայքարի ընթացքում:

Տեռորիստ Ռեյնգոլդը ստիպված եր դատարանում հաստատել, որ տրոցկիստական–զինովյևյան տեռորիստական կենտրոնն անհրաժեշտ չեր համարում որևե այլ ծրագիր ստեղծել, քան այն, որ նա առաջ էլ ունեցել է:

Մի՞թե կարո՞ղ էին սոցիալիզմի թշնամիներն այլ ծրագիր ունենալ, քան կապիտալիստական կարգերի վերականգնման ծրագիրը:

Սոցիալիզմի կառուցման դեմ պայքար մղելը միշտ էլ նշանակել է, թե՛ թեորիայում և թե՛ գործնականում, պայքար կապիտալիզմի վերականգնման համար, շահագործողների իշխանությունը վերականգնելու համար:

Բայց հենց այդ վերականգնողական ծրագիրն է, որ տրոցկիստական–զինովյևյան տեռորիստները չէին կարող ցույց տալ ժողովրդին: Նրանք սիրտ չէին անում այդ մասին խոսել պրոլետարական դատարանի դաժան վարձահատուցման նախորյակին անգամ: Նրանք այդ ծրագիրն ավելի խորն էին ծածկում, քան մարդասպանների լրցրած բրաունինգներն էին ծածկում:

Ամենազզվելի՛ ծրագիր:

Այդ ծրագրի իրագործման ամենազզվելի միջոցները — ահա թե ինչը տրոցկիստական–զինովյևյան տեռորիստական կենտրոնը շաղկապեց Ֆաշիզմի հետ, ահա թե ինչը դրդեց Տրոցկուն, Զինովյևին, Կամենևին և մյուսներին սերտ դաշինքի մեջ գնալու Գեստապոյի հետ:

1932 թվին ստեղծվում է տրոցկիստական–զինովյևյան տեռորիստական կենտրոնը: 1933 թվի հունվարի 30–ին Գերմանիայում բանվոր դասակարգի արյան վրայով իշխանության դրուխ են անցնում հիտլերականները — Ֆաշիզմի այդ ամենառեակցիոն մի տարատեսակը: Այդ դեպքերի զուգադիպումը ժամանակի տեսակետից պատահական չէ: Տրոցկիստական–զինովյևյան հակահեղափոխությունը հոգով հարազատ դուրս եկավ «Ֆինանսական կապիտալի ամենառեակցիոն, ամենաշովինիստական, ամենաիմպերիալիստական տարրերի» դիկտատուրային: Ի դեմս տրոցկիստական–զինովյևյան բանդիտների միջազգային հակահեղափոխական բուրժուազիան գտավ իր առաջավոր ջոկատը, իր կամքի և իղձերի «արժանի» արտահայտիչը:

Ֆաշիստներն իրենց նպատակ են դնում պահպանել կապիտալիստա-

կան սիստեմը: Տրոցկիստներ–զինովյեվականների նպատակն է վերականգնել այդ սիստեմը յերկրագնդի մեկ վեցերորդ մասում, ուր այն վոչնչացված է ԽՍՀՄ–ի աշխատավորների կողմից:

Ֆաշիզմը իմպերիալիստական պատերազմի դլխավոր հրձիգն ու Խորհրդային Միության դեմ ուղղված խաչակրաց արշավանքի դրդիչն է հանդիսանում: Տրոցկիստական–զինովյեվյան բանդիտները ձգտում են պատերազմ հրահրել ընդդեմ Խորհրդային Միության, վորովհետև նրանք այդ պատերազմի մեջ են տեսնում կապիտալիզմի վերականգնման ուղին:

Իզուր չէ, վոր Տրոցկին, Զինովյեվը և Կամենևը բացահայտ անամոթությամբ նախապատրաստում էին ԽՍՀՄ–ի պարտությունն ապագա պատերազմում ընդդեմ ֆաշիստական ինտերվենտների:

Զուր չէ, վոր «համաշխարհային բոլշևիզմի» դեմ պայքար մղելու լոզունգը, վորի մասին նորից աղաղակում են Հիտլերն ու Հերրելը Նյուրենբերգի ֆաշիստական համագումարում, միավորում է Հիտլերին ու Տրոցկուն:

Ֆաշիզմի տրոցկիստական–զինովյեվյան գործակալները կարող են մրցել իրենց տերերի՝ ֆաշիստների հետ դեպի սոցիալիզմը, դեպի կոմունիստական կուսակցությունն ու նրա ղեկավարները, դեպի Խորհրդային Միության ժողովուրդների յերջանիկ կյանքը տածած իրենց ատելությամբ: Ֆաշիզմը տրոցկիստական–զինովյեվյան բանդիտների մոտ հանդիպում է խորհրդային իշխանության դեմ պայքարելու ամենադաժան, ամենազզվելի միջոցների միջև խորություն չդնելու իրեն հարազատ նույնպիսի հատկության: Տրոցկիստական–զինովյեվյան տեռորիստներն անհոխարինելի յեն ֆաշիզմի համար դիմակավորվելու հատկությամբ: Գեստապոյի ի՞նչ ուրիշ գործակալ կարող է այնպես հարմիկ կերպով քողարկվել կուսակցական առմամբ, յերկերեսանիությամբ շահել այն կուսակցության վստահությունը, վորի ներքին կյանքը յերկար տարիների ընթացքում նա դիտե, յեթե վոչ տրոցկիստ-զինովյեվականը: Ֆաշիստական գաղտնի վոստիկանության ուրիշ վո՞ր գործակալն է անցել հակակուսակցական և հակախորհրդային պայքարի, հակահեղափոխական խորը ընդհատակի, ստոր պրովոկացիայի, սպիտակ–գվարդիական լրտեսության, դիվերսիայի ու տեռորի այդպիսի յերկարատև «դպրոց»:

Վերջապես ԽՍՀՄ–ի սահմաններից դուրս գտնվող հակահեղափոխական բուրժուազիան առանձնապես թանդ և գնահատում իր առաջավոր ջոկատը—տրոցկիստական–զինովյեվյան բանդիտներին—հենց այն պատճառով, վոր նրանք ձգտում են ֆիզիկապես վոչնչացնել բանվոր դասակարգի լավագույն մարդկանց, մարդկության լավագույն մարդ-

կանց, կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության ղեկավարներին, ձգտում են դլխատել աշխատավոր մասսաներին:

Պրոլետարական հեղափոխության առաջնորդների մասին Լենինն ասում էր, թե նրանք ավելի լրիվ և ավելի ամբողջական կերպով են արտահայտում, քան վորևե մեկը, «պրոլետարական հեղափոխության ամենադլխավոր և ամենաբնական գծերը»:

Լենինը հենց դրա մեջ էր տեսնում քանվոր դասակարգի հեղափոխության ղեկավարների նշանակությունը:

Մեր եպոխայում սոցիալիստական հեղափոխության ամենադլխավոր և ամենաբնական գծերն ամենից առաջ արտահայտում է աշխատավորների հանճարեղ առաջնորդ, Լենինի գործի մեծ շարունակող ընկեր Ստալինը և նրա հետ միասին նրա ամենամոտ զինակիցները—սոցիալիզմի շտաբ Համ. Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեի Քաղբյուրոն: Խորհրդային յերկրի ժողովրդի համար Ստալինի և նրա զինակիցների մեջ մարմնավորված է սոցիալիզմը—ԽՍՀ Միության 170 միլիոնանոց ժողովրդի յերջանիկ ներկան և բերկրալի ապագան և դեռևս կապիտալիզմի ու ֆաշիզմի լծի տակ տառապող մարդկության համար դալիք հեռանկարները: Ընկեր Ստալինի անունը և նրա մերձավոր զինակիցներ Մոլոտովի, Կագանովիչի, Վորոշիլովի, Որջոնիկիձեյի, Կոսիորի, Պոստիշևի, Ժդանովի անունները վաղուց արդեն դարձել են հարազատ, մտերիկ խորհրդային ամբողջ ժողովրդի համար—

«Մոսկվայից մինչև ամենահեռավոր ծայրամասերը,
Հարավային լեռներից մինչև հյուսիսային ծովերը...»:

Ժողովրդի մտքում և սրտում մեծ Ստալինի անունը նշանակում է սոցիալիստական կարգերի հաղթանակը, արտահայտում է աշխատավոր մասսաների լավագույն իղձերն ու ձգտումները: Այս հաղթանակների հետ են կապված նաև ստալինյան զինակիցների անունները: Ընկ. Մոլոտովի անունը կապված է պրոլետարական դիկտատուրայի որդան՝ խորհուրդների ամրացման հետ. ընկ. Կագանովիչի անունը՝ սոցիալիստական գյուղատնտեսության ամրացման, խորհրդային մայրաքաղաքի աճման, մեր յերկաթուղային տրանսպորտի բուռն աճման հետ. ընկ. Վորոշիլովի անունը՝ անխորտակելի Կարմիր բանակի հետ, սոցիալիստական հայրենիքի պաշտպանունակության ամրացման հետ. Սերգո Որջոնիկիձեյի անունը՝ ինդուստրացման մեջուկ ծանր արդյունաբերության հզոր զարգացման հետ:

Ընկեր Ստալինն իր ամենամոտիկ զինակիցների հետ ղեկավարում

և սոցիալիզմի հաղթական շինարարությունը, անդաստակարգ սոցիալիստական հասարակության կառուցումը:

Այդ գիտե, տեսնում է, զգում է ամեն որ, ամեն ժամ 170 միլիոնանոց խորհրդային ժողովուրդը: Ահա թե ինչու այդպիսի ջերմ, շնորհակալ սիրով և նվիրվածությամբ են վերաբերվում ժողովրդական մասսաները դեպի իրենց առաջնորդը: Ահա թե ինչու այսպիսի ջերմությամբ են արտասանվում Ստալինի անվան կողքին Մոլոտովի, Կագանովիչի, Վորոշիլովի, Որջոնիկիձեյի անունները:

Ստալինն ու նրա գինակիցները ժողովրդի առաջնորդներն են. ժողովրդի շահերից ելնելով նրանք ղեկավարում են սոցիալիզմի մեծ շինարարությունը:

Այդ գիտե Տրոցկին, այդ գիտեին Զինովյեվը, Կամենևը և նրանց արբանյակները: Հենց այդ պատճառով է, վոր նրանք սպանեցին ժողովրդի սիրած բոցավառ տրիբուն Սերգեյ Միրոնովիչ Կիրովին, հենց այդ է պատճառը, վոր նրանք պատրաստվում էին սպանել ընկերներ Ստալինին, Մոլոտովին, Կագանովիչին, Վորոշիլովին, Որջոնիկիձեյին, Կոսիորին, Պոստիշևին, Ժդանովին:

Բանդիտները գիտեին, թե ումն են նշան բռնում: Ստալինի վրա ձեռք բարձրացնելով, պատրաստվելով սպանելու Համամիութենական կոմունիստական բոլշևիկների կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Քաղբյուրոյի անդամներին, նրանք դավադրում էին Համ Կ(բ)Կ քաղաքականության, իսկական ժողովրդական քաղաքականության, խորհրդային ժողովրդի նվաճած, կառուցած սոցիալիզմի դեմ: Նրանք դավադրում էին սոցիալիստական ինդուստրացման դեմ, Խորհրդային Միության հերոսական բանվոր դասակարգի կառուցած գեղեցիկ ֆաբրիկաների ու գործարանների դեմ: Նրանք դավադրում էին գյուղատնտեսության կոլեկտիվացման դեմ, ծաղկող կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների դեմ, վորը ստեղծել են աշխատավորները գաղտած կուլակության դեմ մղած պայքարում: Նրանք դավադրում էին ժողովրդական մասսաների աճող բարեկեցության դեմ, նրանց նյութական բարոքության, ծաղկող՝ ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի դեմ, Խորհրդային Միության ժողովուրդների բարեկամության դեմ:

Պատրաստվելով սպանել ժողովրդի առաջնորդներին, տրոցկիստական-զինովյևյան բանդիտները դավադրում էին ամբողջ ժողովրդի դեմ, նրա կառուցած յերջանիկ, սոցիալիստական կարգերի դեմ, վորպեսզի վերականգնեն կապիտալիզմի նզովյալ լուծը: Ահա թե ինչի համար էին միացել ժողովրդի գաղտած թշնամիները՝ որեր-բանդիտ Տրոցկին, տեռորիստների պարագլուխները, յերկերեսանիության ու դավաճանության թրծված վարպետները՝ Զինովյևը և Կամենևը,

նրանց ձեռնասուններ Պիկելը, Յեվդոկիմովը, քարթու տրոցկիստներ Սմիրնովը, Մրաչկովսկին, Տեր-Վահանյանը, Ռեյնգոլդը, յերդվյալ մարդասպաններ Բակայեվը և Դրեյցերը, գերմանական պահնորդական բաժնի (Գեստապոյի) գործակալներ Ոլբերգը, Մոիսեյ և Նաթան Լուրյենները, Տրոցկու ուղարկած դիվերսանտ-տեռորիստներ Ֆրից Դավիդը, Գոլցմանը, Բերման-Յուրինը:

Ահա թե ինչու այդպես սերտ կերպով զոդվել են իրենց զզվելի ուստոր գործունեության մեջ Տրոցկին, Զինովյեվը, Կամենևը և նրանց վոհմակը Ֆաշիստական պահնորդական բաժնի—Գեստապոյի հետ:

Զուր չե, վոր Ֆաշիստական մամուլն այդպիսի ջանասիրությամբ սրբում և իր գործակալների՝ գնդակահարված տեռորիստների ու Տրոցկու հետքերը: «Ֆրանկֆուրտեր Ցայտունգը» փրփուրը բերանին աղաղակում է, թե տրոցկիստական-զինովյեվյան բանդիտների և Ֆաշիստների կապի մասին յեղած տեղեկությունները «ագիտացիոն աղմուկ» են: Ֆաշիստ գրչակները գոհունակությամբ քաղված քնար են բերում Տրոցկու ծայրեծայր խաբեբայական «Իմ կյանքը» գրքից, վորպեսզի ապացուցեն Տրոցկու և նրա ձեռնասունների «հեղափոխականությունը»:

Ֆաշիստական մամուլի խմբին միացել և այն մարդկանց ձայնը, վորոնք վաղուց արդեն հայտնի եյին իրրև բուրժուազիայի «անկեղծ նվիրված» ծառաներ: Պարոնայք Սիտրիններները, Ֆրիդրիխ Աղլերները, դեֆրուկերները և սոցիալ-դեմոկրատական ամեն տեսակի և դույնի մամուլն իրենց վրա յեն վերցրել տրոցկիստական-զինովյեվյան մարդասպանների փաստաբանի դերը, Ֆաշիստական դամքաշի դերը: Այդ փաստաբանների նպատակը պարզ է. նրանք աշխատում են ծածկել միջազգային բանվոր դասակարգից տրոցկիստական-զինովյեվյան բանդիտների — ԽՍՀՄ-ում կապիտալիզմի restauration-ների առաջավոր ջոկատի—իսկական եությունը:

Սակայն Սիտրիններին և նրանց արբանյակներին չի հաջողվի հետքերը կորցնել և խաբել բանվոր դասակարգին: Դատավարությունն անհերքելի պարզությամբ մինչև վերջը մերկացրեց տրոցկիստական-զինովյեվյան բանդիտների—կապիտալիստական աստիճանի վերականգնիչների—զզվելի ծրագիրն ու այդ ծրագրի կենսագործման զզվելի միջոցները:

Ահա թե ինչու բանդիտներին ատելության անեծքով պատասխանած ամբողջ 170 միլիոնանոց խորհրդային ժողովուրդը, աշխարհիս բոլոր յերկիրների բանվորները—այն ամենքը, վորոնք աղնիվ են մարդկության շարքերում—վողջունում են խորհրդային դատարանի խիստ և արդար դատավճիռը:

★

Խորհրդային պետության պահակ—Ներքգործժողկոմատի մարմինների աչալրջությունը քանդեց Տրոցկու, Զինովյեվի և Կամենևի չարագործ մտադրությունները: Տրոցկիստական–զինովյեվյան բանդիտները կանգնեցին խորհրդային դատարանի առաջ և արժանի պատիժը կրեցին:

Խորհրդային դատաստանը տրոցկիստական–զինովյեվյան մարդասպանների նկատմամբ դարձավ պատմության դատաստան: Գերագույն դատարանի ռազմական կոլեգիայի դատավճռի ամեն մի բառի մեջ հնչում է չահագործողների լուծն ընդմիշտ թոթափած ժողովրդի պատմական ճշմարտությունը:

Ֆաշիստական վարձկանները Տրոցկու, Զինովյեվի և Կամենևի, ԽՍՀՄ–ի սահմաններից դուրս յեղած հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատի ղեկավարների հույսերը մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու մասին նույնպիսի ճարճատյունով վիժեցին, ինչպես և նրանց նախորդներ՝ ապիտակ գեներների, Արդյունաբերական կուսակցության, կոնդրատյեվականների և մենշևիկների հույսերը:

Սոցիալիստական կարգերը մեր յերկրում հաստատվել են ամուր, անխախտ և անվերադարձ կերպով: Վոչ վոք այլևս չի կարող պատմությունը հետ դարձնել: Ցերբեք այլևս չի վերադառնա կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը:

Խորհրդային ժողովուրդը Համամիութենական կոմունիստական բոլշևիկների կուսակցության և ժողովրդի առաջնորդ մեծ Ստալինի ղեկավարությամբ կգնա դեպի սոցիալիզմի նորանոր խոշոր հաղթանակներ: Ամեն վոք, ով կհամարձակվի այդ ճանապարհին մեզ խանգարել, տրոցկիստական–զինովյեվյան բանդիտների նման կսրբվի և դուրս կնետվի պատմության աղբակույտը:

«Большевик» ժուռնալ, 1936 թ. № 18:

ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՐՈՑԿԻՍՏՆԵՐ-ԶԻՆՈՎՅԵՎԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՌԵՍՏԱՎՐԱՏՈՐՆԵՐՆ ԵՆ

Մեր յերկրի աշխատավորների համար ավելի ատելի անուն չկա, քան Ֆաշիստական Գերմանիայի գործակալ Տրոցկու անունը: Այդ անունը ժողովրդին ատելի յե այն պատճառով, վոր բանվոր դասակարգի այդ վոխերիմ թշնամին, վոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով, տեռրորիստական ակտեր կազմակերպելով ժողովրդի սիրելի առաջնորդների դեմ, մի նպատակ ել հետապնդում, մի ձգտում ուներ—պայքարել մեր յերկրում բուրժուական կարգերը վերականգնելու համար, կապիտալիզմը վերականգնելու համար:

Աշխատավորների համար ավելի անարգ և ատելի մարդիկ չկան, քան Տրոցկին և տրոցկիստական-զինովյեվյան մարդասպանները: Հենց այդ պատճառով ել Ֆաշիստները, բուրժուազիան և բուրժուազիայի Ինտերնացիոնալի բանակին պատկանող հավատարիմ լակեյները իրենց պաշտպանության տակ առան այդ սուր մարդասպաններին:

Ինչպես միշտ, այս անգամ ել բոլոր մութ ուժերը, կապիտալիզմի ամենառեակցիոն և չարիչ ուժերը, իրենց ամենատգեղ ձևով, ինչպես գերմանական արյունարբու Ֆաշիզմը, հանդես են գալիս ի պաշտպանություն տրոցկիստական-զինովյեվյան բանդայի: Գերմանական Ֆաշիստական պահնորդական բաժինը — Գեստապոն, անգլիական կոլոնիզատոր-ստրկատերերը «Դեյլի Մեյլ» լրագրից և իրենց դավաճանական գործունեության մեջ թրծված կապիտալիստական ստրկության հավատարիմ պաշտպաններ, զանազան յերկիրների մենշևիկների բանակին պատկանող ռեակցիոն առաջնորդները հանդես են գալիս ի պաշտպանություն Տրոցկու, Զինովյեվի, Կամենևի և մարդասպանների այդ ամբողջ բանդայի:

Ինչո՞վ պետք է բացատրել, վոր այդ ամբողջ թրծված վոհմակը բոցավառ սեր և տածում դեպի այդ բանդիտները, դեպի այդ դարանակալ մարդասպանները: Ինչո՞ւ գերմանական պահնորդական բաժնի բարբարոսները, վորոնք միջնադարյան բարքեր են տարածում, բանվորներին տանջում ու մահապատժի յեն յենթարկում, Տրոցկուն և նրա բանդային վահանի վրա յեն բարձրացնում: Ինչո՞ւ անգլիական կոլոնիզատոր-

ները, որոնք անխնա դատապարտան են տեղում միլիոնավոր դաղութային բանվորների ու գյուղացիների հետ, ինչո՞ւ իտալական ֆաշիստները, որոնք արյան մեջ խեղդեցին հարեշական ժողովուրդը, պաշտպանում են տրոցկիստական–զինովյևյան տեռորիստներին։ Ինչո՞ւ թրծված խաբեբաները, սոցիալ–դեմոկրատիայի ռեակցիոն առաջնորդներն իրենց վրա յեն վերցրել ֆաշիստների և այլ ռեակցիոն վոհմակի կողմից ֆաշիզմի գործակալներ Տրոցկուն, Զինովյևին, Կամենևին և մյուսներին պաշտպանելու գործում ոգնողների դերը։

Այս բոլոր մութ ուժերն այն պատճառով են տեռորիստական բանդային պաշտպան կանգնել, որ Տրոցկին, Զինովյևը, Կամենևը և նրանց ամբողջ վոհմակը բոլոր միջոցներով պայքարել են սոցիալիզմի շինարարության դեմ, ԽՍՀՄ–ը դեպի կապիտալիզմ վերադարձնելու համար։ Տրոցկին, Կամենևն ու Զինովյևը, որոնք փորձել են կուսակցության դեմ, սոցիալիստական շինարարության դեմ պայքարելու բոլոր միջոցները և լիակատար պարտություն են կրել, վերջին փորձն արին և դիմեցին ինտերվենտների հետ ուղղակի դաշինք կնքելուն ԽՍՀՄ–ում կապիտալիզմի restauration կատարելու նպատակով։

Ինչո՞ւ դերմանական ֆաշիստական պահնորդական բաժինը—Գեստապոն հնարավոր և անհրաժեշտ համարեց այս մարդասպաններին իր անձնագրերը և դրամը մատակարարելը։ Վորովհետև Տրոցկու և հիտլերականների նպատակը մեկ է—վոչնչացնել սոցիալիզմը և վերադարձնել մեր յերկիրը դեպի կապիտալիզմ։

Ինչո՞ւ Տրոցկին, Կամենևը և Զինովյևը գտնում էին, որ քեմպերիալիստների կողմից ԽՍՀՄ–ի դեմ պատերազմ սկսելու դեպքում պետք է ամեն կերպ ձգտել Կարմիր բանակի պարտությանը, ԽՍՀՄ–ի պարտությանը։ Վորովհետև Տրոցկին, Կամենևը և Զինովյևն ամբողջովին կանգնած էին կապիտալիստական restauration հողի վրա և գտնում էին, որ կապիտալիստների զինված ներխուժումը ԽՍՀՄ կարող կլիներ ապահովել այս կապիտալիստական restauration։

Մեր կուսակցությունն ու բանվոր դասակարգը վարուց արդեն մերկացրել են տրոցկիստներ–զինովյևականների ծրագիրն ու իդեոլոգիան իբրև կապիտալիզմի restauratorների ծրագիր։ Տրոցկիզմն ու զինովյևականությունն անխնա կերպով ջախջախվեցին մեր կուսակցության կողմից, բանվոր դասակարգն արհամարհանքով յերես դարձրեց նրանցից իբրև կապիտալիզմի ուղղակի գործակալներից։

Բայց այդ խղճուկ ճիվաղները չդադարեցրին իրենց ստոր վնասարարական աշխատանքները։ Նրանք հետևողականորեն, քանի դնաց,

այնքան ավելի անցան կապիտալիստական ստրկության ամենառեակցիոն ուժերի—ֆաշիզմի կողմը, մինչև վոր վերջնականապես ձուլվեցին նրա հետ թե՛ գաղափարապես և թե՛ կազմակերպորեն:

Նրանք՝ Տրոցկին, Զինովյևը, Կամենևը և մյուս տրոցկիստական-զինովյևյան սրիկաները իրենց տերերի՝ գերմանական ֆաշիստների, հիտլերականների հետ միասին, վորոնք յերազում են ԽՍՀՄ-ը գարձնելու իրենց գաղութը, փորձ եյին անում վոչնչացնել բանվորների ու գյուղացիների պետությունը: Սակայն այս անգամ ել կապիտալիստական ինտերվենցիայի գործակալների փորձը անհաջողության մատնվեց:

Խորհրդային իշխանության գոյության հենց առաջին որից նրա դեմ դուրս յեկան հին կապիտալիստական աշխարհի բոլոր ռեակցիոն ուժերը: Սկսվեց դաժան պայքար աշխատավորների համար կապիտալիստական ստրկությունից ազատագրություն բերող յերիտասարդ Խորհրդային պետության և բուրժուազիայի տիրապետությունը հավերժացնել փորձող ռեակցիայի բոլոր ուժերի միջև: Այս պայքարում հաղթանակը մնաց բանվոր դասակարգի ձեռքին: Բանվոր դասակարգի լավագույն զավակներն իրենց արյան գնով պաշտպանում եյին Խորհրդային պետության անկախությունը և հենց դրանով հնարավորություն եյին ստեղծում խաղաղ տնտեսական շինարարության, յերկրի տնտեսական վերածնունդի, սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման և սոցիալիստական հասարակություն ստեղծելու համար:

Քաղաքացիական պատերազմին հաջորդող տնտեսական ու կուլտուրական շինարարության բոլոր տարիները նույնպես դաժան դասակարգային պայքարի տարիներ են յեղել: Բացահայտ գինված պայքարում ջախջախված միջազգային ու ներքին հակահեղափոխությունն անճնառուր լինելու մտադրություն չուներ: Թշնամիները միայն փոխեցին պայքարի տակտիկան. նրանք գենքը ձեռքին ճակատից դրոհելուց անցան տնտեսական, քաղաքական և կուլտուրական ասպարիզում պայքար մղելուն:

Զանազան յերկիրների կապիտալիստներ բազմիցս փորձեր արին նորից ինտերվենցիա սկսել ընդդեմ Խորհրդային պետության: Խորհրդային Միության դեմ նոր ինտերվենցիա պատրաստելու այս փորձերին ոգնում եյին ԽՍՀՄ-ի ներսում յեղած հակահեղափոխական տարրերը—մենշևիկների, եսերների և կադետների՝ պրոլետարական հեղափոխության կողմից ջախջախված կուսակցություններն ու մեր կուսակցության շարքերում առաջ յեկած բոլոր հակակուսակցական խմբակները: Սոցիալիզմին թշնամի ուժերը վոչ մի րոպե չեյին դադարեցնում իրենց հակահեղափոխական գործունեությունը:

Կապիտալիստական տարրերի պայքարը սոցիալիզմի դեմ արդյու-

նաբերության ընդլայնման արտահայտվեց մի շարք վնասարարական ակտերով։ 1929 և 1930 թվականներին հակահեղափոխական տարրերը փորձում են շարքից հանել մի շարք կարևորագույն ձեռնարկություններ, շինարարություններ, դեպոներ, էլեկտրոկայաններ։ Նրանք փորձում են վնասարարություն անել նաև ռազմական արդյունաբերության ընդլայնման։

Արդյունաբերական կուսակցության դատավարությունը բացառապես ակնառու կերպով ցույց տվեց, որ ներքին հակահեղափոխությունն ուղղակի ոժանդակություն եր գտնում, ֆինանսավորվում եր, հրահանգներ ու ղեկավարություն եր ստանում մի քանի կապիտալիստական պետությունների կառավարություններից։

Կուսակցությունը, ղեկավարելով մեր սոցիալիստական շինարարության ամբողջ զարգացումը, պայքարում եր յերկրի ինդուստրացման համար, խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների զարգացման համար, քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերին դուրս մղելու համար։ Այս ամենը պայմաններ ստեղծեց սոցիալիզմի ծավալուն հարձակման համար ամբողջ ճակատով, վերջին կապիտալիստական դասակարգի՝ կուլակության վերացման համար։ Կուլակությունը, վերջին շահագործող դասակարգը, պահպանվել եր Մեծ պրոլետարական Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո։ Գյուղատնտեսության մեջ ամենից ավելի նշանակալից և մեծ տնտեսական ուժ ունեցող դասակարգ։ Կուլակությունն սկսեց առանձնապես դաժան պայքար խորհրդային իշխանության դեմ վերականգնման շրջանում, առաջին հնգամյակի տարիներում։ Այդ միջոցին կուսակցությունը ծավալուն հարձակում եր կատարում մեր յերկրի կապիտալիստական տարրերի դեմ։

Կուլակության պայքարը սոցիալիզմի դեմ ոժանդակություն եր գտնում նաև մեր յերկրից դուրս գտնված կապիտալիստների կողմից։ Այս տեսակետից չափազանց բնորոշ են այն փաստերը, որոնք կապված են Կոնդրատյև–Չայանովի և մյուսների խմբի հակահեղափոխական գործունեությունը մերկացնելու հետ։ Այդ խումբը, արտահայտելով կուլակության ամբողջ կատաղությունն ընդդեմ սոցիալիզմի, վնասարարություն եր կազմակերպում սոցիալիստական շինարարության գանազան ճակատամասերում գյուղում, գլխավորում եր կուլակային հակահեղափոխությունը և ուղղակի կապված եր մի շարք կապիտալիստական պետությունների պահնորդական բաժինների հետ, որոնք նրանց նպաստ եյին բաց թողնում խորհրդային իշխանության դեմ մղած պայքարում։

Մեր յերկրի ներսում յեղած հակախորհրդային, հակապրոլետարական տարրերը միշտ ել ընդհանուր լեզու յեն գտել և փոխադարձաբար

իրար հասկացել են մեր յերկրի սահմաններից դուրս գտնվող կապիտալիստական ինտերվենցիայի լկտի կողմնակիցների հետ, իրար հետ միանալով սոցիալիստական պետության դեմ կռվելու համար:

Սոցիալիզմի համար մղվող պայքարի հերոսական պատմությունն անթիվ որինակներ դիտե այն մասին, թե ինչպես բանվոր դասակարգի զանազան թշնամիներ, ամեն տեսակի հակահեղափոխականներ, պրովոկատորներ և դավաճաններ փորձել են ոգտագործել պրոլետարական դիկտատուրայից դժգոհ բոլոր տարրերին: Ամենից առաջ դժգոհների այդ միջավայրում է, վոր նրանք փնտռել, գտել և գտնում են իրենց դաշնակիցներ ու ոգնականներ: Հակակուսակցական այն տարրերը, զանազան տիպի ոպոզիցիոներները, վորոնք չեն դադարեցնում կուսակցության դեմ մղվող պայքարը, անխուսափելիորեն դլորվել են և գլորվում են հակահեղափոխության բանակը:

Ինչպես վոր Ֆաշիզմի ուղղակի գործակալների համար մեկ է, թե այս կամ այն խումբը կամ առանձին անձնավորություններ ինչ «գաղափարական» շարժառիթներից դրդված են պայքարում պրոլետարական դիկտատուրայի դեմ, այնպես էլ հակակուսակցական, հակալենինյան այն խմբերի համար, վորոնք պայքարում են կուսակցության գծի դեմ, սոցիալիզմի դեմ, վերջիվերջո միևնույնն է դառնում, թե վո՞ր ուժերի վրա պիտի նրանք հենվեն, միայն թե այդ ուժերը թշնամի լինեն կուսակցությանը և խորհրդային իշխանությանը:

Ցեվ կուսակցության մեջ առաջացող հակակուսակցական ոպոզիցիաներն ու ֆրակցիաներն ամեն անգամ լենին-ստալինյան Կենտրոնական կոմիտեի դեմ մղած իրենց պայքարում, կուսակցության գծի դեմ, սոցիալիզմի դեմ մղած իրենց պայքարում վաղ թե ուշ անցել են հակահեղափոխության դիրքերը, հույս դնելով ինչպես յերկրի ներսում՝ խորհրդային իշխանությանը թշնամի տարրերի վրա, այնպես և յերկրից դուրս յեղած կապիտալիստական ուժերի ոգնության վրա: Կապիտալիզմի ռեստավրատորները իրենց նպատակի համար համախմբում և իրենց շուրջը միավորում են սոցիալիզմին թշնամի բոլոր ուժերը:

Ինչպես ցույց է տալիս սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարի պատմությունը, կապիտալիստական-ռեստավրատորական տարրերը մեր յերկրում հանդես են յելել տարբեր դրոշների տակ և արտաքուստ տարբեր պլատֆորմներով: Բայց բոլոր կապիտալիստական-ռեստավրատորական կուսակցությունների և հակախորհրդային խմբակների նպատակը մնում է միևնույնը—հետ դեպի կապիտալիզմը:

Տրոցկիստական-զինովյեվյան հակահեղափոխական բլոկն իրեն խնդիր էր դրել վերականգնել կապիտալիզմը: Տրոցկիստները, ձևականորեն մնալով դեռևս կուսակցության շարքերում, արտաքուստ և ավելի

ու ավելի բացորոշ կերպով անցնում էին մենշևիկյան, բուրժուական դիրքերը։ ԽՍՀՄ-ում յեղած տնտեսական շինարարության դեռ առաջին տարիները, յերբ կուսակցությունը ձեռնամուխ է լինում յերկրի սոցիալիստական ինդուստրացման ծրագրի իրագործմանը, տրոցկիստները կատաղի և անհաշտ կերպով հանդես են գալիս իրենց կապիտուլանտական ծրագրով ընդդեմ սոցիալիզմի շինարարության։

Տրոցկու սխրահռչակ այն թեորիան, թե սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում անհնարին է, վոչ այլ ինչ է, յեթե վոչ կապիտալիստական ռեստավրացիայի վատ քողարկված ծրագիր։

Ընկեր Ստալինը մատնանշում էր, վոր տրոցկիզմը «... հակահեղափոխական բուրժուազիային հոգևոր զենք տվեց ընդդեմ բոլշևիզմի, ինչպես այն թեզիսը, թե սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում անհնարին է, ինչպես այն թեզիսը, թե բոլշևիկների վերաբերումն անխուսափելի յե և այլն»։ Ցավ պատահական չէ, պարզաբանում էր այնուհետև ընկեր Ստալինը, վոր «... բոլոր հակախորհրդային խմբավորումները ԽՍՀՄ-ում խորհրդային իշխանության դեմ պայքարելու անխուսափելիությունը հիմնավորելու վերաբերյալ իրենց փորձերում վկայակոչում էին տրոցկիզմի հայտնի թեզիսը մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության մասին, խորհրդային իշխանության վերաբերման անխուսափելիության մասին, կապիտալիզմին վերադառնալու հավանականության մասին»[1]։

Տրոցկին թեավորում էր միջազգային հակահեղափոխության հույսերը, նրան թելադրում էր, թե ԽՍՀՄ-ում վորպես թե կան կապիտալիզմի ռեստավրացիայի բոլոր պայմանները։

Հավատալով բանվոր դասակարգի ուժերին, ժխտելով սոցիալիզմի կառուցման հնարավորությունը մեր յերկրում, Տրոցկին փորձում էր դիմադրել սոցիալիզմի հաղթանակին։ Հակահեղափոխական տրոցկիստներ ձգտում էին թշնամություն սերմանել բանվոր դասակարգի և գյուղացիության միջև, փորձելով պայթեցնել պրոլետարիատի դիկտատուրայի հիմունքների հիմքը՝ բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ, կարծելով, թե բանվոր դասակարգի ու գյուղացիության միջև անխուսափելիորեն պետք է առաջ գա ընդհարում, վոր գյուղացիությունն ի բնե արդեն անընդունակ է ներգրավվելու սոցիալիստական շինարարության մեջ։

Լենինն ու Ստալինը սովորեցնում էին, թե պրոլետարիատի դիկտատուրայի պահպանման և զարգացման պայմանն են հանդիսանում բոլշևիկյան կուսակցության միասնությունն ու միաձուլությունը։ Տրոցկին ձգտում էր քանդել այդ միասնությունը, փորձում էր մեք

---

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, եջ 591։

կուսակցությունը վերածել ֆրակցիաների ու խմբակների մի հավաքատեղի, վորպեսզի պայթեցնի բանվոր դասակարգի դիկտատուրան:

Տրոցկիզմի ծրագիրը ինդուստրացման բնագավառում վոչ այլ ինչ էր, յեթե վոչ մեր յերկիրը կապիտալիզմից կախյալ մի գաղութի վերածելու կապիտուլյանտական մի ծրագիր: Դեռ այն տարիներին, յերբ Տրոցկին ձևականորեն կուսակցության շարքերումն էր գտնվում, նա հայտարարում էր, թե խորհրդային եկոնոմիկան գտնվում է համաշխարհային կապիտալիստական եկոնոմիկայի կոնտրոլի տակ, վորը նշանակում էր Խորհրդային Միության կապիտուլյացիայի անհրաժեշտությունը կապիտալիստական սիստեմի առջև: Տրոցկիզմի բուրժուական եյության վառ ցուցանիշ էր հանդիսանում տրոցկիստների պայքարն ընդդեմ յոթժամյա աշխատանք ներմուծելու մեր սոցիալիստական ձեռնարկներում:

Տրոցկու պլատֆորմը, նույնիսկ նրա հին պլատֆորմը, յերբ նա ամեն կերպ քողարկվում էր և փորձում էր այդ պլատֆորմն արտաքուստ իբր թե մարքսիստական դարձնել, ըստ դործի եյության կապիտուլանտություն, կապիտալիզմի վերականգնման ծրագիր է հանդիսանում:

Տրոցկիստական պլատֆորմի կապիտալիստական-ռեստավրատորական եյությունը բաղմիցս մերկացվել է կուսակցության և ընկեր Ստալինի կողմից: Դեռ կուսակցության XV համագումարի վորոշման մեջ 1927 թվին ցույց է տրված տրոցկիզմի հակահեղափոխական եյությունը:

«Խորհրդային պետական ձեռնարկությունների սոցիալիստական բնույթի ժխտումը, մեր յերկրում հաղթական սոցիալիստական շինարարության հնարավորության ժխտումը, բանվոր դասակարգի՝ գյուղացիության հիմնական մասսաների հետ դաշինք մտնելու քաղաքականության ժխտումը, բոլշևիզմի կազմակերպական սկզբունքների ժխտումը (Համ Կ(բ)Կ և Կոմինտերնի պառակտման քաղաքականությունը) տրոցկիստական-մենշևիկյան ոպոզիցիային տրամաբանորեն հասցրին ԽՍՀՄ-ը իբրև այլասերված տերմիդորական պետություն զրպարտելուն, պրոլետարիատի դիկտատուրայի ժխտմանը ԽՍՀՄ-ում և նրա դեմ հակահեղափոխական պայքար մղելուն:

Արդյունքն այն յեղավ, վոր ոպոզիցիան գաղափարապես խզեց լենինիզմի հետ, այլասերվեց, դառնալով մենշևիկյան խմբակ, վորը կոխեց միջազգային և ներքին բուրժուազիայի ուժերի հանդեպ կապիտուլյացիայի ուղին և օբյեկտիվորեն յերբորդ ուժի դորձիք դարձավ ընդդեմ պրոլետարական դիկտատուրայի ռեժիմի: Հենց այդ պատճառով էլ ոպոզիցիան այնպիսի ջախջախիչ հարված ստա-

ցավ ինչպես կուսակցության անդամների ամբողջ մասայի կողմից, այնպես և ամբողջ բանվոր դասակարգի կողմից»[1]:

Ընկեր Ստալինը, մերկացնելով տրոցկիստական թեորիան, վորը ժխտում եր ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը, ասում եր կուսակցության XV համագումարում՝

«Իսկ ի՞նչ և նշանակում այդ դրությունը: Այդ նշանակում է կապիտուլյանտություն: Ո՞ւմ հանդեպ: Ակներևորեն մեր յերկրի կապիտալիստական տարրերի հանդեպ: Ե՛լ ում հանդեպ: Համաշխարհային բուրժուազիայի հանդեպ... Մի լավ թարմ ամեք մեր ոպոզիցիային, դեն չպրանք հեղափոխական ֆրազեոլոգիան, և դուք կտեսնեք, վոր այնտեղ հատակում նրանց մոտ նստած է կապիտուլյանտությունը»[2]:

Տրոցկիստական-զինովյեվյան հակահեղափոխությունն իր հին պլատֆորմին վոչ մի նոր բան չի ավելացրել: Նա փորձեց տեռորի միջոցով ընդդեմ կուսակցության և կառավարության առաջնորդների հասնել խորհրդային իշխանության տապալմանը և յերկիրը վերադարձնել կապիտալիզմի ուղին, ֆաշիզմի ուղին:

Տրոցկու և տրոցկիստների ծրագիրն ըստ եության յեղել է և է այն, վորպեսզի վերացվեն կոլտնտեսությունները ու խորհտնտեսությունները, հողերը վերադարձվեն կալվածատերերին ու կուլակներին, գործարանները՝ կապիտալիստներին: Հենց այդ էլ բուրժուական restauրացիայի համար պայքարելու ծրագիրն է:

Այդ ծրագիրը կենսագործելու համար մղվող պայքարում հակահեղափոխական, տրոցկիստական-զինովյեվյան բլոկը թևակոխեց տեռորիզմի ուղին ընդդեմ կուսակցության և կառավարության ղեկավարների:

Զինովյեվն ու Կամենևը, վորոնք իրենց քաղաքական ամբողջ գործունեության ընթացքում հանդիսացել են անսկզբունք, ճահճային, մերթ մեկ, մերթ մյուս ծայրահեղության նեամոլ մարդկանց մի տիպ, ըստ գործի եության վոչինչ չեն ավելացրել Տրոցկու կապիտալիստական, restauրատորական պլատֆորմին. նրանք այդ ծրագիրն ընդունել են ամբողջությամբ:

Կամենևն ու Զինովյեվը, վորոնք բազմիցս փախել-անցել են հակահեղափոխական բուրժուազիայի բանակը—բավական է հիշատակել նրանց շորայկբրեխերությունը Մեծ Հոկտեմբերյան հեղափոխության

---

[1] ВКП(б) в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, մ. II, եջ 332, Կուսհրատ, 1936 թ. (ռուս.):

[2] Стенографический отчет XV съезда ВКП(б), եջ 74, Կուսհրատ, 1935 թ. (ռուս.):

նախորյակին 1917 թվին. բավական է հիշատակել նրանց դատավարությունը կառավարությունից և բուրժուազիայի բանակն անցնելը բանվոր դասակարգի կողմից իշխանությունը գրավելուց հետո առաջին ամիսներում—միացան Տրոցկու հետ և միասին պայքար սկսեցին հաղթանակող սոցիալիզմի դեմ։

Հակահեղափոխական տրոցկիստներ–զինովյևականների պայքարն ընդդեմ կուսակցության, ընդդեմ Խորհրդային պետության — շատ և շատ տարիներ տևող ստորության, յերկերեսանիության և դավաճանության մի նողկալի օրինակ է։ Կամենևի ու Զինովյևի համար վոչինչ չարժեր այսոր հանդես գալ բացահայտ ռեստավրատորական, կապիտալիստական լոզունգներով և հայտարարել, վոր սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ–ում անհնարին է, իսկ վաղը հանդես գալ ղղջալով, վոր յերեկ նրանք իրավացի չեն յեղել և այսոր ընդունում են, վոր սոցիալիզմը ԽՍՀՄ–ում կառուցել կարելի յե։ Վորոշ ժամանակ անց նրանք նորից հանդես են գալիս ռեստավրատորական, կապիտալիստական պլատֆորմով, բայց հանցանքի մեջ բռնվելով, նորից և նորից են սկսում ղղջալ, լաց լինել, իրենց կուրծքը ծեծել և յերդվել, վոր հավատարիմ են բանվոր դասակարգի գործին։

Տրոցկին, Զինովյևը և Կամենևը կազմակերպում են Ս. Մ. Կիրովի սպանությունը։ Ցեվ նույն որը Զինովյևն ու Կամենևը հրապարակորեն հանդես են գալիս և մարդասպանների գլխին նզովք են կարդում, վորձելով այդպիսով քողարկվել, վորպեսզի հնարավորություն ունենան հետագայում ևս շարունակել իրենց ստոր աշխատանքը։

Տրոցկին, Զինովյևը, Կամենևը և ամբողջ նրանց անարգ բանդան ամբողջ աշխարհի առաջ հանդես յեկան իբրև ֆաշիզմի հավատարիմ գործակալներ, բուրժուազիայի լակեյներ։ Մահացու առելությունը դեպի սոցիալիզմը, կապիտալիզմի առաջ ստրկորեն խոնարհվելը, ծախսածությունը, ստությունը, խարեությունը, դավաճանությունը, գեր–ճիզվիտական կեղծիքը, խոստմնազանցությունը, անձնական անպտղությունը, կեղծ առաքինությունը, քաղաքականապես և բարոյապես ընկած, աշխատավորների կողմից արհամարհված և նրանց ատելի մարդկանց բոլոր հատկանիշները հատուկ են այդ անարգ տեռորիստներին։

Այժմ, յերբ դատավարության հետևանքով բաղմակողմանիորեն և ապառիչ կերպով դրսևորվեցին հակահեղափոխական, տրոցկիստական–զինովյևյան բանդայի կողմից սոցիալիզմի դեմ մղած պայքարի պրիոմներն ու մեթոդները, բացվեց մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու մի փորձ ևս։

Հանցանքի մեջ բռնված Կամենևն ու Զինովյևը փորձում էին դատավարության ժամանակ ամեն կերպ դուրս պրծնել, ձգտում էին

թաղցնել սոցիալիզմի յերկրի դեմ մղած խրենց պայքարի գլխավոր նպատակը։ Կամենեւը ու Զինովյեւը քաղաքական մանուկներ ձեւանալով, հայտարարում եյին, թե իբր նրանք վոչ մի պլատֆորմ չեն ունեցել, բացի հանուն իշխանության մղած անձնական պայքարից։

Բանվոր դասակարգն ու աշխատավորները շատ լավ գիտեն, վոր խորհրդային իշխանության դեմ պայքարող ամեն մի հակահեղափոխական կուսակցության և խմբակի թիկունքում միշտ կանգնած են կապիտալիստական ռեակցիայի մութ ուժերը։ Տրոցկիստական-զինովյեվյան բանդայի թիկունքում, վորը փորձում եր տեռորի միջոցով իշխանությունը գրավել, կանգնած եյին կապիտալիստական դասակարգերը, ֆաշիստները։

Մի թե այդ մասին չի՞ խոսում Գեստապոյի գործակալ Տրոցկու այն գրությունը, թե «պատերազմի դեպքում պետք է պարտվողական քաղաքականություն վարել և իրարանցումից ոգտվել»։ Մի թե այդ մասին չի՞ վկայում Զինովյեվի սաոը հայտարարությունն իր բանդային, վոր [illegible] իշխանությունը տապալելու համար չպետք է կանգ առնել Հիտլեր Հիտլերը ճարպոնացիներին հանձնելու առաջ։

Խորհրդային Միության բանվոր դասակարգն ու կոլտնտեսականները սոցիալիզմի բոլոր թշնամիների դեմ մղած դաժան պայքարում սոցիալիստական հասարակություն են ստեղծել։ Շահագործող դասակարգերը վերացված են։ Ստեղծված է հզոր արդյունաբերություն։ Գյուղում վերջնականապես հաղթանակել են կոլտնտեսական կարգերը։ Նվաճվել է Խորհրդային Միության լիակատար տնտեսական անկախությունը կապիտալիստական աշխարհից։ Վերացված են գործազրկությունը քաղաքում, աղքատությունը և գյուղացիության պառակտիությունը։ Կապիտալիստական տարկությունը, կարիքը, սովը, զրկանքները մեր յերկրում հեռավոր, անդարձ անցյալի գիրկն են ընկել։

Նոր ստալինյան Սահմանադրության մեջ վառ կերպով արտահայտված մեր համաշխարհային պատմական հաղթանակները ամբողջ աշխարհին ցույց տվին, վոր սոցիալիզմը ԽՍՀՄ-ում ունակ իրականություն, կենդանի կյանք և դարձել։ Իսկական դեմոկրատիա, իսկական քաղաքական իրավունքներ ամբողջ ժողովրդի համար, ուղղակի, հավասար և դաղտնի քվեարկություն, անձի ազատություն և անձեռնմխելիություն — այս բոլորը նվաճվել է՝ սոցիալիզմի բոլոր թշնամիների դեմ մղած դաժան պայքարում, կապիտալիզմի տրոցկիստական-զինովյեվյան և աջ-ոպորտունիստական ռեստավրատորների դեմ մղած պայքարում։

Մեծ ժողովրդական զայրույթը թափվեց տրոցկիստական–զինովյեվյան հակահեղափոխական բանդային պատկանող անարդ մարդասպանների, լրտեսների, պրովոկատորների և ֆաշիստական դործակալների գլխին: Բանվորներն ու կոլտնտեսականները նրանց զզվելի դործերի մեջ խկուն տեսան կապիտալիստական ստրկության պաշտպանների ու այդ ստրկության համար մարտնչողների: Մեր յերկրի ամբողջ ժողովուրդը միաձայն պահանջեց վոչնչացնել այդ հրեշին, կապիտալիզմի այդ շղթայած շներին:

Մեր ժողովրդի սերը դեպի մեծ Ստալինը, դեպի մեծ Լենինյան կուսակցությունն այն պատճառով է այդպես մեծ, վոր կուսակցության դեկավարությամբ, Ստալինի առաջնորդությամբ մեր յերկրում առհավետ վոչնչացված է կապիտալիստական ստրկությունը և ստեղծված է սոցիալիստական հասարակություն, վորն ապահովել է ամբողջ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական կյանքի հզոր ծաղկումը:

Վորքան էլ վոր ֆաշիստական ու բուրժուական մամուլն ու ռեակցիոն առաջնորդները II Ինտերնացիոնալի բանակից փորձեն վահանի վրա բարձրացնել ֆաշիստական ջարդարարներին, ամբողջ աշխարհի բանվորները դիտեն, վոր տեռորիստների—Գեստապոյի դործակալների այդ բանդան պայքարել է կապիտալիզմի վերականգնման համար, ամբողջ աշխարհի հեղափոխական պրոլետարների հույս ու ապավեն Խորհրդային Միության պարտության համար:

Լենին–Ստալինի մեծ կուսակցության դեկավարությամբ բանվոր դասակարգն ու կոլտնտեսական դյուղացիությունը, ունենալով անհաղթելի Կարմիր բանակ, յերկրի յերեսից կավլեն, կտրեն այն բոլորին, ով կփորձի խախտել մեր մեծ հայրենիքի հզորությունը:

«Партийное строительство» № 18, 1936 թ. սեպտեմբեր:

Ա. ՎԱՍՆԵՑՈՎ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՌԵՍՏԱՎՐԱՏՈՐՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

Տրոցկիստական–զինովյևյան տեռորիստների դատավարությունն առաջացրեց ամբողջ աշխարհի բուրժուական մամուլի կատաղի վոռնոցը։ Բուրժուական լրագրերը մրցում են իրար հետ հանցանքի մեջ բռնված հակահեղափոխական մարդասպաններին համակրանք արտահայտելու մեջ։ Այս տեսակետից առանձնապես աչքի է ընկնում գերմանական ֆաշիզմի լեյբ–որգան «Ֆոլկիշեր Բեոբախտեր»–ը և նրա դամբաշները։ Ցեվ այդ հասկանալի է։ Տրոցկիստական–զինովյևյան բանդայի դատավարությունը և նրանց դատապարտումը գերմանական ֆաշիզմին զրկեցին ամենաարժեքավոր գործակալներից ու համախոհներից, վորոնք համառ կերպով պայքարում էին սոցիալիզմի դեմ, հանուն կապիտալիզմի վերականգնման ԽՍՀՄ–ում։

Բուրժուազիայի՝ II Ինտերնացիոնալի բանակին պատկանող լակեյները ներկայվեցին ընդհանուր խմբին, հանդես գալով անարգ տրոցկիստական–զինովյևյան մարդասպանների փաստաբանների ատոր դերում։ Կարծես բավական աղդանշանի, կատաղի հաջոց բարձրացրին թե՛ ֆրանսական մենշևիկները «Պոպյուլեր» լրագրում, թե՛ բելգիական մենշևիկները «Պյոպլ» լրագրում, թե՛ նորվեգիական, թե՛ ավստրիական և թե՛ այլ մենշևիկները։ Այստեղ զարմանալի, անսպասելի վոչինչ չկա։ Այս պարոնները խղճի մառք ծառայում են իրենց յերկրի բուրժուազիային։ Ի՞նչպես ուրեմն նրանք պաշտպան չկանգնեն մի խումբ հակահեղափոխական դավադիրների, վորոնց գլուխի վրա գրված է ԽՍՀՄ–ի վերադարձը դեպի կապիտալիզմ։

Պրոլետարական դատարանի առաջ կանգնած տրոցկիստական–զինովյևյան սրիկաները փորձեցին թաղցնել իրենց պայքարի իսկական նպատակը։ Նրանք այն վերսխան տարածեցին, թե իրենք վոչ մի ծրագիր չունեն։ Իսկ իրոք նրանք ծրագիր ունեցել են և այդ ծրագիրը սոցիալիզմի ջախջախումն ու կապիտալիզմի վերականգնումն էր։

Զգվելի մարդասպանների փաստաբաններն իրենց դեմքին և «սոցիալիստական» լրագրերի էջերում մանկական միամիտ զարմանք են արտահայտում: Հնարավո՞ր է արդյոք, վորպեսզի Տրոցկին և նրա արբանյակներն իրենց նպատակ դնեն ԽՍՀՄ-ի վերադարձը կապիտալիզմի դիրքը:

Հակահեղափոխական տեռորիստների պաշտպանները իրենց գլխովին մատնում են: Պարզամիտ հիմարներ ձևանալով, նրանք ուզղակի ի չարն են գործ դնում բոլոր սրիկաների այն հավատո հանդանակը, վորի համաձայն «Ադամի ժամանակվանից ի վեր մարդկության մեծամասնությունը հիմարներից է բաղկացած»:

Ով քիչ թե շատ ծանոթ է սոցիալիզմի համար մղվող պայքարի պատմությանը, շատ լավ գիտե, վոր բանվոր դասակարգի շարքերը խցկվող բուրժուազիայի սպասավորները միշտ ապրում են կեղծ անձնագրով: «Սիրելի Եղբի, դու հիմար ես,—այդպես անում են, բայց այդ մասին չեն խոսում»,—դեռ 40 տարի սրանից առաջ սովորեցնում էր չափից դուրս անկեղծություն ցուցաբերող ռեվիզիոնիզմի նախահայր Եդուարդ Բերնշտայնին ավելի ճարպիկ ոպորտունիստ Իգնաց Աուերը: Իսկ յերբ գերմանական սոցիալ-վոստիկաններ Ցերգիբելն ու Զեվերինգը 1929 թվի մայիսի 1-ին համազարկի տվին Բեռլինի անզեն պրոլետարներին, ապա նրանք դրանից առաջ բնավ չազդարարեցին, թե իրենք վորոշել են բանվորական արյուն թափել, վորպեսզի Հիտլերի համար ճանապարհ հարթեն դեպի իշխանություն: Ընդհակառակը, նրանց պոռնկացած մամուլը ժլատություն չէր ցուցաբերում անամոթաբար և խաբեբայորեն հավատիացնելու, վոր այդ արվում է հանուն դեմոկրատիայի ու սոցիալիզմի:

Սակայն կեղծավորության, ստորության ու յերկերեսանիության տեսակետից Տրոցկին, Զինովյեվը և Կամենևն իրենց բանդայով բոլոր պատմական ռեկորդներն իրենց յետևը թողեցին:

Ցեվ այդ պատահական չէ:

Սոցիալիզմը մեր յերկրում հաղթանակել է: Աշխատավորները տեսական վորձով համոզվեցին, վոր լենին-ստալինյան կուսակցության քաղաքականությունը ճիշտ է: Զարմանալի՞ յե արդյոք, վոր այդ պայմաններում հասարակության տականքի չնչին մի խմբակ վորքան կարելի յե խորն է թաղցնում իր ավազակային մտադրությունները, վորքան կարելի յե յեռանդուն կերպով և ներկում իր Ֆասադը: Կարելի՞ յե արդյոք ապասել, թե այդ պայմաններում կապիտալիստական ռեստավրացիայի գործակալները վորևե չափով բացահայտորեն կխոսեն իրենց նպատակների մասին:

Մոսկվայում, դատարանի դռնքաց նիստում, արտասահմանյան մամուլի մի քանի տասնյակ թղթակիցների ներկայությամբ ծավալվեց

ժողովրդի վոխերիմ թշնամիներ Տրոցկու, Զինովյեվի, Կամենևի և նրանց արբանյակների չարագործությունների ու վոճիրների հրեշավոր շղթան: Դատավարության ժամանակ բացվեց մարդկային անկման ամենացածր աստիճանի զզվելի պատկերը: Խորհրդային ժողովուրդն իսկույն տեսավ, թե հանուն ինչի էին գործում տրոցկիստական-զինովյեվյան բանդիտները, թե հանուն ինչի նրանք սպանեցին Ս. Մ. Կիրովին, հանուն ինչի ոբեր-բանդիտ Տրոցկին անհամբեր դրդում ու շտապեցնում եր իր տեռորիստներին:

Տրոցկիստական-զինովյեվյան շները դատապարտում հայտարարում էին, թե նրանց առաջնորդել և բացառապես իշխանության ծարավը: Բայց նրանց չհաջողվեց դիմանալ միայն այս մեկ դիրքում: Ամեն վոք հասկանում է, վոր պետական իշխանությունը ծառայում է իրրև վորոշ դասակարգային շահեր իրագործելու գործիք: Տրոցկիստական-զինովյեվյան տեռորիստական կենտրոնի ստոր վոճրագործներին, չնայած նրանց բոլոր խորամանկություններին, չհաջողվեց թաղցնել, թեում շահերից յելնելով էին նրանք պայքարում իշխանության համար, ում շահերից յելնելով էին նրանք չքսված հանցագործությունների դիմում:

«Մենք հստակ կերպով պատկերացնում ենք, վոր պայքար ենք մղում կուսակցության ու կառավարության դեկավարության դեմ, վորոնք յերկիրը տանում են դեպի սոցիալիզմ», ստիպված եր խոստովանել Կամենևը դատավարության ժամանակ անժխտելի փաստերի դիմաց: Իսկ Ռեյնգոլդը նախնական քննության ժամանակ ասում եր՝

«...Ցեսարդեն վերը ցուցմունք տվի, վոր տրոցկիստական-զինովյեվյան միացյալ բլոկը վոչ մի նոր քաղաքական ծրագիր չուներ: Ցելնում էինք հին, շատ հին պլատֆորմից»:

Թե վորն և այդ «հին, շատ հին պլատֆորմը», շատ լավ հայտնի է մեր յերկրի աշխատավորներին, վորոնք յերկարատև պայքար են մղել տրոցկիստների և զինովյեվականների դեմ: Տրոցկիզմը վաղուց արդեն դարձել և հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատը: Մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության մասին ունեցած իր թեզիսով, սոցիալիստական շինարարության վերաբերյալ իր զզվելի զրպարտությամբ այդ տրոցկիզմն ամենաթունավոր զենքն և հայթայթում իմպերիալիստական բուրժուազիային ԽՍՀՄ-ի դեմ մղած նրա պայքարում:

Ցերբ մեր Կուսակցությունը հզոր թափ եր վերցնում յերկրի սոցիալիստական վերակառուցման գործում, տրոցկիստներ-զինովյեվականները հանդես են գալիս իրրև ստալինյան ինդուստրացման և կոլեկտիվացման հանրածանոթ թշնամիներ:

Ցրել կոլտնտեսությունները, վերացնել խորհտնտեսություն-

բը, վերադարձնել կուլակներին, սոցիալիստական ինդուստրիայի հրականները տալ մասնավոր (ամենից առաջ՝ ոտարերկրյա) կապիտալի ձեռքը—ահա այն ծրագիրը, որը քարոզում և Տրոցկին իր «Բյուլետենում»՝ ամբողջ ճակատով կատարվող սոցիալիստական հարձակման ամենաֆեոդալական եռապում: Այս ծրագիրը, որն իրենից ներկայացնում և ԽՍՀՄ-ը դեպի բուրժուական ռելսերը վերադարձնելու ամենակտի քարոզը, մինչև այժմ կազմում և հանցագործ տրոցկիստական-զինովյեվյան վիժվածքների կողմից սոցիալիզմի յերկրի դեմ մղվող պայքարի հիմքը;

Բայց ո՞ւմ կարող եր հրապուրել այսպիսի ծրագիրը: Մեր յերկրում ո՞վ և յերազում ստրկական անցյալի մասին: Ո՞վ և ծարավի, որ վերադառնա բռնության և ճնշման այն հասարակակարգը, որը խեղդում եր այն ամենն, ինչ կենդանի յե և աղնիվ: Ո՞վ և շահագրգիռված, որպեսզի վերադառնան շահագործողները, կյանքի առաջվա տոր և ագահ տերերը:

Կապիտալիզմի ռեստավրատորների գործակալները չեյին կարող չտեսնել իրենց գործի անհուսալիությունը: Գնալ աշխատավորների մոտ՝ հրաժարումն քարոզելով սոցիալիստական հեղափոխության այն մեծագույն նվաճումներից, որոնք նոր յերջանիկ կյանքի ճանապարհն են բաց արել, կնշանակեր իրեն դլխովին մատնել: Առաջ են քաշվում պայքարի այլ ձևեր, որոնք լույսից վախենում են, հրապարակայնություն չեն հանդուրժում՝ ստրճանակը և սերտ կապը ֆաշիստական պահնորդական բաժնի հետ, արտաքին ուժերի հետ, որոնք նոր ավազակային արշավանքներ են նախապատրաստում ԽՍՀՄ-ի դեմ:

Այս մասին բավականաչափ հստակորեն իր ցուցմունքների մեջ ասում եր դատավարության ժամանակ ֆաշիստական գործակալ Ռյուերդը:

«Բեռլինի տրոցկիստների տեսակետով խորհրդային կարգերի տապալումը, պայքարն ընդդեմ խորհրդային կառավարության մտածելի յեն յերկու ուղիով՝ կամ ինտերվենցիայի միջոցով, կամ առանձին տեռորիստական ակտերի միջոցով»:

Այս անարդ մարդուկների մոտ, որոնք կամենում եյին մեր յերկիրը հետ դարձնել դեպի նզովյալ կապիտալիստական անցյալը, հակահեղափոխական տեռորը և հակահեղափոխական պարտվողականությունը կազմում են միևնույն մեդալի յերկու՝ կողմը, որի վրա յերևան են գալիս Տրոցկու, Զինովյեվի, Կամենևի ղղվելի հանցագործ պրոֆիլները:

Տրոցկիստական-զինովյեվյան տեռորիստներն իրենց ստրճանակն ուղղում եյին լենին-ստալինյան կուսակցության և խորհրդային կառավարության ղեկավարների դեմ, որպեսզի ճանապարհ հարթեն

բուրժուական ռեստավրացիայի համար։ «Մինչև վոր Ստալինը բռնի կերպով չհեռացվի, կուսակցության քաղաքականությունը փոխելու վոչ մի հնարավորություն չկա...»—բաղմիցս կրկնել է սրիկա Տրոցկին, ինչպես այդ մասին վկայեց դատավարության ժամանակ նրա գործակալ Բերման-Յուրինը։

Տրոցկիստական-զինովյեվյան սրիկայախմբի պայքարն ընդդեմ ընկեր Ստալինի, Մոլոտովի, Կագանովիչի, Վորոշիլովի, Որջոնիկիձեյի, Կալինինի, Ժդանովի, Կոսիորի, Պոստիշևի՝ պայքար է սոցիալիզմի դեմ, խորհրդային իշխանության դեմ, մեծ խորհրդային ժողովրդի դեմ. դա պայքար է ընդդեմ ինդուստրացման և կոլեկտիվացման, վորոնք վերափոխել են աղքատ և հետամնաց յերկիրը և դարձրել նրան հզոր, առաջավոր պետություն. դա պայքար է ընդդեմ այն աշխատավորների ամենակենսական շահերի, վորոնց սպասելիքներն ու ձգտումներն արտահայտում են մեծ Ստալինը և նրա ամենամոտ զինակիցները, վորոնց վրա իրենց հանցագործ ձեռքն էին բարձրացնում սուտ մարդասպանները։

Տրոցկիստական-ֆաշիստական տեռորիստներն սպանեցին ընկեր Կիրովին, վորի ջինջ պատկերը դարձել կապրի աշխատավոր մարդկության գիտակցության մեջ։ Նրանք սպանեցին սոցիալիզմի համար պայքարող բյուրեղանման մաքուր մի մարտիկի, վորի կյանքն առանց մնացորդի նվիրված էր ամբողջ աշխարհի շահագործվողների ազատագրման գործին։ Նրանք սպանեցին մի մարդու, վորը բացառիկ պայծառությամբ իր մեջ մարմնացնում էր բոլշևիկի լավագույն գծերը, մի մարդու, վորը նոր կյանք էր կառուցում և սիրում էր այդ կյանքը, ժողովրդական մի տրիբունի, վորը վայելում էր մասսաների անսահման սերը։

Տրոցկիստական-ֆաշիստական տեռորիստներն իրենց գենքը ուղղում էին ընդդեմ ընկեր Ստալինի, վորի անունը այն սոցիալիզմի դրոշը, սիմբոլն է, վորը պատմության մեջ առաջին անգամ հաղթանակել է, կենսագործվել է մեր մեծ հայրենիքի անծայրածիր տարածություններում։ Հանցանքի մեջ բռնված բանդիտները չկարողացան ծածկել իրենց դիվային պլանը։ Նրանք պատմում էին, վոր ընկեր Ստալինի սպանությունը նշվում էր իբրև նրանց դիվային ծրագրի անկյունաքարը։

Նրանք ատում էին սոցիալիզմի յերկրի և ամբողջ աշխատավոր մարդկության առաջնորդին հենց նրա համար, վոր մասսաները նրան սիրում են։ Նրանց վայրենի կատաղությունն աճում էր իրենց սեփական անզորության ու վոչնչության գիտակցությանը համաչափ։ Մեջտեղից վերացնել ընկեր Ստալինին—պահանջում էր բանդիտ Տրոցկին,

վերջնական ճանապարհ բանա կապիտալիզմի restauration համար մեր երկրում։

Անցնելով անհատական տեռորի հանցագործ տակտիկային, տրոցկիստներ–զինովյեվականներն ուղղակի դաշինք են կնքում Ֆաշիզմի հետ, լայն կերպով ոգտվելով Գեստապոյի «սիրալիր» ծառայություններով և նրա լրտեսներով։ Տրոցկիստ–զինովյեվականների դաշինքը Գեստապոյի հետ իր տրամաբանությունն ունի։ Զուր չէ, որ Ֆաշիստական Գեստապոյի գործակալները տրոցկիստական–զինովյեվյան վիժվածքներին անձնագիր, զենք էին մատակարարում, նրանց ամեն տեսակ ծառայություններ էին մատուցում։ Ֆաշիստական պահնորդական բաժինը պաշտպանում էր տրոցկիստական–զինովյեվյան մարդասպաններին, այն պարզ պատճառով, որ նրանք ձգտում էին վերականգնել կապիտալիզմը մեր երկրում, հանդես էին գալիս իբրև ԽՍՀՄ–ը իմպերիալիզմի ավազակներին կողոպուտի և ավարի տալու կողմնակից։

Տրոցկիստական–զինովյեվյան բանդան պարտվողականություն էր քարոզում մեր հայրենիքի նկատմամբ։ ԽՍՀՄ–ի պարտությունը Ֆաշիզմի հետ ունեցած դոտեմարտում—ահա թե ինչի վրա էին հույս դնում Ֆաշիստական Գեստապոյի այդ դաշնակիցները՝ դարձյալ կապիտալիզմը մեր երկրում վերականգնելու միևնույն նպատակով։

«Պատերազմի դեպքում պետք է պարտվողական քաղաքականություն վարել և ոգտվել իրարանցումից»—գրում էր սրիկա Տրոցկին իր հավատարիմ շուն Դրեյցերին։

Իր ավազակապետի հետ հանդիպած տրոցկիստական բանդիտ Ծրից Դավիդը նույնպես հաստատեց, որ Տրոցկին իբրև հիմնական խնդիր պատերազմի դեպքում առաջադրում էր այն բոլոր հանցագործ տարրերի կազմակերպումն ու միացումը, որոնք պատրաստ են վտանգի դեպքում դանակ խրել սոցիալիզմի երկրի թիկունքը։

Իսկ Զինովյեվի խարդախ պլանները, այն Զինովյեվի, որն իր համախոհներին հայտարարում էր, թե պատերազմի դեպքում պետք կլինի հեռավոր Արևելքը հանձնել ճապոնական իմպերիալիզմին, միայն թե տապալվի լենին–ստալինյան կուսակցության ղեկավարությունը և խորհրդային կառավարությունը։

Հակահեղափոխական պարտվողականությունը պատահական դիպված չէ, այլ հիմնական քաղաքական գիծ կատարած տրոցկիստական–զինովյեվյան շների, որոնք իրենց արմատական խնդիր էին դրել վերադարձնել կապիտալիզմը։ Կապիտալիզմը վերադարձնել ամեն գնով, թեկուզ դրա համար պետք լիներ քայլել դիակների լեռների վրայով—ահա տրոցկիստական–զինովյեվյան վոհմակի ստոր ծրագիրը։

Այսպիսով իրենց հարվածն ուղղելով ընդդեմ ընկեր Ստալինի, ընդդեմ նրա զինակիցների, ընդդեմ լենին–ստալինյան կուսակցու-

թյան Կենտրոնական կոմիտեի, սերմանելով պարտվողականության և դավաճանության թունավոր սերմերը, տրոցկիստական–ֆաշիստական մարդասպանները ձեռք էին բարձրացնում խորհրդային պետության դոյության վրա, խորհրդային ժողովրդի կյանքի վրա, սոցիալիզմի ճակատագրի վրա մեր յերկրում և ամբողջ աշխարհում:

Կատաղած տրոցկիստական–զինովյեվյան շների գնդակահարությունն ազդանշան դարձավ Խորհրդային Միության հասցեին անլուր սուտ և զրպարտության կամպանիա սկսելու: Ֆաշիստական մամուլն ուրախացավ՝ թարմ առիթ գտնելով բոլշևիզմի դեմ խաչակրաց արշավանքի պրոպագանդ մղելու համար:

Անպատեհի վոչինչ չկա, վոր II Ինտերնացիոնալի պարագլուխները այս դեպքում ևս հանդես են գալիս ռեակցիոն բուրժուազիայի հակախորհրդային կամպանիայի բանակում: Բայց յերբ անարդ տեռորիստների՝ բուրժուական ռեստավրացիայի գործակալների ռեֆորմիստական փաստաբանները փորձում են իրենց կեղտոտ գործը ծածկել կեղծ ու պատիր խոսքերով սոցիալիզմի մասին, ապա շուլերի այդ պրիոմը պետք է մինչև վերջը մերկացվի:

Այս մարդիկ, վորոնց Լենինն անխոնջ կերպով մերկացնում էր իրրև խոսքով սոցիալիստներ, գործով բուրժուազիայի լակեյներ, մինչև այժմ վոչ մի դեպք բաց չեն թողել, յերբ կարելի յեր հանդես գալ ընդդեմ սոցիալիզմի յերկրի կեղծ «համակրական» ֆրազների ծխածածկույթի յետևից: Բայց նրանց կեղծ թղթախաղերով սկսված խաղը թերևս յերբեք այնքան զզվելի և անհուսալի չի յեղել, քան այժմ:

„Правда“, 1936 թ. սեպտեմբերի 12-ին։

Ի. ՎԱՐԵՑԿԻՍ

ԴԱՐՁՅԱԼ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՆԱՐԳ ՌԵՍՏԱՎՐԱՏՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բուրժուական գաղափարախոսները քանիցս «մարդարեացել են», թե սոցիալիզմն իբրև հասարակական կառուցվածքի սիստեմ չի կարող հաղթանակել։ Բուրժուազիայի տրոցկիստական–զինովյեվյան լակեյները, վորոնք ժխտում էին սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը մեկ յերկրում, բուրժուազիային անգնահատելի ծառայություններ մատուցեցին, վորովհետև այդ անարդ խմբակի ամբողջ գաղափարախոսությունն ու պրակտիկան տանում էր դեպի մի նպատակ—դեպի կապիտալիզմի ռեստավրացիան ԽՍՀՄ–ում։ Բայց սոցիալիզմի այս բոլոր թշնամիների հաշիվները սխալ դուրս յեկան։

Սոցիալիզմը մեր յերկրում հաղթեց։ Կապիտալիստական տարրերն արդյունաբերության և առևտրի մեջ վերացվեցին։ Մանր ու մանրադրամի գյուղացիության դյուղը պատմության գիրկն անցավ. գյուղացիները ԽՍՀՄ–ում կազմակերպված են կոլտնտեսությունների հիման վրա. կուլակությունը—այս ամենից ավելի բազմաթիվ կապիտալիստական դասակարգը վերացված է։

«ԽՍՀՄ–ի տնտեսական հիմքն են կազմում տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, վորոնք հաստատվել են տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայի, արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականության վերացման և մարդու կողմից մարդու շահագործումը վոչընչացնելու հետևանքով»։ (Նոր Սահմանադրության նախագիծը)։

Բերենք մի քանի թիվ, վորոնք բնութագրում են աշխատավորների բարեկեցության և ԽՍՀՄ–ի սոցիալիստական եկոնոմիկայի ծաղկումը։ Ժողովրդական յեկամուտը 1930 թվին կազմում էր 35 միլիարդ ռուբլի. 1935 թվին այդ յեկամուտն աճելով արդեն հասել էր 65,7 միլիարդ ռուբլու, իսկ 1936 թվին կհասնի 83,1 միլիարդ ռուբլու։

Սոցիալիստական կարգն անելևակայելի յե առանց ծանր արդյունաբերության, վորը Լենինի արտահայտությամբ սոցիալիզմի հիմնա-

կան բազան է։ Ահա թե ինչպես է զարգացել ու աճել մեր ծանր արդյունաբերությունը։ 1913 թվին Ռուսաստանի խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքը կազմում էր 10,2 միլիարդ ռուբլի, 1923 թվին — 4 միլիարդ ռուբլի, 1930 թվին — 25,8 միլիարդ ռուբլի, 1935 թվին — 61,9 միլիարդ ռուբլի, իսկ 1936 թվին — 77 միլիարդ ռուբլի (ըստ պլանի)։

Սոցիալիստական արդյունաբերությունը տիրապետող դիրք է գրավել։ 1933 թվին սոցիալիստական սեկտորի արտադրությունը կազմում էր 41,940 միլիոն ռուբլի, իսկ կապիտալիստական սեկտորինը՝ միայն 28 միլիոն ռուբլի։ 1935 թվին մասնավոր արդյունաբերության այս ցնցին բաժինն էլ վերջնականապես դուրս մղվեց։

Պակաս վառ չեն դյուղի սոցիալիստական վերափոխման արդյունքները։ Ավելի քան 20 միլիոն մանր ու մանրագույն դյուղացիական տնտեսություններ միավորված են կոլտնտեսություններում։ Նրանց աշխատանքը հիմնված է խոշոր մեքենայական տեխնիկայի վրա։ Ցրանկորային պարկի հզորությունը 1936 թվի վերջին հասնելու է 8,5 միլիոն ձիու ուժի, իսկ կոմբայնների պարկը՝ 85,4 հազար հատի։ ՄՏԿ քանակը 1936 թվի վերջին կհասնի մինչև 4950-ի։ Բոլշևիկները կարողացան վայրկյան կերպով լուծել պրոլետարական հեղափոխության ամենաբարդ, ամենադժվար խնդիրը, այն է՝ դյուղի աշխատավորներին բանվոր դասակարգի հետևից տանել դեպի սոցիալիզմ։

Արմատական փոփոխություններ են տեղի ունեցել բանվորի, գյուղացու և խորհրդային ինտելիգենտի կենցաղում, անհատական ու հասարակական կյանքում։ Աշխատավարձն աճում է, ապրանքների սպառումն ավելանում է, տեղի չի ունենում կուլտուրական պահանջների արագ աճ։ Կատարվում է Խորհրդային Միության աշխատավորների կուլտուրայի և ստեղծագործական ակտիվության ընդհանուր վերելք։

Այն հասարակական կարգը, որն ստեղծվել է կուսակցության գլխավոր գծի հաղթության, լենին-ստալինյան կենտկոմի, ընկեր Ստալինի ճիշտ ղեկավարության շնորհիվ — սոցիալիզմի կարգն է։

Բոլշևիկյան կուսակցության, մեծ Ստալինի գլխավորած նրա կենտրոնական կոմիտեի ղեկավարությամբ սոցիալիզմը մեր երկրում հաղթանակեց։ Բայց պայքարը շարունակվում է. դեռ գոյություն ունեն ջախջախված թշնամի դասակարգերի մնացորդներն երկրի ներսում. ԽՍՀՄ գտնվում է կապիտալիստական շրջափակման մեջ։

Վերջին տարիների բազմաթիվ օրինակներն ամբողջությամբ և լի-

ովին հաստատեցին ընկեր Ստալինի իմաստուն կանխատեսությունն այն մասին, թե հանդստանալ չի կարելի, վոր դեռ քիչ չեն լինի թշնամիների կողմից սոցիալիստական շինարարության ընթացքը կասեցնելու ամեն տեսակ փորձեր։

Սոցիալիզմի թշնամիների առաջավոր ջոկատ հանդիսանում է հակահեղափոխական տրոցկիստական-զինովյեվյան այն բլոկը, վորը մինչև վերջին ժամանակներս գլխավորվում եր ընդհատակյա տեռորիստական կենտրոնի կողմից։ Այդ կենտրոնի պարագլուխների դատավարությունը, Տրոցկու գործակալների ցուցմունքները, Զինովյեվի, Կամենևի և նրանց վիժվածքների ցուցմունքները մի անգամ ևս հաստատեցին, վոր տրոցկիզմը պայքարել է և պայքարում է ԽՍՀՄ-ում կապիտալիզմի վերականգնման, ռեստավրացիայի համար։

Տրոցկիստներ-զինովյեվականները դատարանում տված իրենց ցուցմունքների մեջ հայտարարում էին, թե իբր նրանք վոչ մի ծրագիր չեն ունեցել և չունեն։ Այդ սուտ է, ճիզվիտություն է, այդ իրենց իսկական, քաղաքական դասակարգային նպատակները թաղցնելու նրանց հին, փորձված տակտիկան է։ Իրոք բոլշևիկյան կուսակցության լենին-ստալինյան ծրագրին նրանք ըստ էության միշտ հակադրել են կապիտալիզմի վերականգնման, ռեստավրացիայի ծրագիրը։

Նրանց արդիական ծրագիրն եր կոլտնտեսական կարգերի քայքայումը գյուղում, խորհտնտեսությունների լիկվիդացիան։ Նրանց ծրագիրն է յեղել արտաքին առևտրի մենաշնորհի վոչնչացումը և ռտարելի կապիտալին դիշատիչ ու կիսագաղութային ձևով տնտեսավարելու աղատություն տալը։

Նրանց ծրագիրն է՝ Ֆաշիստների հետ համաձայնության գալը, իմպերիալիզմի հետ դաշինք կնքելը և ինտերվենցիան, պատերազմի ժամանակ ԽՍՀՄ-ի պարտությունը, պատերազմի դեպքում դավաճանության կազմակերպումը։ Դատավարության ժամանակ այդ բանդիտները հարկադրված եյին խոստովանել, վոր Տրոցկին իր դիրեկտիվներում բազմիցս վերադարձել է պարտվողականությանը, այն նպատակով, վորպեսզի իմպերիալիստների, Ֆաշիստների ավիների վրայով իշխանության հասնի։

Այնուհետև նրանց ծրագիրը նշանակում եր Կոմունիստական Ինտերնացիոնալի—պատերազմից հետո միջազգային հեղափոխական պրոլետարիատի նվաճած՝ Լենինի և Ստալինի այդ մեծ ստեղծագործության լիկվիդացիան։

Գործնականում տրոցկիստական-զինովյեվյան բանդիտների ամբողջ ծրագիրը հանգում եր ընկեր Ստալինի դեմ, կուսակցության և կառավարության ղեկավարների դեմ տեռորիստական ակտեր կազմակերպելուն, նախապատրաստելուն։ Նրանց նպատակն է յեղել վոչնչաց-

նել բոլշևիկյան կուսակցության ղեկավարությունը, տապալել խորհրդային կառավարությունը, իշխանությունն իրենց ձեռքը վերցնել ինչ ձևով ուզում է լինի, ինչ հանցագործությունների գնով ուզում է լինի, ոգնություն ստանալով թեկուզ սատանայից, թեկուզ ֆաշիստներից:

Ցերկերեսանիությունը սոցիալիզմի դեմ, հանուն կապիտալիզմի մղած նրանց պայքարի հիմնական մեթոդն է եղել: Նրանք ապրել են խաբեությամբ ու կեղծավորությամբ, նրանք ամեն քայլում դիմակավորվել ու ստել են: Նրանք յերդվել են, թե հավատարիմ են սոցիալիզմի գաղափարներին և միևնույն ժամանակ ատրճանակն ուղղել են սոցիալիզմի առաջնորդների դեմ: Նրանց ստորությունը, նրանց խարդախությունը գերազանցում է այն ամենը, ինչ իմացել է պատմությունն այդ բնագավառում: Նրանք շատ յետ են թողել պրովոկացիայի նույնիսկ այնպիսի վարպետների, ինչպիսին են Ազեֆն ու Մալինովսկին:

Տրոցկիստական–զինովյևյան անարդ բանդան անցյալ կուսակցության ներսում յեղած ոպոզիցիայից մինչև խսկական հակահեղափոխությունն ու ակտիվ գվարդիականությունը տանող ուղին՝ ցեվ պատահական չե, վոր այդ բանդայի պարագլուխներ հանդիսացան Տրոցկին, Զինովյևն ու Կամենևը:

Սոցիալիզմի հաղթանակին չհավատալը — ահա ինչն եր կազմում Լենինի և կուսակցության լենինյան կադրերի դեմ Տրոցկու բաղմիցս կատարած դրոհների հիմքը, ահա ինչն եր կազմում 1917 թվի հոկտեմբերին Զինովյևի ու Կամենևի հրեշավոր դավաճանության հիմքը:

Քաղաքացիական պատերազմի ավարտումը և խաղաղ տնտեսական շինարարության անցումը կուսակցության առաջ հակայական խնդիրներ դրին: Պրոլետարական դիկտատուրան ժառանգություն ստացավ տեխնիկապես հետամնաց, կիսաագրարային, իմպերիալիստական պատերազմից ուժասպառ յեղած, քայքայված մի յերկիր: Ընկեր Ստալինն ասաց.

«Մեր խնդիրն եր՝ այդ յերկիրը միջնադարի և խավարի ռելսերից փոխադրել ժամանակակից ինդուստրիայի և մեքենայացված գյուղատնտեսության ռելսերի վրա... Հարցն այսպես եր դրված. կամ մենք այդ խնդիրը կլուծենք ամենակարճ ժամանակամիջոցում և կամրապնդենք մեր յերկրում սոցիալիզմը, կամ մենք չենք լուծի այն և այն ժամանակ տեխնիկապես թույլ և կուլտուրական տեսակետից խավար մեր յերկիրը կկորցնի իր անկախությունը և կդառնա իմպերիալիստական պետությունների խաղի առարկա»[1]:

---

[1] *Сталин*, Речь в кремлевском дворце на выпуске академиков Красной армии 4 мая 1935 г., стр. 7—8, Партиздат, 1935 г.

Լենինյան ուսմունքը մի յերկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության մասին կուսակցության համար ուղեցույց աստղ եր հանդիսանում այս մեծ պատմական խնդիրը լուծելու ժամանակ:

Իսկ մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության ժխտումը տանում եր և չեր կարող չտանել նրա մունետիկներին դեպի հակահեղափոխության բանակը, դեպի ֆաշիստական խավարամոլների բանակը:

Պատմությունն անժխտելիորեն ցույց տվեց, վոր սոցիալիզմի հաղթանակի համար մեր յերկրում կար և այժմ էլ կա միայն մեկ լենինյան-ստալինյան գլխավոր դիծ: Ուրիշ այդպիսի դիծ չկա և չեր էլ կարող լինել: Ամեն մի այլ դիծ, ինչպիսի ճռճռան ֆրազներով էլ ան թաղնվի, անխուսափելիորեն, իր ամբողջ անողոք տրամաբանությամբ կտանի դեպի կապիտալիզմի restauration, մեր յերկիրը խաղի առարկա կդարձնի իմպերիալիստական պետությունների ձեռքում:

Ամեն անգամ, յերբ մեր յերկիրն այս կամ այն դժվարությունն եր ապրում, Տրոցկին հանդես եր գալիս իր «մարգարեությունների» հեղափոխության «կրախ»-ի, «կործանման» մասին: Այս մանր բուրժուական պանիկյորության նպատակն եր իրականացում առաջացնել, բանվոր դասակարգի շարքերում անվստահություն սերմանել, թուլացնել սոցիալիզմի համար պայքարելու նրա կամքը: Յեվ ամեն անգամ Տրոցկին հարվածվում եր ինչպես Լենինի ժամանակ, այնպես էլ նրա մահվանից հետո: Բայց Տրոցկուն և նրա համախոհներին այդ վոչինչ չսովորեցրեց՝ նրանք քանի գնում, այնքան ավելի հեռու եյին գլորվում, նրանք քանի գնում, այնքան ավելի բարձր եյին աղաղակում բոլշևիկների «վերասերման» մասին, խորհուրդների «վերասերման» մասին, դրանով իսկ մատնելով հենց իրենց վերասերումը, իրենց ուղին դեպի հակահեղափոխությունը, դեպի ռեակցիան:

XIV համագումարում, յերբ կուսակցությունն ամբողջ աշխարհի առաջ պարզեց սոցիալիստական ինդուստրացման դրոշը, գինովյեվականները հանդես յեկան պանիկյորական և կապիտուլյանտական այն կոնցեպցիայով, թե մեր յերկրում վոչ մի սոցիալիզմ չկա և չի էլ կարող լինել: Ձեռնարկությունները, բանկերը, յերկաթուղիները և արտաքին առևտուրը—այս բոլորը հանդիսանում են միայն պետական կապիտալիզմ, պնդում եյին նրանք:

XIV համագումարից հետո կազմակերպված տրոցկիստական-գինովյեվյան բլոկի բոլոր գործնական տնտեսական առաջարկությունները նույնպես տանում եյին դեպի կապիտալիզմի restauration: Տրոցկիզմի բացորոշ մունետիկները, ինչպես Սոկոլնիկովը և Շանինը, այն ժամանակ առաջ քաշեցին մեր յերկրի ագրարիզացիայի և դաուեսիզա-

ցիայի ծրագիրը։ Այլ կերպ ասած՝ նրանց ծրագիրը նշանակում էր—խաչ քաշել մեր սոցիալական տրդյունաբերության զարգացման վրա և դատապարտել սոցիալիստական աշխարհի արագացման՝ շտապը, որն արդյունաբերական ապրանքներ և ստանում արտահանվող գյուղատնտեսական հումքի փոխանակման դիմաց։ Դրանումն էր նրանց ծրագրի ամբողջ «գերիմաստությունը», որը մեր յերկրի համար Չինաստանի վիճակն էր նախապատրաստում։

Հայտնի յե, որ այդ ժամանակաշրջանում Տրոցկին առանձնապես թունդ պաշտպանում էր համաշխարհային շուկայի կոնտրոլի «բարերար ազդեցությունը» խորհրդային տնտեսության վրա։ Կուսակցությունն ընկեր Ստալինի բերանով XIV համագումարում հռչակեց ինդուստրացման և մեր սոցիալիստական հայրենիքի տնտեսական անկախության իրագործման հոյակապ պլանը։ Այդ ժամանակաշրջանում Տրոցկին առաջարկում էր խորհրդային էկոնոմիկան շուռ տալ դեպի համաշխարհային տնտեսության սիստեմի մեջ «ներաձելու» ուղին, պահպանել համաշխարհային տնտեսության մեջ սահմանված աշխատանքի բաժանումը և հետևաբար մեր յերկիրը դարձնել իմպերիալիստական պետությունների խաղի առարկա։ Այնուհետև տրոցկիստներ-զինովյեվականները Խորհուրդների IV համագումարի ժամանակ համագումարի կոմունիստական Ֆրակցիան մատրին մի բանաձև, ուր ասվում էր՝ «Սխալ և մեզ մոտ միջոցների հսկայական ծախսումով արդյունքի նոր արտադրություններ ստեղծելը, որոնց համար բավականաչափ հիմք չկա մեր եկոնոմիկայում»։

Այս առաջարկությունն ընդունելը կնշանակեր այսոր մնալ առանց աերոպլանների, տանկերի և ավտոմոբիլների, առանց տրակտորների ու կոմբայնների, այդ կնշանակեր Խորհրդային Միության զինաթափումը մինչև ատամները զինված իմպերիալիզմի առաջ։

Տրոցկիստաական-զինովյեվյան բլոկն անշեղ և անդուլ պայքարում էր կուսակցության լենին-ստալինյան քաղաքականության դեմ դյուղում։ Նրանք դուրս յեկան միջակի հետ դաշինք կնքելու դեմ, նրանք կողմնակից եյին գյուղի զարգացման կապիտալիստական ուղուն։ Այդ մասին իր ժամանակին բացահայտ կերպով խոսում էր Տրոցկին՝ «Մենք պետք է այնտեղ (գյուղում.—Ի. Վ.) թույլ տանք, որ արտադրողական ուժերը զարգանան—թեկուզ և կապիտալիստական մեթոդների ոգնությամբ...»։

Տրոցկիստներ-զինովյեվականների տնտեսական ծրագիրը տանում էր դեպի բուրժուական restauration։ Դեպի կապիտալիզմի վերա-

կանգնումն էին տանում նաև նրանց պայքարի մեթոդները, տակտիկական պրիոմները։

Լենին-ստալինյան կուսակցությունը յերեք հեղափոխության կրակում կոփել է բոլշևիկյան կուսակցականության անսասանելի հիմունքները, կազրեր և դաստիարակել, վորոնք ընդունակ են տանելու բանվոր դասակարգը և հեղափոխության մեջ յեղած նրա ռեզերվները կոմունիզմի համար անձնուրաց պայքար մղելու համար։ Մեր կուսակցության զորության հիմքը միշտ յեղել է կամքի ու գործողությունների միասնությունը, ամուր ցենտրալիզմն ու կարգապահությունը, ղեկավար որգանների բարձր հեղինակությունը ներկուսակցական դեմոկրատիայի հետ, կուսակցության ամեն մի անդամի առավելագույն նախաձեռնության, ինքնագործունեության և ակտիվության հետ զուգորդելը։

Բոլշևիզմն ամրացել է կազմակերպական ոպորտունիզմի դեմ մղած պայքարում, տրոցկիզմի դեմ մղած պայքարում, վորը փորձում էր կուսակցությունը վերածել ֆրակցիաների ու խմբավորումների մի դումարի, մի փխրուն, ոձև կազմակերպության, վորը ընդունակ չէ հեղափոխական գործողությունների։ Լենինի առաջարկությամբ կուսակցության X համագումարը վորոշում ընդունեց բոլոր ֆրակցիաներն ու խմբավորումները ցրելու մասին և կատեգորիկ կերպով արգելեց այդպիսի ֆրակցիաների ու խմբավորումների կազմումը հետագայում։

Սակայն X համագումարից յերկու տարի հետո, 1923—24 թվականներին տրոցկիստներն իրենց շուրջը համախմբեցին բոլոր ոպոզիցիոն հոսանքների ու խմբավորումների ռեկորներին, վորոնք պայքարել էին Լենինի դեմ խորհրդային իշխանության առաջին տարիներում։ Նրանք կատաղի պայքար սկսեցին կուսակցական ղեկավարության և կուսակցական ապարատի դեմ։ Այս ամբողջ պայքարն ընդդեմ լենինյան կուսակցականության, ընդդեմ պրոլետարական դիկտատուրայի մասին յեղած լենինյան ուսմունքի մի նպատակի յեր յենթարկված—յերկիրը շեղել սոցիալիստական ուղուց։

Տրոցկիստական-զինովյեվյան բլոկը 1926—1927 թվականներին կատաղի դրոհ սկսեց բոլշևիզմի կազմակերպական սկզբունքների դեմ, փորձելով պայթեցնել կուսակցության միասնությունը։

X համագումարի՝ կուսակցության միասնության մասին բանաձևում, վոր գրել էր Լենինը, ասված է՝

«... Թշնամիները, համոզվելով, վոր հակահեղափոխությունը բացահայտ ապիտակ գվարդիական դրոշի տակ անհուսալի է, այժմ ամբողջ իրենց ուժերը լարում են, վորպեսզի ոգտագործելով Ռկկ ներսում յեղած հակասությունները, հակահեղափոխությունն այս կամ այն կերպ առաջ մղեն, իշխանությունը հանձնելով այն քաղա-

քական խմբակցություններին, վորոնք արտաքուստ ամենից ավելի մոտիկ են խորհրդային իշխանությունը ճանաչելուն»[1]:

Այնուհետև այդ բանաձևի մեջ մատնանշվում և նախորդ հեղափոխությունների վորձը, «... յերբ հակահեղափոխությունն աջակցում ևր ծայրահեղ հեղափոխական կուսակցություններին ամենից ավելի մոտիկ մանր բուրժուական խմբակցություններին, վորպեսզի խախտի և տապալի հեղափոխական դիկտատուրան, այդպիսով ճանապարհ հարթելով հակահեղափոխության, կապիտալիստների ու կալվածատերերի հետադա լիակատար հաղթանակի համար»[2]:

Պատմությունն ամբողջությամբ արդարացրեց Լենինի կանխատեսությունը, նրա գնահատականը: Հակահեղափոխության ամբողջ վոհմակը վողջունեց տրոցկիստական-զինովյեվյան բլոկի պայքարն ընդդեմ Լենին-ստալինյան կուսակցության: Այդ բլոկը դարձավ ձգողական կենտրոն հակախորհրդային բոլոր տարրերի ու հոսանքների համար: Զինված ինտերվենցիայի բացահայտ կողմնակից, աջ մենշևիկ Իվանովիչը գրում ևր՝ «Շնորհակալ լինենք ոպոզիցիայից... վոր նա ՌԿԿ-ին բարոյական և կազմակերպական հարված հասցրեց: Շնորհակալ լինենք այդ ոպոզիցիայից, վոր նա հեշտացնում և այն բոլորի գործը, վորոնք խորհրդային իշխանության տապալումը համարում են իրենց խնդիրը...»:

Այդպիսով տրոցկիստական-զինովյեվյան բլոկը դարձավ կապիտալիստական ռեստավրացիայի դրոշակակիրը մեր յերկրում: Մտնելով ավելի խորը ընդհատակ, դիմակավորվելով յերկերեսանի տակտիկայով, այս չնչին խմբակը միաձուլվեց իսկական հակահեղափոխության հետ:

Մասսաներից կտրվելով, Համկ(բ)կ շարքերից դուրս շպրտվելով, ջախջախված իբրև դավաճաններ, մատնիչներ, բանվոր դասակարգի կողմից նզովված տրոցկիստներ-զինովյեվականները շտապեցին կազմակերպել տեռորիստական հակահեղափոխական կենտրոն: Զինովյեվը սկսած 1932 թվից Մոսկվայի մոտ, Տրոցկին նույն ժամանակվանից սկսած արտասահմանից միշտ շտապեցրել են իրենց կողմնակիցներին, իրենց վիժվածքներին տեռորիստական ակտեր կատարելու բոլշևիկյան կուսակցության և խորհրդային կառավարության ղեկավարների դեմ:

Ցեվ նրանք տենդորեն շտապում են, համաձայնություն կնքելով Ֆաշիստների հետ, միայն թե իրագործեն իրենց ուղղակի նպատակը—հակահեղափոխական բուրժուական հեղաշրջումը:

---

[1] ВКП(б) в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, ч. I, стр. 347, Партиздат, 1936 г.

[2] Նույն տեղում

★

Ինչքան էլ վոր աշխատի սրիկա Տրոցկին գերմանական ֆաշիստների ու II Ինտերնացիոնալի բանակին պատկանող իր բարեկամների ողնությամբ դուրս պրծնել, նրա զզվելի ֆիզիոնոմիան ավելի քան պարզ է աշխատավորներին։ Տրոցկիստներ–զինովյեվականները, վորոնք սպանեցին կոմունիզմի բոցավառ տրիբուն Կիրովին և մահափորձ էին պատրաստում ժողովրդի առաջնորդի և նրա զինակիցների դեմ, հանցանքի մեջ բռնվելով, մեղադրյալների աթոռին նստեցին իբրև պետական հանցագործներ և վոչնչացվեցին իբրև ժողովրդի ատոր դավաճաններ, սոցիալիզմի թշնամիներ։

Այդպես է պայքարի տրամաբանությունը։ Այդպես է տրոցկիզմի վերածումը սոցիալիզմի ամենալկտի թշնամիների դրոհային ջոկատի, վորոնց գլխավորում է դաղանաբարո ֆաշիզմը։

Տրոցկին ինքն իրեն հավատարիմ մնալով, իր անարգ ուղին ավարտեց ֆաշիստների կողմն անցնելով։ Նա գլորվեց մինչև հիտլերականների հետ դաշինք կնքելը, մինչև կապիտալիստական ռեստավրացիայի դրոշակակիրը, մինչև սոցիալիստական պետության և սոցիալիզմը կենսագործող բոլշևիկյան կուսակցության դեմ դավադրողը, տեռորիստը։

Այդ է պատմական ճշմարտությունը։

Աշխատավոր մասսաները զայրույթով ու արհամարհանքով, ատելությամբ ու զզվանքով կարդացին տրոցկիստական–զինովյեվյան շների ատոր խոստովանությունները։ Զախջախել դարշելիներին—ահա ԽՍՀՄ–ի բոլոր աշխատավորների, սոցիալիզմի բոլոր բարեկամների միահամուռ ձայնը։ Ցեվ դատավճիռն ի կատար է ածված։ Պրոլետարական դիկտատուրայի պատժիչ սուրն ինչպես ցնորված բանդիտների գլխին և անխնա կերպով տեսավ նրանց դատաստանը։

★

Տրոցկիստների՝ հեղափոխության թշնամիների դեմ մղվող պայքարը—պայքար է ընդդեմ կապիտալիզմի ռեստավրատորների։ Ցեվ II Ինտերնացիոնալի ներկայացուցիչներ Սիտրինը, դե–Բրուկերը և մյուսները, վորոնք պաշտպանում էին այդ բանդիտներին, իրենք էլ են հանդիսանում ԽՍՀՄ–ում բուրժուական ռեստավրացիա կատարելու, կապիտալիստներին, կալվածատերերին, բանկիրներին, կուլակներին դեպի իշխանություն վերադարձնելու կողմնակիցներ։

Թող իմացած լինեն բանդիտ–տեռորիստների փաստաբանները, վոր այդ տեղի չի ունենա։ Սոցիալիզմի գործը մեր յերկրում վստահելի ձեռքերում է գտնվում։ Միլիոնավոր բանվորներ, կոլտնտեսականներ

ները, ծառայողները ամրացնում, վստահ կերպով կառուցում են անդա-սակարգ սոցիալիստական հասարակության հոյակապ շենքը:

Բոլշևիկյան կուսակցությունը, մեր լենին-ստալինյան դեկտակոմը, մեր առաջնորդ, սիրելի բարեկամ, մեծ հաղթանակների կազմակեր-պիչ, սոցիալիստական պետության նավավար ընկեր Ստալինը յերկիրն ու նրա ժողովուրդներին տանում են դեպի կոմունիզմի նորանոր հաղ-թանակներ:

„Правда", 1936 թ. սեպտեմբերի 24-ին

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՌԵՍՏԱՎՐԱՑԻԱՅԻ ՁՁՎԵԼԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

Պրոլետարական դատարանի դատավճիռը տրոցկիստական–զինովյեվյան տեռորիստների գործի վերաբերյալ ավարտեց նրանց անփառունակ ուղին, դավաճանությունների ու մատնությունների ուղին:

Մեղադրյալների աթոռին եր նստել յերկերեսանի–մարդասպանների, Գեստապոյի գաշնակիցների ու գործակալների մի խմբակ, վորի իսկական նպատակն է յեղել կապիտալիզմի վերականգնումը մեր յերկրում:

Նրանք փորձում եյին թաղցնել այդ նպատակը: Հանցանքի մեջ բռնված տրոցկիստական–զինովյեվյան մարդասպանները հավատացնում եյին, թե իրենք վոչ մի քաղաքական ծրագիր չեն ունեցել և իրենց հանցագործությունները բացատրում եյին միայն «անձնական նշխանության ծարավով»:

Բայց մի՞թե կարող եյին այդ յեփված յերկերեսանիները ու ստախոսները թաղցնել, քողարկել իրենց չարագործությունների իսկական և թագուն իմաստը:

ԽՍՀՄ–ի դատախազ ընկ. Վիշինսկին դատարանի նիստում հարցնում եր մեղադրյալ Կամենևին՝ «Հետևաբար, դուք հստակ կերպով պատկերացնո՞ւմ եք, վոր պայքար եք մղում սոցիալիզմի դեմ»:

Կամենև: Մենք հստակ կերպով պատկերացնում ենք, վոր պայքար ենք մղում կուսակցության և կառավարության ղեկավարության դեմ, վորոնք յերկիրը տանում են դեպի սոցիալիզմ:

Վիշինսկի: Դրանով իսկ դուք սոցիալիզմի դե՞մ եք:

Կամենև: Դուք անում եք պատմաբանի ու մեղադրողի յեղրակացություն:

Մաշված շորի նման պատառ–պատառ յեղան «սոցիալիստական» այն բոլոր ֆրազները, վորոնցով յերբեմն ծածկում եյին իրենց գազրելի մերկությունը տրոցկիստներն ու զինովյեվականները: Ցեվ յերբ նրանց դիմակազերծ արին, ամբողջ ակներևությամբ հանդես յեկավ ժողովրդի այդ թշնամիների իսկական ծրագիրը—կապիտալիզմի վերականգնումը մեր յերկրում: Դրա համար նրանք տեռորիստական ակտերի միջոցով կամենում եյին գլխատել խորհրդային ժողովուրդը, մեծ–

տեղից վերացնել կուսակցության և կառավարության ղեկավարներին։ Դրա համար տրոցկիստներն ու զինովյևականները Ֆաշիստների հետ դաշինք էին կնքել, դրա համար Զինովյևն ու Կամենևը բլոկ էին կազմել Տրոցկու հետ, որն իր կողմնակիցներին ու գործակալներին ուղղակի հրահանգներ էր տվել նախապատրաստելու Խորհրդային Միության ռազմական պարտությունը։

Գերմանական Ֆաշիստները հենց դրա համար էլ իրենց գիրկն ընդունեցին տրոցկիստական–զինովյևյան բանդային, որովհետև նրա մեջ դատան պրովոկատորների, մատնիչների, մարդասպանների պատրաստի կադրեր, խորհրդային ժողովրդի ստրկացման, կապիտալիզմի restauրացիայի իրենց խարդախ մտադրությունների կատարողներ։

II Ինտերնացիոնալի տխրահռչակ լիդերները և սոցիալ–դեմոկրատական մամուլը, որոնք գայլի վոռնոց բարձրացրին տրոցկիստական–զինովյևյան կենտրոնի դատապարտության շուրջը, պարզամիտներ են ձևանում։ Իբր թե ինչպես կարող էին Զինովյևը, Կամենևը և ամբողջ նրանց վոհմակը սոցիալիզմի թշնամիներ, ԽՍՀՄ–ում կապիտալիզմը վերականգնելու կողմնակիցներ դուրս գալ։

Ո՞ւմն են ուզում խաբել դատան մորթի հագած այդ գայլերը։ Չե՞ վոր Տրոցկու, Զինովյևի և Կամենևի ամբողջ անց պատմությունը հիմքը կազմում էր մեր յերկրում սոցիալիզմի դեմ մղած պայքարը։

Ցերբ 1926 թվին նրանք անակզբունք, իրենց կազմով այլազան ու խայտաբղետ ոպոզիցիոն բլոկ կազմեցին, ապա բլոկի մասնակիցներն իրար հետ միացան բուրժուական պլատֆորմի հիման վրա, մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը ժխտելու պլատֆորմի հիման վրա։ Տրոցկիստական–զինովյևյան բլոկը ղեկավարվում էր Տրոցկու՝ պատենտավոր այդ դավաճանի հին մենշևիկյան դոգմայով, որը ժխտում էր մի յերկրում սոցիալիստական հասարակություն կառուցելու հնարավորությունը և պնդում էր, թե սոցիալիստական տնտեսության վերելքը Ռուսաստանում հնարավոր կդառնա Յեվրոպայի կարևորագույն յերկիրներում պրոլետարիատի հաղթանակից հետո միայն։

Ոպոզիցիոն բլոկի այս հիմնական թեզիսը պարտվողական, կապիտուլանտական թեզիս էր։ Ընկեր Ստալինը, բնութագրելով տրոցկիստական–զինովյևյան բլոկի այն դրությունը, որը ժխտում էր հաղթական սոցիալիստական շինարարության հնարավորությունը մեր յերկրում, Համ Կ(բ)Կ XV համագումարում ասում էր՝

«Իսկ ի՞նչ է նշանակում այդ դրությունը։ Այդ նշանակում է կապիտուլանտություն։ Ո՞ւմ հանդեպ։ Ակներև է, որ մեր յերկրի կապիտալիստական տարրերի հանդեպ։ Ե՛լ ում հանդեպ։ Համաշ-

խարհային բուրժուազիայի հանդեպ։ Իսկ ո՞ւր մնաց ձախ Ֆրազները, հեղափոխական շարժումները։ Նրանք հողմացրիվ եղան։ Մի լավ թափ տվեք մեր ոպոզիցիային, դեն շպրտեք հեղափոխական ֆրազեոլոգիան, և դուք կտեսնեք, որ այնտեղ հատակում նրանց մոտ նստած է կապիտուլյանտությունը»[1]։

Այն պայքարում, որ կուսակցությունը մղում էր Ստալինի հանճարեղ ղեկավարությամբ տրոցկիստական–զինովյևյան վոհմակի դեմ, լուծվում էր մեր յերկրի բախտը, այն հարցը, թե պե՞տք է արդյոք նա դառնա սոցիալիստական յերկիր, թե պետք է դլորվի կապիտալիստական ստրկության անդունդը։ Այս պայքարում կուսակցությունը յելնում էր Լենինի այն ցուցումից, թե «սոցիալիզմի հաղթանակը հնարավոր է նախապես մի քանի կամ նույնիսկ մեկ, առանձին վերցրած, կապիտալիստական յերկրում»[2], որ մեզ մոտ կա «այն ամենը, ինչ անհրաժեշտ է լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար»[3]։

Մեկ յերկրում սոցիալիզմի հաղթանակի մասին յեղած լենինյան թեորիայից բնականաբար ըղխում էր հետևյալ յեզրակացությունը՝ քանի որ սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում հնարավոր է և անհրաժեշտ, ապա պետք է վերակառուցել տնտեսությունը սոցիալիստական հիմունքներով, ամրապնդել Խորհրդային Միության տեխնիկա-տնտեսական անկախությունը կապիտալիստական շրջապատից, ամրացնել յերկրի պաշտպանունակությունը։

Իսկ ի՞նչ էր հետևում տրոցկիստական–զինովյևյան պլատֆորմից։ Ո՞ւր էին առաջարկում գնալ տրոցկիստական–զինովյևյան կապիտուլյանտները, որոնք սողում էին բուրժուազիայի առաջ։

Նրանց առաջարկությունները տանում էին դեպի բանվոր դասակարգի պարտությունը և վերջին հաշվով դեպի կապիտալիզմի ռեստավրացիան։

Տրոցկիստներն ու զինովյևականները կռկռում էին այն մասին, թե աշխատավոր գյուղացու շահերը և պրոլետարիատի շահերը թշնամական են, թե գյուղացիությանը սոցիալիստական շինարարության հունի մեջ ներգրավել հնարավոր չէ։ Սրանից յելնելով, տրոցկիստական–զինովյևյան բլոկը կոչ էր անում կուրս վերցնել դեպի գյուղացիության վերածումը արդյունաբերության շահագործման օբյեկտի, մի՛ յուրատեսակ գաղութի։ Այսպիսի քաղաքականությունն անխուսափելիորեն կհասցներ պրոլետարիատի և գյուղացիության դաշին-

---

[1] Стенографический отчет XV съезда ВКП(б), էջ 74, Կուսհրատ, 1935 թ.»
[2] *Ленин*, О лозунге Соединенных Штатов Европы, Соч. т. *XVIII*, стр. 232.
[3] *Ленин*, О кооперации, Соч. т. *XXVII*, стр. 392.

քի խզմանը։ Իսկ վորովհետև բանվոր դասակարգի դաշինքն աշխատավոր գյուղացիության հետ պրոլետարիատի դիկտատուրայի կարևորագույն հիմքն է, ուստի և տրոցկիստական-զինովյեվյան բլոկի առաջարկությունները ուղղակի տանում էին դեպի պրոլետարիատի դիկտատուրայի խախտումը։

Այս դավաճանները և մատնիչները, ժխտելով սոցիալիզմի կառուցման հնարավորությունը, առաջարկում էին հրաժարվել կապիտալիստական աշխարհից ԽՍՀՄ-ը անտեսապես անկախ դարձնելու համար մղվող պայքարից, համարելով այն «վնասակար ուտոպիա»։ «Մեր յերեկվա անկախությունը համաշխարհային շուկայի տատանումներից անհետանում է,—պնդում էր Տրոցկին։—Համաշխարհային շուկային մենք յենթակա յենք, համաշխարհային շուկայից մենք կտրվել չենք կարող»։ Բայց յեթե մենք «յենթակա յենք համաշխարհային շուկային», ապա նշանակում է, թե մեր բոլոր ջանքերը ԽՍՀՄ-ը հզոր, ինդուստրիալ, կապիտալիստական աշխարհից անկախ յերկիր դարձնելու համար անոգուտ են։ Այն ժամանակ, ինչպես Սոկոլնիկովն էր առաջարկում դեռ Համ Կ(բ)Կ XIV համագումարում, մնում է կուրս վերցնել դեպի «մեր յերկրի դառեսիդացիան», այսինքն յելնել այն բանից, վոր մեր յերկիրը դեռ յերկար պետք է մնա ագրարային յերկիր, վորը արտահանում է գյուղատնտեսական պրոդուկտներ։ Այլ կերպ ասած՝ տրոցկիստական-զինովյեվյան բլոկը ձգտում էր ԽՍՀՄ-ը դարձնել կապիտալիստական համաշխարհային տնտեսության կցորդը։ Այդ այն ուղին է, վոր վերջին հաշվով տանում է դեպի ԽՍՀՄ-ի գաղութային տրկացումը կապիտալիստական աշխարհի կողմից։

Այսպիսով այն ուղին, վոր առաջարկում էր տրոցկիստական-զինովյեվյան բլոկի ծրագիրը, դա բանվոր դասակարգի պարտության, գյուղացիության ֆայֆայման, մեր յերկիրն իմպերիալիզմի գաղութ դարձնելու, ԽՍՀՄ-ում կապիտալիստական կարգերը վերականգնելու ուղին է։

Տրոցկիստներն ու զինովյեվականները բոլոր միջոցներով—խաբեությամբ ու դեմագոգիայով, խորհրդային իշխանության «վերաբերման» մասին յեղած զրպարտություններով և գաղտնի պայթեցուցիչ աշխատանքով—փորձում էին կուսակցությունն ու յերկիրը չեղել դեպի այդ ուղին։ Փողարկվելով յերկերեսանի հայտարարություններով, տրոցկիստական-զինովյեվյան բլոկը զզվելի ընդհատակյա ֆրակցիոն աշխատանք էր տանում և իր կուսակցությունը — կապիտալիզմի restauրատորների կուսակցությունն էր կառուցում։ Այս կեղտոտ ուղու վրա տրոցկիստներն ու զինովյեվականները զոդվեցին ապիտակգվարդիականների հետ և նրանց հետ միասին պայթեցման աշխատանք էին տանում խորհրդային իշխանության դեմ։ Ոպոզիցիայի՝ դավա-

ճանների այդ բլոկի ամբողջ պայթեցնող գործունեությունը նշանակում եր վոչ այլ ինչ, քան մի փորձ քայքայելու պրոլետարիատի դիկտատուրայի հիմունքները։

«... Ոպոզիցիայի աշխատանքը մեր կուսակցության յերկաթե կարգապահությունը խախտելու համար, ոպոզիցիայի աշխատանքը մեր կուսակցությունը պառակտելու համար, ըստ գործի եյության, մի աշխատանք ե պրոլետարիատի դիկտատուրան մեր յերկրում խախտելու համար,—ասում եր ընկեր Ստալինը 1927 թվի նոյեմբերին։

Ոպոզիցիայի «պլատֆորմը» մեր կուսակցությունը քայքայելու մի պլատֆորմ ե, բանվոր դասակարգը զինաթափելու պլատֆորմ, հակահեղափոխական ուժերը սանձալուծելու պլատֆորմ, պրոլետարիատի դիկտատուրան խախտելու պլատֆորմ»[1]։

Կուսակցությունը չեր կարող իր շարքերում հանդուրժել կատաղած մանր բուրժուաներին, վորոնք դավեր եյին սարքում պրոլետարիատի դիկտատուրայի հենց հիմունքների դեմ հանուն կապիտալիզմի restավրացիայի։ Հակահեղափոխության ուղին թեւակոխած տրոցկիստներն ու զինովյեվականները դուրս շպրտվեցին կուսակցության շարքերից։

Արտասահման աքսորվելուց և ԽՍՀՄ–ի քաղաքացիության իրավունքներից զրկվելուց անմիջապես հետո Տրոցկին ցույց տվեց ռենեգատի, Խորհրդային Միության բանվոր դասակարգի և ժողովուրդների ամենավոխերիմ թշնամու, հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատի առաջնորդի իր իսկական դեմքը։ Ի՞նչ ծրագիր եր զարգացնում իր դարշահոտ «Բյուլլետենում» այս Հուդան այն մոմենտին, յերբ ԽՍՀՄ–ն անցնում եր ծավալուն սոցիալիստական առաջխաղացման վճռական ետապով։ Մի քանի խոսքով այդ հակահեղափոխական ծրագրի եյությունը կարելի յե արտահայտել հետևյալ ձևով՝ ցրել կոլտնտեսությունները, վերականգնել կուլակներին գյուղում, սոցիալիստական արդյունաբերության խոշորագույն ձեռնարկությունները հանձնել մասնավոր, առաջին հերթին ոտարերկրյա կապիտալի ձեռքը։ Այդ ծրագիրը չքողարկված մի կոչ ե—խեղդել սոցիալիզմը, վերականգնել կապիտալիզմը ԽՍՀՄ–ում, վերականգնել կապիտալիստների ու կուլակների տիրապետությունը, ստրկացնել բանվոր դասակարգն ու գյուղացիությունը։

Բացահայտ կերպով դուրս գալ այս ծրագրով բանվորների ու աշխատավորների առաջ տրոցկիստական–զինովյեվյան խմբակը չեր կա-

---

[1] *Сталин*, Партия и оппозиция. Речь на Московской губпартконференции 23 ноября 1927 г. См. „Правда“ от 24 ноября 1927 г.

ղող։ Ծիծաղելի և անհեթեթ բան կլիներ հուսալ, թե հերոսական խորհրդային ժողովուրդը, հզոր սոցիալիստական ինդուստրիա, խորհտնտեսություններ ու կոլտնտեսություններ կառուցելով, ամրացնելով իր պաշտպանունակությունը, կվերցնի ու հանկարծ կամովին կհրաժարվի իր մեծագույն նվաճումներից։

Սոցիալիզմի հաղթանակը, վորի մեծագույն բարիքները ակնառու կերպով զգացել ե ամբողջ խորհրդային ժողովուրդը, վերջնականապես մեկուսացրեց մասսաների կատաղի թշնամիների այդ խմբակը։ Սոցիալիզմի հաղթանակը, վոր նվաճել են բանվոր դասակարգն ու աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և ընկեր Ստալինի գլխավորությամբ, հաղմացրիվ արեց տրոցկիստների ու զինովյեվականների այն հույսը, թե խորհրդային իշխանությունը դժվարությունների հետևանքով կխորտակվի։

Ատելությունից դրդված, դաղանային կատաղությամբ նրանք ընտրում են ֆաշիստական բանդիտիզմի ուղին—կուսակցության և խորհրդային իշխանության ղեկավարների դեմ տեռոր կազմակերպելու ուղին։ Տրոցկիստական–զինովյեվյան հակահեղափոխական կենտրոնի մասնակիցները դատարանին տված իրենց ցուցմունքների մեջ խոստովանեցին, վոր իրենք տեռորիստական պայքարի ուղին վոտք կոխեցին 1932 թվի վերջին, համապատասխան դիրեկտիվ ստանալով իրենց ղեկավար և ֆաշիստական բանդիտների ու մարդասպանների վոդևորիչ՝ Գեստապոյի դաշնակից Տրոցկուց։

Կուսակցության դեմ մղած իրենց նախորդ յերկարամյա ամբողջ պայքարով նրանք արդեն նախապատրաստված եյին ամենանողկալի և սրիկայական չարագործություններ կատարելու։ Տրոցկիզմը միշտ աչքի յե ընկել լենինիզմի առաջնորդներին և կուսակցության կենտրոնական հիմնարկներին վարկաբեկելու իր ստոր ձգտումով։ Տրոցկիստների ու զինովյեվականների տեռորիստական գործունեությունը հանդիսացավ նրանց այն անորինակ ատելության և հարձակումների ավարտումը, վոր նրանք տարիներ շարունակ կենտրոնացրել եյին ընդդեմ բոլշևիզմի առաջնորդների, վորոնք կենտրոնացնում են իրենց մեջ կուսակցության և բանվոր դասակարգի ամբողջ կամքը։

Դեռ 1927 թվին, ղեկուցելով Մոսկվայի կուսակտիվին ներկուսակցական դրության մասին, ընկ. Մոլոտովը նախազգուշացնում եր.

«Արդի պայմաններում, յերբ ոպոզիցիայի շարքերում գտնվում են մարդիկ, վորոնք կուսակցականությունը թանդ չեն գնահատում և վերին աստիճանի չարացած են կուսակցության վրա, ֆրակցիոն պայքարի սրումը կուսակցության առանձին ղեկավարների դեմ, մասնավորապես ընկեր Ստալինի դեմ, ուղղակի հանցագործ բնույթ ե ընդունում։ Ոպոզիցիան իր միջավայրում վորոշ այնպիսի տար-

ներ և դաստիարակում, որոնք պատրաստ են կուսակցության դեմ պայքարելու ամեն մի միջոցի։ Ուստի պայքարի սրումն անձնական հարձակումների վրա և առանձին անձերի հալածելու վրա կարող է ուղղակի հանցագործ տեռորիստական տրամադրություններ հրահրել կուսակցության լիդերների դեմ»[1]։

Ջախջախված և ջարդ ու փշուր յեղած տրոցկիստները և զինովյեվականներն իրենց մտադրությունները չթողեցին։ Մարդված ստախոսներ լինելով, նրանք խոսքով յերդվում էին, թե հավատարիմ են կուսակցությանը, կեղծավորաբար խոստանում էին քավել իրենց մեղքերը նրա նկատմամբ։ Հրեշավոր յերկերեսանիությունը նրանք դարձրել են իրենց և կուսակցության փոխհարաբերությունների գլխավոր մեթոդը, իրենց պայթեցման աշխատանքը քողարկելու գլխավոր միջոցը։

Տրոցկիստներն ու զինովյեվականները վաղուց արդեն դարձել են բանդիտներ, որոնք գաղտնային ատելություն են տածում դեպի այն մարդիկ, որոնք մեր յերկիրը տարել և տանում են հաղթանակների ուղիով։ Տեռորիստական ակտեր պատրաստելով մեծ Ստալինի և նրա զինակիցների դեմ, նրանք մահափորձ էին պատրաստում սոցիալիզմի դեմ, որովհետև մեր առաջնորդների սիրտն ու ուղեղը—այդ սոցիալիստական հասարակության սիրտն ու ուղեղն են։

Հակահեղափոխական վիժվածքների շայկան ատում էր մեր առաջնորդներին հենց այն պատճառով, որ ատում էր սոցիալիստական ինդուստրացումը, մեր գործարանները, խորհտնտեսությունները ու կոլտնտեսությունները, մեր դպրոցները, կարմիր բանակի հզորությունն ու ուժը։ Նրանք սպանություն նյութելով Ստալինի, Մոլոտովի, Կագանովիչի, Վորոշիլովի, Որջոնիկիձեյի, Կալինինի, Ժդանովի, Կոսիորի, Պոստիշևի դեմ, ձեռք էին բարձրացնում սոցիալիզմի առաջնորդների դեմ, որոնք այլ կյանք չունեն, քան հանուն մեր մեծ գործի, հանուն ժողովրդի ընդհանուր բարեկեցության մղվող պայքարի համար յեղած կյանքը։

Տրոցկիստական–զինովյեվյան մարդասպանները, իրենց ատրճանակի փողն ուղղելով Ստալինի դեմ, վորը մարմնացնում է այն բոլորը, ինչ լավագույնն է ու ամենագնիվը մարդկության մեջ, նշան էին բռնում յերկրագնդի բոլոր աշխատավորների ու ճնշվածների առաջնորդին, բարեկամին, ուսուցչին և հույս ու ապավենին։

Նրանք նշան էին բռնում ընկեր Ստալինին, վորովհետև Խորհրդային Միության ժողովուրդները Լենինի պատգամների իրագործման ասպարիզում հայտնաբերած նրա հանճարեղ խորաթափանցությանը,

---

[1] «Правда», 1927 թ. նոյեմբերի 1-ին։

անդրդվելիությանը և հաստատակամությանն են պարտական իրենց ծաղկմամբ, վորովհետև նա մարմնացնում է մեր ժողովրդի անդրդվելի ուժը և ամենակործան կամքը, փառքն ու պատիվը, արիությունն ու անվեհերությունը:

Այդ սրիկաները Ստալինին ատում էին այն պատճառով, վոր նրա անվան հետ են կապված Խորհրդային Միության պատանիների, աղջիկների ու յերեխաների յերջանկությունն ու բերկրանքը. վորովհետև նրա անունը բերաններին խորհրդային մարդիկ գնում են դեպի հերոսական սխրագործություններ. վորովհետև նրան, անսահման թանգագին և սիրելի մարդուն են նվիրված յերիտասարդ սերնդի ամենաթանգագին ու ամենաազնիվ զգացումներն ու մտքերը:

Հանուն բուրժուական կարգերի ռետավրացիայի և ֆաշիզմի հաղթության տրոցկիստներն ու զինովյեվականները ապանեցին մեր Կիրովին, նախապատրաստում էին Ստալինի և նրա մերձավորագույն զինակիցների ապանությունը:

Մի հին առած կա. «Ասա ինձ, թե ով է քո բարեկամը, և՝ յես կասեմ, թե ով ես դու»: Ցերբ պրոլետարական արդարադատությունն ընկավ տրոցկիստական–զինովյեվյան կենտրոնի դարշելի մարդասպանների գլխին, դուրս յեկավ, վոր նրանք բարեկամներ էլ ունեն:

Այն պահին, յերբ ամբողջ աշխարհի աշխատավորները մեծագույն բավականությամբ ընդունեցին խորհրդային դատարանի արդարացի դատավճիռը չարագործների շայկայի վերաբերյալ, ֆաշիստական մամուլը, II Ինտերնացիոնալի բանակին պատկանող կապիտալիստական լակեյների լրագրերը սկսեցին վողբալ այդ սրիկաներին, գովաբանելով նրանց «հեղափոխական առաքինությունները»:

Դեռ մինչև դատավարությունն սկսվելը, խորհրդային մամուլի մեջ տրոցկիստական–զինովյեվյան տեռորիստների գործի քննությունն ավարտելու և նրանց դատի տալու մասին հաղորդագրություն յերևալու մյուս որը, ֆաշիստական մամուլն սկսեց տրոցկիստներին իբրև «հեղափոխականներ» ներկայացնել: Ֆաշիստներին սկսեցին հետևել նաև Ամստերդամի Ինտերնացիոնալի լիդերները, վորոնք ոգոստոսի 22–ին ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների խորհրդին հեռագիր ուղարկեցին, վորով նրանք պահանջում էին խնայել հակահեղափոխական տրոցկիստական մարդասպանների կյանքը: Այսպես կոչված նորվեգիական բանվորական կուսակցության ռեֆորմիստները, վորոնք իրենց մոտ ապաստան են տվել Տրոցկուն, պլանաչափ կամպանիա սկսեցին, վորպեսզի կարողանան իրենց պաշտպանության տակ առնել բանվորների այդ գիշատիչ թշնամուն:

Ֆաշիստների ու Ամստերդամի Ինտերնացիոնալի լիդերների քինոտ ձայները միաձուլվեցին մի ադեկտուր ճիչի մեջ։ Նրանք բոլորը կաշվից դուրս են գալիս, վորպեսզի ապացուցեն, վոր Գեստապոյի գործակալ Տրոցկին մասնակից չի յեղել տեռորիստական գործունեության։ Բայց հենց այդ ջանքերն ել նրանց մերկացնում են։

Յեթե անգամ մեղադրյալները Մոսկվայի դատավարության ժամանակ չխոստովանեյին ուղղակի և վորոշակիորեն իրենց կապը Ֆաշիստական պահնորդական բաժնի և նրա դաշնակից Տրոցկու հետ, ապա միայն այդ պաշտպանությունը բավական եր, վորպեսզի հասկանալի լինի, վոր տրոցկիստական-զինովյեվյան բանդան ու Գեստապոն մի ընդհանուր կեղտոտ գործ են անում, ձգտում են մի ընդհանուր նպատակի—գլխատել Խորհրդային պետությանը և ԽՍՀՄ-ում վերականգնել բուրժուական կարգերը։

Առաջին անգամը չե, վոր բուրժուական և մենշևիկյան մամուլը պաշտպան ե կանգնում տրոցկիստական-զինովյեվյան բանդիտներին։ Դեռ այն տարիները, յերբ Տրոցկին ու Զինովյեվը, գտնվելով կուսակցության մեջ, նրա դեմ հարձակումներ եյին կատարում, բուրժուազիան ու մենշևիկները նրանց իրենց համակրանքն եյին արտահայտում և նրանց վրա հույս եյին դնում իբրև իրենց անվանսրոատի վրա բոլշևիզմի դեմ մղած պայքարում։ Այսպես որինակ, 1927 թվի հոկտեմբերին սպիտակ-գվարդիական «Последние новости» լրագիրը համակրանքով հայտնում եր, վոր տրոցկիստական-զինովյեվյան բլոկը դառնում ե «պրոլետարիատին թշնամի այն ուժերի բյուրեղացման կենտրոնը, վորոնք ճնշված են պրոլետարական դիկտատուրայի ռեժիմի կողմից և ակտիվորեն ձգտում են տապալել այդ ռեժիմը»։ Զարմանալի չե, վոր այժմ, յերբ տրոցկիստական-զինովյեվյան բանդիտները, իրենց ուժերը չխնայելով, աշխատում են արդարացնել իմպերիալիստական բուրժուազիայի հույսերը, Ֆաշիստներն ու մենշևիկները վողբում են իրենց դաշնակիցներին ու ծառաներին։

Ֆաշիստական և սոցիալ-դեմոկրատական մամուլի վոռնոցը—այդ մի բորենու վոռնոց ե, վորի թաթը կտրել են։

Իրենց թիկունքում զգալով կապիտալիստական շրջափակման մեղ թշնամի ուժերի աջակցությունը, Հուդա Տրոցկին, Ֆաշիստական բանդիտների ու տեռորիստների խարազդուխը, այժմ նոր սպանություններով ե սպառնում։

Փանի դեռ գոյություն ունեն կապիտալիստական աշխարհը և բանվոր դասակարգի դավաճանների բանակին պատկանող նրա ստրկաբարո ծառաները, նրանք պիտի դավադրեն յերկրազնդիս վրա յեղած մի-ակ սոցիալիստական պետության ժողովուրդների կյանքի դեմ, պատրաստելով հակահեղափոխական պատերազմ, գործելով պրովոկացիա-

ների միջոցով, դիվերսանտներ, լրտեսներ ու մարդասպաններ ուղարկելով։

Մարքս-Ենգելս-Լենին-Ստալինի թեորիայում խտացված բոլոր հեղափոխությունների փորձը սովորեցնում է միշտ մարտական պատրաստության մեջ լինել, վորովհետև

«... ամեն անգամ, յերբ նոր աշխարհի մարդիկ իշխանության գլուխ են անցել, նրանք պետք են ունեցել պաշտպանվելու հին աշխարհի փորձերից՝ ուժով վերադարձնելու հին կարգերը. նրանք, նոր աշխարհի մարդիկ, միշտ պետք են ունեցել աչալուրջ լինելու, պատրաստ լինելու հակահարված տալու հին աշխարհի՝ նոր կարգերի դեմ ուղղված հանցափորձերին»[1]։

«Комсомольская Правда», 1936 թ. սեպտեմբերի 24-ին։

---

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, եջ 752.

Ն. ՌՈՒԲԻՆՇՏԵՑՆ

ԾԽԱԾԱԾԿՈՒՅԹԻ ՀԵՏԵՎԸ

Տրոցկիստական–զինովյեվյան տեռորիստական կենտրոնի դատավարությունն ամբողջ աշխարհին ցույց տվեց սոցիալիզմի թշնամիների՝ ֆաշիստական վարձկանների, մարդասպանների գարշելի դեմքը։

Բոլոր յերկիրների աշխատավորները միահամուռ պաշտպանեցին խորհրդային դատարանի արդարացի դատավճիռը։ Ցեվ միայն նրանք, վորոնց գոյության իմաստը կազմում և կապիտալիստական սիստեմի պահպանումը, պաշտպանեցին գարշելի բանդիտներին։

Ֆաշիստական մամուլը հենց սկզբից հանդես յեկավ տրոցկիստական–զինովյեվյան բանդիտների կատաղի պաշտպանությամբ։

Այդ մամուլն ի վիճակի չլինելով փաստերը հերքելու, ստիպված եր ժխտել ամեն ինչ—թե՛ դատարանում յեղած վաստաթղթերը և թե՛ նույնիսկ մեղադրյալների ցուցմունքները։ Գերագույն դատարանի ռազմական կոլեգիայի դատավճռից հետո ֆաշիստական մամուլը չի դադարում արցունք թափել վոչնչացված տեռորիստների վրա։ «Ֆոլկիշեր Բեոբախտերը» իր եջերում տպագրում և Տրոցկու և գնդակահարված տեռորիստների պորտրետները, տալով համակրական բնութագրեր։ Իրենց շեֆից հետ չեն մնում նաև մյուս ամբողջովին ունիֆիկացիայի յենթարկված ֆաշիստական թմբկահարները—«Ֆրանկֆուրտեր Ցայտունգը», «Դոյչե Ալգեմայնե Ցայտունգը», «Բեռլիներ Տագեբլատը»։

Վերջերս ֆաշիստական մամուլի այդ վոռնոցի մեջ սկսում է գերակշռել մի նոտա։ Ֆաշիստներն ամբողջ ուժով ճգնում են ապացուցել որեր–բանդիտ Տրոցկու և դատարանի վճռով դնդակահարված տրոցկիստական–զինովյեվյան մարդասպանների «հեղափոխականությունը»։ «Դոյչե Ալգեմայնե Ցայտունգը» խոսում է տրոցկիստական–զինովյեվյան բանդիտների մասին իբրև «իսկապես հեղափոխական ուղղության ներկայացուցիչների» մասին։

Առանձնապես զզվելի յեն հնչում այն մարդկանց ստոր գրությունները, վորոնք իրենց վրա յեն վերցրել Հիտլերյան չների—II Ինտերնացիոնալի առաջնորդների յերգեցիկ խմբի դամքաշների անարդ դերը։

«Կարո՞ղ ենք արդյոք մենք իսկապես հավատալ, որ այդ մարդիկ կատարել են այն հանցագործությունները, որ նրանց վերագրում է մեղադրական եզրակացությունը»—կեղծավորաբար հառաչում է Ռոտտ Բաուերը, որը շատ լավ գիտե, որ տրոցկիստական–զինովյեվյան մարդասպանների զզվելի տեռորիստական գործունեության փաստերը անժխտելիորեն հաստատված են դատարանի կողմից, ընդունված են հենց իրենց բանդիտների կողմից: Ռոտտ Բաուերի հետ ձայն ձայնի տալով նույն բանն են պնդում «Դեյլի Հերալդ»–ը, «Պոպյուլեր»–ը և «Социалистический Вестник»–ին պատկանող վաստակավոր սրիկաներ—մենշևիկ ինտերվենցիոնիստներ Դանը, Հարվին և Ընկ.:

Ֆաշիստական մամուլն ու II Ինտերնացիոնալի ղեկավարների թվին պատկանող նրա դամքաշներն աշխատում են ապացուցել, որ տրոցկիստներ–զինովյեվականների տեռորը պայքար է կոմունիստական բանակի ներսում:

Ահա թե ինչու ֆաշիստներն այդպես մոլեգնարար վրա տվին «իշխանության ծարավի» վերսիային, որն իբր թե շարժառիթ է ծառայել տրոցկիստական–զինովյեվյան տեռորիստներին չարագործարար սպանելու Ս. Մ. Կիրովին, կազմակերպելու ժողովուրդների առաջնորդ մեծ Ստալինի ու նրա մերձավորագույն զինակիցների սպանությունը:

Սոցիալիզմի ու կապիտալիզմի միջև տեղի ունեցող պայքարը խաբեբայաբար իբրև սոցիալիզմի ներսում «իշխանության համար տեղի ունեցող մի վեճ» պատկերացնելու այս փորձը նոր չե:

Դեռ ԽՍՀՄ–ում Մեծ պրոլետարական հեղափոխության հենց սկզբին Լենինը մերկացնում եր միջազգային ռեֆորմիզմի նման փորձը՝ թաղցնելու հակահեղափոխական բուրժուազիայի այն ժամանակվա առաջավոր ջոկատը հանդիսացող մենշևիկների և եսերների կուսակցության ռեստավրատորական դերը:

«Նրանք,—ասում եր Լենինը ռեֆորմիստների մասին,—գործին այնպես են նայում, որ մենշևիկների պայքարը հեղափոխականների դեմ պայքար և ներսում, այսինքն՝ պայքար, որը նշանակում է սոցիալիզմի պատակտում Ռուսաստանում...:

Վոչ մենշևիկները, վոչ եսերները... այն մարդիկը չեն, որպեսզի նրանց սոցիալիստներին վերագրենք»[1]:

Ինչպես այն ժամանակ, 1918 թվին, միջազգային բանվոր դասակարգը հասկացել եր, որ մենշևիկները և եսերները սոցիալիստական ֆրազով քողարկված ձգտում են դեպի կապիտալիստական կարգերի վերականգնում, այնպես էլ այժմ տրոցկիստական–զինովյեվյան մար-

---

[1] *Ленин*, Собрание партийных работников Москвы, Соч. т. *XXIII*, стр. 309.

դասակարգերի ֆաշիստական և այլ վաստակաբաններին չի հաջողվի ժողովրդական մասսաներից թաղցնել միջազգային բուրժուազիայի առաջավոր ջոկատը հանդիսացող տրոցկիստներ–զինովյեվականների ռեստավրատորական էությունը:

Հենց Խորհուրդների երկրում կապիտալիզմը վերականգնելու ձգտումն էր, որ տրոցկիստներին ու զինովյեվականներին դրդեց դեռ շատ տարիներ սրանից առաջ միանալ կուսակցության դեմ պայքարելու համար մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորությունը ժխտող տրոցկիստական դրոշակի տակ:

Տրոցկիստական–զինովյեվյան բլոկի դանազանակերպ պլատֆորմներն ու հակահեղափոխական ամբողջ գիր ու միրը հենց ձևակերպում էին այդ ուղին, որ տանում է ԽՍՀՄ–ի Մեծ պրոլետարական հեղափոխության նվաճումներից, սոցիալիզմից դեպի հետ, դեպի կապիտալիստական կարգերը: 1927 թվին ընկեր Ստալինն ասում էր.

«Ոպոզիցիայի «պլատֆորմը» մի պլատֆորմ է... որ տանձալուծում է հակահեղափոխական ուժերը, մի պլատֆորմ, որ խախտում է պրոլետարիատի դիկտատուրան»[1]:

Տրոցկիստներ–զինովյեվականների ռեստավրատորական էությունը թվում է թե ամենից ավելի ակնառու կերպով արտահայտվել և նրանց պարտվողականության մեջ:

Ֆաշիստներին ու նրանց արբանյակներին չի հաջողվի թաղցնել, որ այն Տրոցկին, որը 1915 թվին հանդես էր գալիս ցարական Ռուսաստանի, կալվածատերերի ու կապիտալիստների պարտության դեմ իմպերիալիստական պատերազմում, դեռ սրանից լինը տարի առաջ, 1927 թվին, կոչ էր անում տապալել խորհրդային կառավարությունն այն մոմենտին, երբ ինտերվենտները կմոտենան Խորհրդային Միության մայրաքաղաքին: Տրոցկիստներ–զինովյեվականները սոցիալիստական պետությանը խփեցին թիկունքից, ուղղակի հակախորհրդային ելույթների անցնելով հենց այն ժամանակ, երբ միջազգային իմպերիալիստները փորձեր էին անում զինված ձեռքով կապիտալիզմը վերականգնելու ԽՍՀՄ–ում:

Ֆաշիստներն ու Ռոտտ Բաուերն աշխատում են գործն այնպես պատկերացնել, թե իբր Տրոցկին, Զինովյեվը և Կամենևը մինչև վերջերս կոմունիստական կուսակցության հետ միևնույն բանակումն են եղել: Նողկալի սո՛ւտ:

Տրոցկիստական–զինովյեվյան վոհմակը, որին ընկեր Ստալինը դեռ 1927 թվին բնութագրել էր իբրև մի խմբակ, «... որն իր գաղա-

---

[1] *Сталин*, Партия и оппозиция. Речь на московской губпартконференции 23 ноября 1927 г. *Տես «Պրավդա» 1927 թ. նոյեմբերի 24-ին։*

տրոցկիստական–զինովյեվյան մարդասպանները և ավելի մեծ սեր առաջ բերել դեպի Խորհրդային Միությունը: Այլ կերպ ասած՝ ճշմարիտն ասել կապիտալիզմի տրոցկիստական–զինովյեվյան ռեստավրատորների մասին՝ նշանակում է ուժեղացնել ժողովրդական ճակատի դիրքերը բոլոր յերկիրներում:

Բայց հենց դրանից է, որ ինչպես կրակից վախենում են ֆաշիստները ու II Ինտերնացիոնալի բանակին պատկանող ժողովրդական ճակատի կեղծավոր «կողմնակիցները»:

«Ցերեկը այնքան չեն ատում, որքան պատերազմից առաջ, որից հետո և ընտրությունների ժամանակ»—ասում եր Բիսմարկը: Խաղաղ վորսի համար ֆաշիստները ժամանակ չունեն. նրանք չեն պատրաստվում ռայխստագի ընտրություններին—նրանք ատում են պատերազմից առաջ:

Ֆաշիզմը, վորը նոր պատերազմ և պատրաստում, շահագրգռված է վարկաբեկելու ԽՍՀՄ–ը, մի յերկիր, վորը պաշտպանում է խաղաղության գործը:

Ամենալայն ժողովրդական մասսաների համակրանքը դեպի ԽՍՀՄ–ը որըստորե աճում է: Սոցիալիստական եկոնոմիկայի հաղթանակները, ստախանովյան շարժման թափը, խորհրդային կուլտուրայի ծաղկումը, աշխատավորների բարեկեցության աճը, ստալինյան Սահմանադրությունը, վորը թնդաց ամբողջ աշխարհում, խաղաղության ստալինյան քաղաքականությունը, վորը կատեցնում է նոր համաշխարհային սպանդ հրահրողների հանցագործ մտադրությունները — այս բոլորը չլսված բարձրության հասցրեց ԽՍՀՄ–ի հեղինակությունն ու ժողովրդականությունը: Ահա թե ինչու ֆաշիզմը, պատերազմ պատրաստելով, ծխածածկույթ և արձակում, վորպեսզի ժողովրդական մասսաներից ծածկի, մի կողմից, սոցիալիզմի հաջողությունները ԽՍՀՄ–ում, և մյուս կողմից՝ կապիտալիզմի ռեստավրատորներ, ԽՍՀ Միության վոխերիմ թշնամիներ տրոցկիստական–զինովյեվյան տեռորիստների նողկալի դեմքը:

Լենինն իր ժամանակին խոսում եր իմպերիալիստների բանակին պատկանող այն կեղծավորների ու անզգամների մասին, վորոնք «...զրպարտում են բանվորական կառավարությունը, յերկյուղից զոզարով այն համակրանքի հանդեպ, վոր դեպի մեզ տածում են «իրենց» սեփական յերկրի բանվորները»[1]:

Այդ յերկյուղից այժմ զոզում են ֆաշիստները, և նրանց հետ՝ Ռոտոտ Բաուերները ու Սիտրինները:

Խորհրդային Միության դեմ տարածվող զրպարտության ծխա-

---

[1] *Ленин*, Письмо к американским рабочим, Соч., т. *XXIII*, стр. 181.

տարական դիկտատուրան «բուրժուական հեղափոխության ժամանակավոր կոնյունկտուրա» յեր համարում, Զինովյեվն ու Կամենեվը, վորոնք արդեն 1917 թվին հանդես եյին յելել ընդդեմ Մեծ պրոլետարական հեղափոխության ԽՍՀՄ-ում, բուրժուազիայի ձեռքն եյին մատնել կոմունիստական կուսակցությունն ու բանվոր դասակարգին—բուրժուազիայի աչքում բավականաչափ համարում ունեյին:

Սոցիալիստական հարձակման կրախի վրա ունեցած հույսերի կատարյալ վիժումը տրոցկիստական-զինովյեվյան վոհմակին ամբողջ ֆրոնտով դրդեց անցնել տեռորի՝ կուսակցության ու կառավարության ղեկավարների դեմ և Տրոցկու շայկային դողեց Գեստապոյի հետ:

Դեռ անցյալ տարի «Լենինգրադի կենտրոնի» գործի առթիվ պրոլետարական դատարանի առջև կանգնած զինովյեվականներն իրենց ծրագրի մասին հետևյալ ցուցմունքն եյին տալիս՝

«Բոլոր մտքերն ու դաղափարները հանգում եյին բուրժուական-ռեստավրատորական ռեակցիայի դաղափարախոսական ձևակերպմանն ընդդեմ սոցիալիզմի»:

Իսկ նորերս տրոցկիստական-տեռորիստական կենտրոնի գործի առթիվ կայացած դատավարության ժամանակ մեղադրյալներ Կամենևն ու Ռեյնգոլդը ստիպված եյին խոստովանել, վոր ձեռք բարձրացնելով ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի վրա, նրա զինակիցների վրա, սպանելով Ս. Մ. Կիրովին, նրանք, տրոցկիստական-զինովյեվյան բանդիտները մի նպատակ եյին հետապնդում—ձեռք բերել կապիտալիստական կարգերի, կալվածատերերի ու կապիտալիստների իշխանության վերականգնումը ԽՍՀՄ-ում:

Տրոցկիստական-զինովյեվյան տեռորիստների այս ռեստավրատորական եյությունն է, վոր ձգտում են թաղցնել, մի կողմից, ֆաշիստները, իսկ մյուս կողմից՝ դարշելի մարդասպանների «սոցիալիստական» վաստակները: Հասկանալի յե, թե ինչու յեն ձգտում:

Չե՞ վոր տրոցկիստական-զինովյեվյան մարդասպանների ռեստավրատորական ծրագրի մասին բացահայտորեն խոսելը նշանակում է ընդունել, վոր խորհրդային դատարանը վոչնչացրեց բանդիտների, վորոնք ձեռք եյին բարձրացրել սոցիալիստական պետության ղեկավարների վրա՝ աշխատավոր ժողովրդի պայծառ, բերկրալից կյանքը ջախջախելու համար: Այդ նշանակում է բացահայտորեն ընդունել, վոր Գեստապոյի վարձկաններ Տրոցկին ու նրա արբանյակները ձգտում են ԽՍՀՄ-ում վերականգնել կալվածատերերի ու կապիտալիստների այն իշխանությունը, վորը Ֆաշիզմը արյունոտ ձեռքով պահպանում է Գերմանիայում, Իտալիայում և այլ յերկրներում: Վերջապես, այդ նշանակում է ամբողջ աշխարհի լայն ժողովրդական մասսաների մեջ ուժեղացնել ատելությունը դեպի Ֆաշիզմը, դեպի նրա վարձկանները

փարախոտությունը, իր ծրագիրը, իր տակտիկան, իր կազմակերպական սկզբունքներն ունի»[1], խայտառակ կերպով վտարվեց կուսակցությունից հենց նրա համար, որ նա անցյալ կուսակցականության բոլոր սահմանները և սկսեց բացահայտորեն ներկայացնել կապիտալիզմի շահերը:

Տրոցկիստական–զինովյևյան հակահեղափոխականները, կուսակցությունից դուրս մնալով, ավելի ևս լկտիորեն ձևավորեցին սոցիալիզմի դեմ պայքարելու և մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու լոզունգները:

1930 թվին Տրոցկին ցինիկորեն պահանջում եր «գյուղատնտեսության բնագավառում կատեցնել հետագա կոլեկտիվացումը... արդյունաբերության բնագավառում կանգնեցնել ինդուստրիայի մրցարշավը, դեն շպրտելով «հնգամյակը չորս տարում» լոզունգը... Թեորիական բնագավառում վերացնել մի յերկրում սոցիալիզմ կառուցելու թեորիան»:

Այս ռեստավրատորական ծրագիրը և յերկրում ջախջախված շահագործող դասակարգերի բոլոր բեկորները հավաքած տրոցկիստներ–զինովյևականների զազազած հակախորհրդային պայքարը՝ տրոցկիստական–զինովյևյան վոհմակը դարձրեց ամենահարմարը հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատի դերի համար:

Ցեվ իսկապես, իմպերիալիստական բոլոր բանակների ինտերվենցիոնիստներն ի՞նչ ուրիշ հակահեղափոխական ուժի վրա կարող՝ յեին հույս դնել ԽՍՀՄ–ի թիկունքում: Մենշևիկների ու եսերների կուսակցությունները, վորոնք 1917 թ. հոկտեմբերից հետո դարձան «...կապիտալիզմի վերականգնման ու պրոլետարիատի իշխանության տապալման կուսակցություններ»[2], վաղուց արդեն ոնտնկացել և ասպարեզից չքացել են: Սոցիալիզմի աճող հաղթանակները, կապիտալիստական դասակարգերի լիկվիդացիան ԽՍՀՄ–ում սոցիալիզմի թշնամիներից պահանջեցին նրանց ռեստավրատորական ձգտումների ավելի նուրբ քողարկում: Տրոցկիստական–զինովյևյան հակահեղափոխականների «ձախ» ֆրազը, ինչպես բազմիցս ցույց և տվել ընկեր Ստալինը, հենց այսպես վարպետորեն կատարված քողարկման մի նմուշ եր: Այդ «ձախ» ֆրազն յերբեք չի շփոթեցրել և չի շփոթեցնում ֆաշիստներին: Մի՞թե նրանք իրենք էլ իբրև «սոցիալիստներ» չեն դիմակավորվում:

Վերջապես, հակահեղափոխական բանդայի պարագլուխները՝ քարթու յերկերեսանիներ Տրոցկին, վորը տասնյակ տարիների ընթացքում պայքարել և Լենին–Ստալինի կուսակցության դեմ, վորը պրոլե-

---

[1] Стенографический отчет XV съезда ВКП(б), стр. 72. Партиздат, 1935 г.
[2] Ստալին, *Լենինիզմի հարցերը*, եջ 233 (հայերեն):

ծածկույթի հետևը, Տրոցկուն և վոչնչացված տրոցկիստական–զինովյեվյան մարդասպաններին ի պաշտպանություն յեղած աղաղակների հետևը ֆաշիստները ցանկանում են թաղցնել պատերազմի ռեալ նախապատրաստությունը—ապառազինությունների կատաղի մրցարշավը, ծառայության ժամկետի յերկարաձգումը բանակում, իսպանական ժողովրդին վոչնչացնելու համար ռմբակոծիչներ ու տանկեր ուղարկելը:

Բայց ֆաշիստների մտադրությունները դատապարտված են վոչընչացման: Վոչ վոքի չի հաջողվի աշխարհի ժողովուրդներից թաղցնել տրոցկիստական–զինովյեվյան տեռորիստների ռետրոգրադական եությունը: Վոչ վոքի չի հաջողվի թուլացնել ժողովրդական մասսաների ներն ամբողջ աշխարհում դեպի ԽՍՀՄ–ը, դեպի ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինը և նրա գինակիցները, դեպի կոմունիստական կուսակցությունը:

«Հեղափոխության և հակահեղափոխության միջև ջրբաժան գիծն այժմ անցնում է վոմանց կատաղի ատելության և մյուսների ընկերական բարեկամության գծով ԽՍՀՄ–ում պրոլետարական կուսակցության նկատմամբ»[1]:

Տասը տարի սրանից առաջ Ստալինի ասած այս խոսքերն այժմ հնչում են սոցիալիզմի մեծ իրականության հակայական ուժով: Ժողովրդական ճակատը, համախմբելով ընդդեմ ֆաշիզմի, հողմացրիվ կանի այն ծխածածկույթը, վորը թաղցնում է նոր պատերազմների նախապատրաստումը, և կմերկացնի ժողովրդական ճակատի՝ Բաուերի և Սդլերի տիպի կեղծ բարեկամներին:

Правда, 1936 թ. սեպտեմբերի 28–ին:

---

[1] *Сталин*, сб. „Об оппозиции", стр. 475.

ճշմարտությունը Մոսկվայի դատավարության մասին, ինչքան էլ վոր աշխատեն կեղծել հասարակական կարծիքը և հեռացնել հասարակության ուշադրությունը տրոցկիստական-զինովյեվական թափթփուկների ստոր հանցագործություններից,—ամբողջ աշխարհը տեսավ ու հասկացավ այդ հանցագործությունների անսահման ստորությունը, այն ստորաքարշության, ուրացության ու քաղաքական ցինիզմի անհունությունը, վորպիսիները այդ դավադիրներն իրենց պայքարի ընթացքում, իրենց հանցավոր տակտիկան էին դարձրել:

Սրանումն է այս պրոցեսի հասարակական-քաղաքական խոշոր նշանակությունը, մի պրոցես, վորը վոտքի հանեց մեր ամբողջ ժողովրդին, վորը բուռն զայրույթով պատասխանեց և դավադիրների վերաբերմամբ պահանջեց խիստ ռեպրեսիաներ, ե՛լ ավելի խտացրեց իր շարքերը խորհրդային իշխանության ու Համ Կ(բ)Կ-ի շուրջը, մեր կուսակցության ԿԿ-ի և ԽՍՀՄ ժողովուրդների սիրելի ընկերոջ, ուսուցչի ու առաջնորդի—ընկեր Ստալինի շուրջը:

Այդ պրոցեսն ոգնեց ե՛լ ավելի ուժեղացնելու հեղափոխական աչալրջությունն ու զգոնությունը թշնամիների դեմ մղվող պայքարում, նրանց դիմակավորման ու յերկերեսանիության դեմ մղվող պայքարում:

Դրա հետ մեկտեղ այդ պրոցեսը բացեց Խորհրդային պետության դեմ ուղղված հանցագործությունների նաև սոցիալական արմատները:

Այդ պրոցեսը մի անգամ ել հաստատեց Լենինի հանճարեղ ցուցումն այն մասին, վոր «պատմության մեջ վոչ մի խորը և հզոր ժողովրդական շարժում յոլա չի գնացել առանց կեղտոտ փրփուրի,—առանց անփորձ նովատորներին կպչող ավանտյուրիստների ու ժուլիկների ...»[1], վոր քանի դեռ չի վերջացել անցումը կապիտալիզմից դեպի կոմունիզմ, «...շահագործողների մեջ անխուսափելիորեն մնում է restauracիայի հույսը, իսկ այդ հույսը փոխարկվում է restauracիայի փորձերի», վոր «...տապալված շահագործողները, վորոնք չեյին սպասում իրենց տապալումը, չեյին հավատում դրան, չեյին ել մտածում դրա մասին, տասնապատիկ յեռանդով, կատաղի կրքով, հարյուր անգամ ավելի մեծ ատելությամբ նետվում են մարտի հանուն խլված «դրախտի» վերադարձման ...»[2]:

Այդ պրոցեսը ցույց տվեց, վոր պրոլետարական դիկտատուրայի պայմաններում ամեն տեսակի խմբեր, վորոնք փորձում են իրենց «դի-

---

[1] Լենին, Խորհրդային իշխանության հերթական խնդիրները, Ցերկեր, հատ. XXII, եջ 457 (ռուս.):

[2] Լենին, Պրոլետարական հեղափոխությունը և renեգատ Կաուցկին, Ցերկեր, հատ. XXIII, եջ 355 (ռուս.):

ների անչափ ստորությունը, վոչ մի համեմատության չենթարկվող ցինիզմը, անսահման ստորությունն ու դաժանությունը, ամբողջ աշխարհի աչքերի առջև մեկը մյուսի հետևից անցան մի ժամանակ մեր շարքերում գտնված մարդկանց բարոյական ու քաղաքական սարսափելի անկման պատկերները, այնպիսի նուրբ կեղծավորության, յերկերեսանիության ու ամենացած ստորության պատկերներ, վորոնց առջև նսեմանում են Դեդայելների, Ազեֆների, Մալինովսկիների ու սրանց նման պաշտոնական և վոչ-պաշտոնական շպիկների ու դավաճանների ստորությունն ու ցածությունը:

Դատական պրոցեսը, վոր տույն թվի ապրիլի 19—24-ին տեղի ունեցավ Մոսկվայում տրոցկիստական-զինովյեվական տականքների պարագլուխների նկատմամբ, այս ամենը ցույց տվեց ու ապացուցեց առավելագույն պարզությամբ ու համոզիչ կերպով:

Հրապարակային դատարանում թե՛ իրենց հանցանքները խոստովանած հանցագործները և թե՛ չխոստովանածները կամ կիսախոստովանածները վոչ մի կերպ չկարողացան գլուխ պրծացնել այն փաստերից, հանցանշաններից, ապացույցներից, վորոնք լիովին մերկացնում էին նրանց մեղավորությունը՝ անկախ նրանց կողմից իրենց հանցանքը խոստովանելուց կամ կիսախոստովանելուց:

Այդ դատավարության խոշոր նշանակությունն այն է, վոր այդ պրոցեսն իրոք, ինչպես այն անվանեց անգլիական իրավաբան Պրիտտը, «արդարացի պրոցես էր», արդարացի՝ վոչ միայն այն պատճառով, վոր Գերագույն դատարանը, տասնվեց սրիկաների դատապարտելով վոչնչացման, դրանով բավարարեց մեր յերկրի ու ամբողջ աշխարհի տասնյակ ու հարյուր միլիոնավոր աշխատավորների ու բոլոր ազնիվ մարդկանց պահանջը, այլև այն պատճառով, վոր այդ պրոցեսում իրավական բացառիկ պարզորոշությամբ, ճշգրտությամբ ու անբասիր կերպով փաստերով ապացուցվեցին ու հիմնավորվեցին հանցագործությունները ու յուրաքանչյուր դատապարտյալի հանցանքը:

Այո՛, այդ դատավարությունն արդարացի կերպով մահով պատժեց դավաճաններին ու մատնիչներին, միջազգային ֆաշիզմի այդ փաստացի գործակալներին, գերմանական ոխրանկային ծախսված այդ պոլիտիկաններին, այդ թրծված քաղաքական թղթամոլներին ու քաղաքական սնանկներին:

Ցեվ ինչքան էլ վոր կատաղեն մեր թշնամիները, ինչքան էլ վոր մոլեգնեն ու ամբողջ աշխարհովը մեկ վայրահաջեն գանազան ոխրանկաները, ֆաշիստական-տրոցկիստական շտաբները ու ֆաշիստական-վոստիկանական գործակալությունները, վորոնք իրենց պաշտպանության տակ են վերցրել Տրոցկուն, Զինովյեվին ու Կամենևին, ինչքան էլ վոր նրանք փորձեն ստության ու զրպարտության ծովում խեղդել

Ա. ՎԻՇԻՆՍԿԻ

ԳԵՍՏԱՊՈՅԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Տրոցկիստական-զինովյեվական տեռորիստական կենտրոնի դատավարությունը վերջացավ։ ԽՍՀ Մխության Գերագույն դատարանի դատավճիռը տվեց վերջին հանրագումարները և ֆաշիստական տասնվեց անզգամների հանցավոր գործունեության վերջին սահմանը դրեց, հավիտենական ու անջնջելի խայտառակությամբ ծածկելով նրանց անունները։

Ամբողջ աշխարհի առջև խորհրդային դատարանը մինչև վերջը և լիակատար կերպով մերկացրեց հանցանքի մեջ բռնված հանցագործներին, 1934 թվականին լավագույն բոլշևիկներից մեկին, պրոլետարական հեղափոխության բոցավառ տրիբուն Ս. Մ. Կիրովին դարանակալ կերպով սպանողներին և խորհրդային ժողովրդի առաջնորդ ընկեր Ստալինի ու նրա փառապանծ զինակիցների ու աջակիցների՝ ընկ. ընկ. Կագանովիչի, Վորոշիլովի, Որջոնիկիձեյի, Ժդանովի, Կոսիորի ու Պոստիշևի սպանությունը ռեցիդիվիստների ու պրոֆեսիոնալ բանդիտների ստոր ձեռնասությամբ նախապատրաստողներին։

Հրապարակային պրոցեսում դատարանը մերկացրեց և ԽՍՀՄ ու ամբողջ աշխարհի աշխատավորների միլիոնավոր մասսաների լիակատար հավանությունն առած իր դատավճռով առհավետ նշավակեց որբ-բանդիտ ու դավաճան Տրոցկուն և նրա ստոր ձեռնասուններին, տեռորիստական միացյալ կենտրոնի ղեկավարներ Զինովյեվին, Կամենևին, Սմիրնովին, Մրաչկովսկուն, Տեր-Վահանյանին ու սրանց մասնակիցներին, վորոնք նախապատրաստում էին իրենց չարագործ վոճիրները։

Դատարանը լույս աշխարհ հանեց այդ չարագործությունների նախապատրաստման ու կազմակերպման ամբողջ մեխանիկան, բոլոր ազնիվ մարդկանց առջև բանալով պատրաստվող հանցագործությունների իսկական զսպանակները, մերկացնելով թե՛ հանցագործների իսկական շարժառիթները և թե՛ հանցագործությունների իսկական ներշնչողներին։

Այս պրոցեսում, վորն ամենայն անխնայությամբ բացեց պրոլետարական հեղափոխության ու սոցիալիստական շինարարության թշնամի-

ծը» հակադրել կուսակցության գլխավոր գծին, անխուսափելիորեն կվերածվեն հակախորհրդային, հակահեղափոխական խմբերի։ Նա ցույց տվեց, որ մարդիկ, որոնք սկսել են ֆրակցիաների, ընդհատակյա տպարանների և հակախորհրդային փողոցային յելույթների կազմակերպումից, անխուսափելիորեն պետք է վերջացնեն ոխրանկաների, ֆաշիստների, լրտեսների ու դիվերսանտների հետ ուղղակի բլոկ կազմելով։

Այդ պրոցեսը ցույց տվեց, որ հենց այդպիսի վիճակ ունեցան տրոցկիստներն ու զինովյեվականները։ Բայց այդ բանը նրանց հետ պատահեց վոչ պատահականորեն։ Այդ մարդկանց խայտառակ և պատմության մեջ անորինակ անկումը նրանց ամբողջ քաղաքական ուղու, նրանց ամբողջ քաղաքական գործունեության տրամաբանական վախճանը հանդիսացավ։

Արդեն կուսակցության XV համագումարին տրոցկիստական-զինովյեվական ընդհատակը վերածվեց ուղղակի հակահեղափոխական կազմակերպության։ Կուսակցության XV համագումարին տրոցկիստական-զինովյեվական ընդհատակը ձևավորվեց իբրև յերրորդ ուժ, որն ըստ եության վոչնչով չեր տարբերվում սպիտակ-գվարդիական գործակալությունից։ Ընկեր Ստալինը «Пролетарская Революция» ժուռնալի խմբագրությանն ուղղած իր հայտնի նամակում արդեն 1931 թվին ասում եր, որ «իրոք տրոցկիզմն առաջավոր ջոկատն է հակահեղափոխական բուրժուազիայի, որը պայքար է մղում կոմունիզմի դեմ, Խորհրդային իշխանության դեմ, ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու դեմ»։ Ընկեր Ստալինն այն ժամանակ գրում եր.

«Հակահեղափոխական բուրժուազիային ո՞վ տվեց բոլշևիզմի դեմ ուղղված հոգևոր զենք՝ ինչպես այն թեզիսը, թե սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում անհնարին է, ինչպես այն թեզիսը, թե բոլշևիկների վերասերումն անխուսափելի յե և այլն։ Այդ զենքը նրան տրոցկիզմը տվեց։ Չի կարելի պատահականություն համարել այն փաստը, որ բոլոր հակախորհրդային խմբավորումները ԽՍՀՄ-ում Խորհրդային իշխանության դեմ պայքարելու անխուսափելիությունը հիմնավորելու վերաբերյալ իրենց փորձերում վկայակոչում եյին տրոցկիզմի հայտնի թեզիսը մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության մասին, Խորհրդային իշխանության վերասերման անխուսափելիության մասին, կապիտալիզմին վերադառնալու հավանականության մասին։

Հակահեղափոխական բուրժուազիային ԽՍՀՄ-ում ո՞վ տվեց տակտիկական զենք՝ Խորհրդային իշխանության դեմ ուղղված բացահայտ յելույթների փորձերի ձևով։ Այդ զենքը նրան տվին տրոցկիստները, որոնք փորձում եյին հակախորհրդային ցույցերը

սարքել Մոսկվայում ու Լենինգրադում 1927 թվի նոյեմբերի 7-ին։ Սա փաստ է, վոր տրոցկիստների հակախորհրդային յելույթները բարձրացրին բուրժուազիայի վոգին ու սանձալուծեցին բուրժուական մասնագետների վնասարար աշխատանքը։

Հակահեղափոխական բուրժուազիային տ՞ալ տվեց կազմակերպական զենք՝ ընդհատակյա հակախորհրդային կազմակերպություններ ստեղծելու փորձերի ձևով։ Այդ զենքը նրան տվին տրոցկիստները, վորոնք իրենց սեփական հակաբոլշևիկյան անբեգալ խումբն էին կազմակերպել։ Սա փաստ է, վոր տրոցկիստների ընդհատակյա հակախորհրդային աշխատանքը հեշտացրեց հակախորհրդային խմբավորումների կազմակերպական ձևավորումը ԽՍՀՄ-ում»[1]։

Ընկեր Ստալինն այն ժամանակ մատնանշում եր, վոր «տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատն է»։

Մի՞թե լիակատար կերպով չհաստատվեցին ընկեր Ստալինի այդ ցուցումները։ Մի՞թե այժմ պարզ չէ, վոր իրոք տրոցկիզմը բուրժուազիային հոգևոր, տակտիկական ու կազմակերպական զենք տվեց խորհրդային իշխանության ու կոմունիստական կուսակցության դեմ մղվող պայքարում, վոր տրոցկիզմը, Համ Կ(բ)Կ-ի ղեկավարության ու Խորհրդային պետության դեմ մղվող այս պայքարում գործի դնելով ամենատարբեր, ամենաթունավոր զենքը—անհատական տեռորի զենքը,—հանդիսանում է բուրժուական հակահեղափոխության առաջավոր ջոկատը։ Մի՞թե այժմ պարզ չէ, թե ինչպես իրավացի ու հանճարեղորեն խորաթափանց դուրս յելավ ընկ. Ստալինը, վորը դեռևս 1933 թվին նախազուշակում եր մեռնող դասակարգերի անցման անխուսափելիությունը հանկարծակի հարձակումների մի ձևից դեպի ուրիշ, հարձակումների ավելի տուր ձևերին, նախազուշակում եր, վոր Խորհրդային պետության աճման հզորության առջև «... կարող են վերակենդանանալ ու շարժվել հակահեղափոխական հին կուսակցությունների՝ եսերների, մենշևիկների, կենտրոնի ու ծայրերկիրների բուրժուական նացիոնալիստների ջախջախված խմբերը, կարող են վերակենդանանալ ու շարժվել հակահեղափոխական ոպոզիցիոն տարրերի բեկորները տրոցկիստների ու աջ ուկլոնիստների խմբից»[2]։

Ընկեր Ստալինը մատնանշում եր, վոր «այդ, իհարկե, սարսափելի չէ», բայց պահանջում եր աչքաթող չանել այդ, «եթե մենք ուզում ենք արագությամբ ու առանց առանձին զոհերի վերջ տալ այդ տարրերին»։ Անցումը դեպի անհատական տեռորը, վորը Խորհրդային

---

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ. եջ 591—592։

[2] Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ. եջ 633։

պետության ու կոմունիստական կուսակցության դեմ կռվելու տրոցկիստների ու զինովյեվականների վերջին տարիների հիմնական մեթոդն եր դարձել, տրամաբանական վախճանն եր հանդիսանում այն ամբողջ պայքարի, որը մինչ այդ ել մղում եյին այդ պարոնները:

Տրոցկիստական-զինովյեվական տեռորիստական կենտրոնի պրոցեսում այդ բանդայի պարագլուխներն իրենց անցումը դեպի տեռոր անկեղծորեն պատճառաբանում եյին այն բանի գիտակցությամբ, որ «պայքարի նախկին մեթոդները,—ինչպես ասում եր Ռեյնգոլդը,—մատաներ նվաճելը, վերնախավային կոմբինացիաներն աջերի հետ, տնտեսական դժվարությունների վրա հույս դնելը—տապալվեցին»:

Ռեյնգոլդն ու մյուս մեղադրյալները հենց դրանով եյին բացատրում իրենց անցումը դեպի տեռոր: Առաջ, 1926—1931 թ.թ., տրոցկիստներն ու զինովյեվականները կուսակցության գլխավոր գծի դեմ իրենց մղած պայքարը պատճառաբանում եյին նրանով, որ կուսակցության քաղաքականությունն իբր թե սպառնում է սոցիալիզմի շահերին: Կուսակցության XV համագումարին այդ պարոնները տրոցկիստական թեզիսներում («ժողովրդական տնտեսության հնգամյա պլանի մասին») զրպարտում եյին Համկ(բ)կ կկ-ին, մեղադրելով կկ-ին վոչ-ճիշտ քաղաքականության մեջ, որի պատճառով իբր թե ուժեղացավ «վոչ-պրոլետարական ուժերի ճնշումը բանվոր դասակարգի վրա»: Այդ թեզիսներում տրոցկիստները զրպարտում եյին կկ-ին, մեղադրելով նրան՝ «բանվորի մկանների վրա ուժեղ ճնշում գործադրելու միջոցով մեր զարգացման հակասությունները ծածկելու փորձերի մեջ, ամեն տեսակ պատրվակով պահպանելով կապիտալիստական խավերի կուտակումը»: Տրոցկին զրպարտչորեն պնդում եր, որ մեզ մոտ «պրակտիկայում մեր տնտեսության կապիտալիստական և սոցիալիստական տարրերի փոխհարաբերության հիմնական հարցում հաղթանակում են հակապրոլետարական տենդենցները» և այլն և այլն:

Ինչպես հայտնի յե, տրոցկիստներն ու զինովյեվականները վառնոցով ու հարայ-հրոցով դիմավորեցին կուսակցության ու կառավարության վորոշումը 7-ժամյա աշխատորվան անցնելու մասին, ապացուցելով՝ թե դա «դեմագոգիա» յե, «ճարպիկ քայլ է»: Այն ժամանակ տրոցկիստներն ու զինովյեվականները փորձում եյին կուսակցության դեմ իրենց մղած պայքարը ծածկել, ճիշտ է, իրականում գոյություն չունեցող, այլ կուսակցության մատացածին «սխալների» քննադատությամբ:

Այն ժամանակ կուսակցության գլխավոր գծի դեմ մղած իրենց ստոր, ֆրակցիոն պայքարը նրանք փորձում եյին ծածկել «սոցիալիզմի կրախի» մասին բարձրացրած վայնասուններով ու աղաղակներով, իբրև թե իրենց վախով, որ ԽՍՀՄ-ում սոցիալիզմը կխեղդվի, ինչպես

նրանք էին ասում, «հակապրոլետարական» և կուլակային տարրերի կողմից: Իրականում այն ժամանակ էլ նրանց ամենից քիչ էին անհանգստացնում սոցիալիզմի բախտը, վորի կառուցման հնարավորությանը մի յերկրում նրանք չէին հավատում, և պրոլետարիատի շահերը: Բայց նրանք ձևացնում էին, թե այդ շահերն իրենց սրտին մոտիկ են:

Իրականությունն արդեն այն ժամանակ նրանց մերկացրեց: ԽՍՀՄ-ում սոցիալիզմի առաջին հաջողությունների դիմաց, վորոնք անխուսափելիորեն կապված էին բազմաթիվ ու լուրջ դժվարությունների հետ, նրանք ուժեղացրին իրենց պայքարն ընդդեմ կուսակցության ու խորհրդային իշխանության, հույս դնելով այդ դժվարությունների վրա:

Նրանց բոլոր հանցագործ հաշիվները կառուցվում էին նույն այն հույսի վրա, թե դժվարությունները մենք չենք հաղթահարի, թե դժվարությունները մեզնից ուժեղ դուրս կգան: Այս խաղաթուղթը նույնպես խփված դուրս յեկավ: Դժվարությունները հաղթահարված էին, արդյունքները՝ խորտակված: Սոցիալիզմը ԽՍՀՄ-ում հաղթանակեց վերջնականորեն ու անդառնալի կերպով: Իսկ ի՞նչ դիրք դրավեցին տրոցկիստական-զինովյեվական անդամները այս համաշխարհային-պատմական դեպքի հանդեպ: Չի՞ն դավաճանական դիրքը... Տեսնելով, թե ինչպես են հաղթահարվում այդ դժվարությունները և թե ինչպես և մեր յերկիրն այդ դժվարություններից հաղթանակած դուրս գալիս, նրանք վճռականորեն հույս դրին Համկ(բ)Կ-ի ու Խորհրդային պետության դեկավարների դեմ տեռորիստական յելույթներ կազմակերպելու վրա, միջազգային հարաբերությունների բարդացման վրա, պատերազմի վրա և խորհրդային իշխանության պարտության վրա: Նրանք դենք են վերցնում և ընդհատակյա տեռորիստական խմբեր են կազմակերպում, արդեն չբողարկելով իրենց հակահեղափոխական պայքարը վոչ մի «վայելչատես» պատրվակով, վոչ մի «թեորիայով» «թերմիդորության» մասին, «բոնապարտական ռեժիմի» մասին, «պրոլետարիատի վրա հակապրոլետարական տարրերի կողմից գործադրված նյութական ահռոզ ճնշման» մասին և այլն և այլն:

Ընդհակառակը, նրանք ընդունում են, վոր սոցիալիզմը մեր յերկրում կառուցված է: Իրենց պայքարը Համկ(բ)Կ-ի և խորհրդային իշխանության դեմ նրանք այժմ պատճառաբանում են արդեն վոչ թե այն բանով, վոր իբր թե Համկ(բ)Կ-ն և խորհրդային իշխանությունը յերկիրը դեպի անկում են տանում, ինչպես ստաբար ու զրպարտողաբար նրանք պնդում էին առաջներում: Վո՛չ, կորցնելով վորևե հենարան մասսաների մեջ, առանց մասսաների, ընդդեմ մասսաների, նրանք իրենց հանցագործ, լիտի «աշխատանքը», Համ Կ(բ)Կ-ի և խորհրդային իշխանության դեմ վարած իրենց հանցապարտ պայքարը այժմ պատ-

ճառաբանում են հենց այն բանով, որ սոցիալիզմը հաղթանակել է, որ յերկրի նյութական, կուլտուրական ու տնտեսական վերելքի խոշորագույն հաջողություններն առկա յեն: Այս բանը նրանք դատարանում հայտարարեցին բացահայտորեն ու ուղղակի կերպով, առանց աչքերը թարթելու:

Կամենևը դատարանում ասում էր. «Ցեսս յեկել եմ այն համոզմունքին, որ կուսակցության քաղաքականությունը, նրա ղեկավարության քաղաքականությունը հաղթանակել է այն միակ իմաստով, որով հնարավոր է քաղաքական հաղթանակը սոցիալիզմի յերկրում, որ այդ քաղաքականությունը ճանաչված է աշխատավոր մասսաների կողմից»:

Այսպիսով, հենց այն պատճառով, որ կուսակցության քաղաքականությունը հաղթանակել է, որ սոցիալիզմը հաղթանակել է, որ այդ քաղաքականությանն ողնում ու հավանություն են տալիս միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ, միլիոնավոր աշխատավորներ,— Կամենևն ու իր համախոհները դրա համար էլ անցան ռեակցիոնական կուվի կողմը, իրենց համար դատավորված անբարենպաստ պայմաններում կուվի այդ ձևը համարելով միակ հնարավորը:

Նախնական հարցաքննության ժամանակ Կամենևն այս առթիվ ասում էր. «Մեր այն հույսը, որ դրել էյինք յերկրի ապրած դժվարությունների անհաղթարհարելիության վրա, տնտեսության ճգնաժամային դրության վրա, կուսակցական ղեկավարության տնտեսական քաղաքականության կրախի վրա, 1932 թ. յերկրորդ կեսին արդեն բացահայտորեն կործանվեց: Հաղթահարելով դժվարությունները, յերկիրը Համկ(բ)կ ԿԿ-ի ղեկավարությամբ հաջողությամբ ընթանում էր սոցիալիստական աճման ուղիով: Մենք այդ բանը չտեսնել չէյինք կարող: Թվում էր, թե մենք պետք է դադարեցնեյինք պայքարը: Սակայն հակահեղափոխական պայքարի սրամաբանությունը, իշխանության դեմ ապրած իդեալուրկ վոտնձգությունները մեզ ուրիշ ուղղությամբ տարան: Դժվարություններից դուրս գալը, Համկ(բ)կ ԿԿ-ի քաղաքականության հաղթանակը մեր մեջ չարության ու ատելության նոր հոսանք առաջացրին դեպի կուսակցության ղեկավարությունը և, առաջին հերթին, դեպի Ստալինը» (Հատ. XV, գործ էջ 10):

Իր գրավոր բացատրություններից մեկում Կամենևը, վերլուծելով այն ուղիները, որ նրան հասցրել էյին տեռորի, իր խմբի մասին գրում էր.

«Առաջին անգամ նա (խումբը) ջախջախվեց 1927 թ., յերբ՝ դաղափարական պարտություն կրելով այն յերկամյա բացահայտ դիսկուսիայի մեջ, որ նրան ընձեռել էր կուսակցությունը, նա հուսահատությունից փողոց նետվեց: Ընդգծում եմ «հուսահատությունից» բա-

ոչ, վորովհետև հենց հուսահատությունը, մասսաների առջև իր դիրքերը պաշտպանելու անհնարինության գիտակցությունն եր, վոր հետադայում թելադրեց մեզ մեր վորոշումները ու միջոցառումները։ Յերկրորդ անգամ մենք լիակատար դաղափարական ու կազմակերպական պարտություն կրեցինք 1930 թ. հենց նախորեյին, յերբ ջախջախվեցին մեր հույսերը թե՛ աջերի (Բուխարին, Ռիկով, Տոմսկի) հետ բլոկ կազմելու և թե՛ այն բանի վերաբերմամբ, վոր կուլակավարությունը աջերի դեմ պայքարելու համար կդիմի մեր աջակցությանը։ Կուսակցությունն աջերին ջախջախեց առանց մեզ և ընդդեմ մեզ, այդ պայքարն անցկացրեց «պայքար յերկու ֆրոնտի վրա» լոզունգով... Մեզ մնում եր միայն մի ճանապարհ. հույս դնել հեղափոխության նոր ետապի դժվարությունների վրա, դժվարություններ, վորոնք անխուսափելիորեն կապված եյին մանր գյուղացիական տնտեսությունից հողի վրա կոլեկտիվ տնտեսությանն անցնելու հետ։ Դժվարությունները հսկայական եյին։ Պետք է ցնցվեյին կապիտալիստական հասարակության վերջին և ամենաբազմաշատ դասակարգի դարավոր նախապաշարումները։ Ըստ մեր հաշվարկումների՝ այդ բանը չեր կարող տատանումներ չառաջացնել հենց կուսակցության իրեն շարքերում, ներառյալ մինչև նրա վերնախավերը։ Հենց այդ դժվարությունների վրա, այդ տատանումների վրա եյ մենք դրել եյինք մեր հույսերը։ Ավելի ճիշտ՝ իշխանության համար մղած պայքարում մենք մեր բոլոր հույսերը կապել եյինք այն բանի հետ, վոր ինդուստրացման ու կոլեկտիվացման ստալինյան քաղաքականությունը կճախողվի գյուղի տարերային դիմադրությամբ, նրա անխուսափելի արձագանգներով քաղաքում և կուսակցության մեջ։ Այն դիրքը, որ տերմինի ամենաճիշտ և ամենախորը իմաստով, վոր այդ մոմենտին դրսևորել եյին դինովյևականները ու տրոցկիստները, հակահեղափոխության դիրքն եր»։

Այդ դիրքից դեպի անհատական տեռորի դիրքը մի քայլ է։ Կամենևը գրում եր. «Պետք եր իրեն վերջնականապես հաղթված համարել, հրաժարվել իշխանության վերաբերմամբ ունեցած հույսերից, ազնվորեն կանգնել նշանակված աշխատանքին և աշխատել մոռանալ հանցավոր պայքարի ու սիստեմատիկ պարտությունների այդ ամոթալի տարիները կամ, կորցնելով ամեն բան՝ սկզբունքները, խղճանները, խղճալները, պատիվը, զեկավարվելով միմիայն հուսահատությամբ, չարակամությամբ ու անձնական վրիժառությամբ, կանգնել մերկ ավանտյուրիզմի ուղու վրա, տեռորի ուղու վրա։ Անհաջողություններից ու պարտություններից գազազած, մեզ համար ստեղծված դրությունը փոխելու վոչ մի ուրիշ միջոց չտեսնելով, մենք ու տրոցկիստները կառչեցինք տեռորին, վորպես դեպի իշխանությունը տանող մեզ համար դեռևս մնացած միակ ուղուն»։ Այս ասելով, Կամենևը

մեկնաբանում էր վոչ միայն իր անհատական տեսակետը: Նա ասում էր այն, ինչ ասում ու մտածում էր այդ ամբողջ խումբը:

Հարցաքննության ժամանակ Զինովյեվն ասում էր. «1932 թվի վերջերին ակնհայտնի դարձավ, վոր մեր հույսերը չարդարացան ... փաստ էր այն, վոր կուսակցության գլխավոր գիծը հաղթանակում է: Այստեղ ամենայն ակնառությամբ արտահայտվեց այն լիակատար անակզբունքայնությունն ու անգաղափարականությունը, վորոնք հասցրին մեզ իշխանության համար մղվող մերկ ու անակզբունք պայքարի» : (Հատ. XII, գործ էջ 34) :

Կարելի՞ յե արդյոք է՛լ ավելի ցայտուն բացատրություն գտնել այն իրոք բացառիկ անակզբունքայնության ու քաղաքական ավանտյուրիզմի, վորոնք տրոցկիստական–զինովյեվական կենտրոնին հրեցին անհատական տեռորի ուղին:

Նախնական քննության ժամանակ Ռեյնդոլդի տված ցուցմունքների համաձայն՝ այս բանդայի ժողովներից մեկում Կամենևը տեռորի դիրքին էր անցնելը բացատրում էր շատ հասարակ կերպով: «Ղեկավարությունը ներքևից — մասսաներին առդիմելու միջոցով — ձեռք գցելու փորձը,—ասում էր Կամենևը,—անհաջող վերջացավ: Կուսակցության ղեկավարությունը վերնախավային կոմբինացիաների միջոցով (բլոկն աջերի հետ) ձեռք գցելու յերկրորդ փորձը նույնպես անհաջողություն կրեց: Վերջապես, ճգնաժամի վրա դրված հույսը և «լեգալ աշխատանքի» ամբողջ տակտիկան մեզ դարձյալ չհասցրին ղեկավարության: Այսպիսով,—ավելացնում էր Կամենևը,—բլոկն այժմ կարող է ունենալ միմիայն մի պլատֆորմ, վորի շուրջը միավորվելը հնարավոր է: Այդ պլատֆորմը՝ կուսակցության ու կառավարության ղեկավարության դեմ տեռորիստական ակտիվ պայքարին անցնելն է...» :

Այս մասին չի քաշվում խոսելու նաև Զինովյեվը, վորն իր համախոհներին սովորեցրել էր, թե «մասսայական գործողության միջոցով կուսակցության ղեկավարությունը ձեռք գցելն այժմ միանգամայն անհուսալի յե» և վոր «իշխանությունը ձեռք գցել կարելի յե Ստալինին վերացնելու միջոցով միայն» :

Իր ժամանակին աշխատելով թեկուզ «փորսող տալով», ինչպես նա ասում էր, սողոսկել կուսակցության մեջ, 1932—1935 թ. թ. Զինովյեվն ու իր բանդան փորձեր էին անում «իշխանությունը ձեռք գցել» թեկուզ տեռորի՞ միջոցով:

Զինովյեվը, Կամենևը, Սմիրնովը, Մրաչկովսկին և սրանց ամբողջ բանդան առանձնապես հոգ չէին տանում քաղաքական ավարտված ու ներդաշնակ ծրագիր մշակելու մասին, համոզված լինելով այն

քանում, վոր «համաձայնության» կդան, վոր իրենց ապագա քաղաքական դծի առթիվ թե՛ տրոցկիստների, թե՛ աջերի, թե՛ «ձախերի» և թե՛ «ինդիվիդուալների» հետ տարաձայնություններ չեն լինի:

Իշխանությունը ձեռք դցե՛լ: Առանց մասսաների, ընդդեմ մասսաների, բայց իշխանությունը ձեռք դցե՛լ: Ահա ինչումն եր նրանց՝ որվա «խնդիրը», ահա վորն եր նրանց մարտական լոզունգը և ռազմական կանչը:

Բոլոր մեղադրյալները թե՛ նախնական և թե՛ դատական քննության ամբողջ ընթացքում մի անգամ չե՛ վոր խոսեցին այս հանգամանքի մասին՝ վորպես նրանց հանցավոր գործունեության հիմնական շարժառիթի մասին, վորպես կուսակցության ու կառավարության ղեկավարության դեմ նրանց հանցավոր պայքարի դլխավոր խթանի մասին:

Այս բանդայի պարագլուխները ուժեղ կերպով ընդդծում եյին այս հանգամանքը, գործն այնպես պատկերացնելով, թե ուրիշ վոչ մի շարժառիթ նրանք չեն ունեցել, թե նրանք քաղաքական վոչ մի ձգտում, քաղաքական վոչ մի ծրագիր չեն ունեցել:

Վո՛չ, քաղաքական ծրագիր նրանք ունեյին, թեև նրանք դատարանում բոլոր ջանքերը թափեցին սքողելու այդ հարցը, շրջանցելու այն: Նրանք աշխատում եյին թաղցնել մասսաներից այդ ծրագիրը, ամեն ինչ վերածելով լոկ միայն «իշխանության ծարավի» կամ, ինչպես դատարանում Կամենևն ասաց, «մեր խմբի իշխանության ծարավի»:

Իրականում գործն, իհարկե, շատ ավելի խորն եր: Տրոցկիստական–զինովյեվական բլոկի ծրագիրն իր ամբողջ սուր ծայրով ուղղված եր ընդդեմ սոցիալիստական շինարարության գործի մեր յերկրում: Դա սոցիալիզմի ջախջախման ծրագիրն եր, կապիտալիստական restauration ծրագիրը:

Տրոցկիստական–զինովյեվական տեռորիստական կենտրոնի գործի առթիվ տեղի ունեցած դատական պրոցեսում մեղադրողի և մեղադրյալ Կամենևի միջև տեղի ունեցավ, իմիջի այլոց, մի վոչ–մեծ դիալոգ, վորը բավարար չափով լույս եր սփռում այս հարցի վրա: Մեղադրողը հարցրեց Կամենևին, թե հասարակական իդեալների հետ ինչ կապ ունի իշխանության այն ծարավը, վորի մասին խոսում են մեղադրյալները: Ցեվ Կամենևը պատասխանեց. «Նա այն ընդհանուր բանն ունի, ինչ վոր ունի հեղափոխությունը և հակահեղափոխությունը»: Ցեվ հետագա հարցերին՝ «նշանակում է, դուք հակահեղափոխությա՞ն կողմն եք. հետևապես, դուք ձեզ պարզորոշ կերպով պատկերացնո՞ւմ եք, վոր պայքար եք մղում սոցիալիզմի դեմ»—Կամենևը պատասխանեց. «Այո՛, մենք պարզորոշ կերպով պատկերացնում ենք, վոր պայքար ենք մղում կուսակցության ու կառավարության դե-

կավարության դեմ, վորոնք յերկիրն առաջնորդում են դեպի սոցիալիզմ»:

Ահա վորտեղ է թաղնված այն հարցի պատասխանը, թե վորոնք եյին Համ Կ(բ)Կ ԿԿ-ի և խորհրդային կառավարության դեմ տրոցկիստների ու զինովյեվականների ուծած այդ գաղտնային ատելության և մղած կատաղի պայքարի ստույգ, իսկական շարժառիթները:

Նրանք, այդ ստոր դավաճանները, պայքար եյին մղում ընդդեմ Համ Կ(բ)Կ ԿԿ-ի ու խորհրդային կառավարության ղեկավարների՝ ընկերներ Ստալինի, Մոլոտովի, Կագանովիչի, Վորոշիլովի, Որջոնիկիձեյի, Ժդանովի, Կոսիորի ու Պոստիշևի,—վորովհետև նրանց ղեկավարությամբ հաղթանակեց սոցիալիզմը, վորովհետև նրանց ղեկավարությամբ և կառուցվում նոր, սոցիալիստական հասարակությունը: Մարդասպանների այդ լպիրշ բանդայի պայքարն ընդդեմ մեր առաջնորդների ու ղեկավարների ոչ պայքար չե ընդդեմ անձնավորությունների. դա պայքար է ընդդեմ այնպիսի մարդկանց, վորոնք մարմնացնում են միլիոնավոր աշխատավոր մասսաների լավագույն հույսերը, յերազները ու ակնկալությունները, ընդդեմ այնպիսի մարդկանց, վորոնք հանդիսանում են սոցիալիզմի անձնավորումը, ընդդեմ այնպիսի մարդկանց, վորոնց ղեկավարությանն ընկեր Ստալինի գլխավորությամբ ԽՍՀՄ ժողովուրդները պարտական են իրենց իսկական ազատությամբ և ուրախ, յերջանիկ կյանքով:

Ցուրաքանչյուր աշխատավորի համար սիրելի և անսահման մտ ու թանգագին ընկեր Ստալինի անվան, նրա փառապանծ զինակիցների—ընկ. ընկ. Մոլոտովի, Կագանովիչի, Վորոշիլովի, Կալինինի, Որջոնիկիձեյի, Ժդանովի, Կոսիորի, Պոստիշևի, Յեժովի—անունների հետ է կապված այն ամենալավ բանը, վոր կա միլիոնավոր բանվորների ու գյուղացիների կյանքում, վոր ընդմիշտ նվաճել է մեր յերկրի աշխատավոր ժողովուրդը:

Ահա թե ինչու մեր կուսակցության ու կառավարության ղեկավարության դեմ մղվող պայքարը հասարակ պայքար չե. դա դասակարգային, քաղաքական պայքար է, պայքար ընդդեմ սոցիալիզմի, ընդդեմ բանվոր դասակարգի, ընդդեմ աշխատավորների:

Հանուն ինչի՞: Հանուն ի՞նչ իդեալների կամ քաղաքական սկզբունքների:

Տրոցկիստական-զինովյեվական կենտրոնի գործի ստիպիչ տեղի ունեցած դատական պրոցեսն ապառիչ պատասխան տվեց այս հարցին:

Տրոցկիստներն ու զինովյեվականները պայքար եյին մղում ընդդեմ կուսակցության ու կառավարության հանուն կապիտալիստական restավրացիայի, հանուն ԽՍՀՄ-ում կապիտալիզմի վերականգնման:

1932 թ. Զինովյեվը բացահայտ կերպով նվում էր այն ժամանակ

նկատվող մի քանի դժվարությունների առթիվ, ամեն կերպ վատաբանում էր մեր սոցիալիստական շինարարությունը, խոսելով մեր սոցիալիզմի մասին որպես «սոցիալիզմի՝ հոտենտոտների համար» և հառաչում էր կապիտալիստական «հին, բարի» հարաբերությունների համար:

Տրոցկիստական–զինովյևական ընդհատակյա համահավաքներում 1932—1934 թ. թ. բացորոշ խոսակցություններ էին տեղի ունենում շովինական–կապիտալիստական հարաբերությունների ամենայնի բացման անհրաժեշտության մասին և կապիտալիստական restauration-ի հաստատունության մասին: Տնտեսական քաղաքականության բնագավառում տրոցկիստական–զինովյևական բլոկն ուղղակի հույս էր դնում ինդուստրացման ու կոլեկտիվացման ձախողման վրա:

Տրոցկիստական–զինովյևական կենտրոնի այնպիսի պարագլուխները, ինչպես Սոկոլնիկովը, որն այստեղ համարվում էր գիտակ ու հեղինակավոր մարդ ֆինանսական ու տնտեսական քաղաքականության բնագավառում, ուղղակի պահանջում էին լիկվիդացիայի յենթարկել խորհտնտեսությունները, ցրել կոլտնտեսությունները և ծաղել ինդուստրացումը:

Նրանք բացահայտորեն չէին խոսում կապիտալիզմի restauration-ի մասին, բայց մի՞թե տրոցկիստական–զինովյևական բլոկի այդ պահանջները սոցիալիզմի լիկվիդացիա ու կապիտալիզմի restauration չեն նշանակում:

Իհարկե, տրոցկիստները ու զինովյևականները չեն համարձակվում իրենց այդ «ծրագրի» մասին բացահայտորեն խոսել, ինչպես չեն համարձակվում բարձր խոսել՝ իմպերիալիստների հետ տեղի ունեցած պատերազմում ԽՍՀՄ-ի պարտության վրա դրած իրենց հույսերի մասին:

Նրանք չէին քաշվում իրենց շրջանում աչուկով խոսել կապիտալիզմի restauration-ի մասին, ռազմական այն պարտության վրա դրած ուղղակի հույսերի մասին, որը, ըստ Զինովյևի ու Ռեյնգոլդի խոսքերի, «կտապալի Ստալինին, թեկուզ և հեռավոր Արևելքում մի կտոր տերիտորիա կորցնելու գնով»:

Կողմնակի մարդկանց շրջանում նրանք բղավում էին սոցիալիզմի մասին, բանվոր դասակարգի շահերի մասին: Ցուրայինների շրջանում նրանք սոցիալիզմը վատաբանում էին ամենատոր խոսքերով, ծաղրում էին «սոցիալիզմը մի դավառում», ջարդուփշուր էին անում ինդուստրացումն ու կոլեկտիվացումը՝ որպես բոլոր չարիքների ու դժբախտությունների աղբյուր:

Ոտարների շրջանում նրանք յերդվում էին սոցիալիզմին հավատարիմ լինելու մասին, յուրայինների շրջանում ատորաքարշություն ե-

յին անում կապիտալիզմի առջև, որտեղից հուզմունքով սպասում էին լրենց համար այն յերջանիկ ոլորան, յերբ «հոտենտոտական սոցիալիզմն» իր տեղը կզիջի տնտեսական «նորմալ» հարաբերություններին, յերբ կհաղթանակեն կապիտալիստական ռեստավրացիան ու կապիտալիստական ռեստավրատորները:

Դավաճանելով պրոլետարիատին ու սոցիալիզմի գործին, կապիտալիզմի այդ զինակիրները, կապիտալիստական ռեստավրացիայի այդ մոնետիկները, Գեստապոյի այդ ագենտները—տրոցկիստական-զինովյեվական բանդիտները—իրենց պայքարով ու իրենց ձգտումներով արտահայտում էին Ֆաշիստական այն բուրժուազիայի հույսերը, վորը չեր հրաժարվում ոգտագործել ռենեգատներին ու դավաճաններին, վորտեղից էլ վոր այդ դավաճանները գալու լինեին, ինչ խոսքերով ու ֆրազներով վոր նրանք թաղցնելու լինեին իրենց իսկական նպատակներն ու դիտավորությունները:

Այսպես եր այս պարոնների, այս հասուն ու իսկական տերմիդորականների ու կապիտալիստական արբանյակների ծրագրի գործը:

Տրոցկիստական-զինովյեվական բլոկը մի բլոկ եր Ֆաշիստական ոխրանկայի գործակալների, դավաճանների, կարյերիստների, ավանտյուրիստների, ինտրիգանների, կատաղած մանր բուրժուաների, խռոված չինովնիկների ու պոմպադուրների, վորոնք դեպքերի ընթացքով շպրտված եյին պատմության աղբարկղը:

Դա անսկզբունք սրիկաների մի բլոկ եր, վորոնք դավաճանել ու ծախել եյին պրոլետարիատի շահերը, աշխատավոր մասսաների շահերը, սոցիալիզմի շահերը:

Այդ բլոկում առաջատար դերը խաղում եր Տրոցկին—այդ բլոկի հոգին ու ուղեղը, Համ Կ(բ)Կ-ի ու խորհրդային կառավարության դեկավարներին սպանելու գլխավոր կազմակերպիչն ու դրդիչը:

Տրոցկին անհատական տեռորին անցնելու ազդանշանը տվեց: Տրոցկին այդ ազդանշանը տվել եր դեռևս 1931 թվին Սմիրնովի միջոցով: Հետագայում կրկնեց 1932 թվին Գոլցմանի ու Գավենի միջոցով: Հետո հրապարակորեն նույն 1932 թ. իր ամենատոր բուլվարային թերթում կոչ բաց թողեց «վերացնել Ստալինին»: Հետո իր գործակալներին փոխադրեց ԽՍՀՄ այդ սպանությունները կազմակերպելու համար, փոխադրեց Ֆաշիստների ու Գեստապոյի աջակցությամբ: Հետո էլ սկսեց նրանց շտապեցնել, իր ուրիշ ագենտների միջոցով հսկելով այդ սպանությունների նախապատրաստության ընթացքին:

Տրոցկիստական–զինովյևական բլոկի մեջ Տրոցկու ունեցած այս առաջատար դերը խոստովանեցին թե՛ Զինովյևը և թե՛ Կամենևը։

Հարցաքննության ժամանակ Զինովյևն ասում էր. «Նույնպես սխալ կլիներ, յեթե յես չընդունեյի, վոր տրոցկիստական–զինովյևական կենտրոնի բոլոր հանցագործությունների մեջ Տրոցկու՝ անձնական դերն ե՛լ ավելի մեծ ե յեղել, քան իմը, վոր Տրոցկու արտասահմանից ուղարկած դիրեկտիվները միացյալ կենտրոնի համար վճռողական նշանակություն ունեյին, վոր մեր բոլոր հանցագործությունների գլխավոր ղեկավարներից ամենագլխավորը Տրոցկին էր»։

Զինովյևն ասում էր, վոր անհատական տեռորին անցնելու անհրաժեշտության մասին Տրոցկու դիրեկտիվը, վորը 1931 թ. ի. Ն. Սմիրնովը բերել էր արտասահմանից, վորտեղ տեղի յեր ունեցել Սմիրնովի՝ հանդիպումը Սեդովի հետ, հենց այդ դիրեկտիվն անվիճելիորեն վճռողական նշանակություն էր ունեցել վոչ միայն տրոցկիստների ու զինովյևականների միավորվելու ու նոր բլոկ կազմակերպելու համար, այլև Համ Կ(բ)Կ–ի ու Խորհրդային պետության ղեկավարների դեմ ուղղակի տեռորի անցնելու համար։

Միացյալ կենտրոնի հենց տրոցկիստական մասն էր արտահայտում տեռորիստական ակտերի նախապատրաստումը, ըստ ամենայնի այդ բանին դրդելով զինովյևականներին և ձգտելով Տրոցկուն [illegible] ամենաարագ ռեալիզացիային։

Ինչպես դատարանում պարզվեց, Զինովյևն [illegible] աշխատում էր արագացնել Կիրովի սպանությունը, դժգոհություն հարուցելով Կոսարևովի—Նիկոլայևի լենինգրադյան խմբի դանդաղկոտությունից, յերկու անգամ իր ագենտներին Լենինգրադ ուղարկելով [illegible] պետքի արագացնեն այդ սպանության նախապատրաստությունը։ [illegible] ստորագրություն հանցագործությունը կատարելու մեջ Զինովյևն [illegible] ասում էր տրոցկիստներից առաջ անցնել։ Այդ հանցագործ դիտավորության շուտափութ իրականացումը նա հայտարարեց վորպես «պատվի գործ» (զինովյևական՞ պատվի)։

Վոչ մի կասկածի յենթակա չե, վոր այդ գաղտնի գործում տրոցկիստների ու զինովյևականների միջև գոյություն ուներ վորոշակի մրցակցություն, կոնկուրենցիա, ախոյանություն։ Զինովյևը դահճության իր վարպետացուցներին դրդում էր սպանությունների, ինքն իսկ դրդված լինելով այդ բանին վոչ միայն սեփական կառավարի չարությունից ու ատելությունից դեպի սոցիալիզմի գործը, դեպի մեր սոցիալիստական շինարարության մեծ առաջնորդն ու ղեկավարները, այլև կառավարի չարությունից դեպի ԽՍՀՄ–ն, դեպի մեր կուսակցությունը, դեպի նրա ԿԿ–ն, դեպի նրա ղեկավարները, դրդված այնպիսի մոլի ու

պրոֆեսիոնալ թշնամու կողմից, վորպիսին էր և հանդիսանում է Տրոցկին:

Հենց այդ չարությունն ու ատելությունն էլ, վոր իրենց էին յենթարկել տրոցկիստական-զինովյեվական, տեռորիստական կենտրոնի վոգեշնչողներին ու կազմակերպիչներին, հանդիսանում էին նրանց տեռորիստական տրամադրությունների, տեռորիստական պլանների ու տեռորիստական հանցագործությունների աղբյուրը:

Այն հիմնական «սկզբունքը», վորի վրա հենվում էր տրոցկիստական-զինովյեվական այդ կազմակերպությունը, ձևակերպված էր Զինովյեվի կողմից, վորը նախնական քննության ժամանակ ասում էր. «Կազմակերպության մեջ լայն կերպով տարածված էր այս ասացվածքը. «Իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է»»: Այսպիսի «սկզբունքը» կանխորոշում էր տրոցկիստների ու զինովյեվականների ունեցած ուղղակի կապի, ուղղակի զոգման անխուսափելիությունը ԽՍՀՄ-ի բոլոր թշնամիների հետ, միևնույն է, արդյոք դրանք սպիտակ-գվարդիական տեռորիստներ, գերմանական ոխրանիկներ, լրտեսներ, թե դիվերսանտներ կլինեն: Այս «սկզբունքն» ինքնին բավական պերճախոս կերպով վկայում է բլոկի ամենալիակատար ու ամենախորն անսկզբունքայնության մասին: Ցավ սա զարմանալի չե: Վո՛չ Տրոցկին, վո՛չ Զինովյեվը, վո՛չ Կամենևը, բլոկի այդ գլխավոր կազմակերպիչները, անցյալում յերբեք աչքի չեն ընկել վորևե սկզբունքայնությամբ: Տրոցկու մինչհեղափոխական քաղաքական կարյերան աչքի յեր ընկնում այդ անսկզբունքայնությամբ: Այդ բանը բազմիցս մատնանշել են թե՛ Լենինը և թե՛ Ստալինը:

Դեռևս 1909 թ. Լենինը գրում էր, վոր Տրոցկին «ամենաստոր կաբյերիստն ու ֆրակցիոներն է»[1]: Լենինը մեկ անգամ չի խարանել Տրոցկուն, անվանելով նրան Յուդուշկա, արհամարհանքով խոսելով Տրոցկու, վորպես «Տուշինոյի թռիչքի» մասին:

Զինովյեվն ու Կամենևը նույնպես յերբեք աչքի չեյին ընկնում դեպի կուսակցությունն ու պրոլետարական հեղափոխությունն իրենց ունեցած նվիրվածությամբ: Փետրվարյան հեղափոխության ժամանակ Կամենևը ծնկաչոք վողջունում էր մեծ իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչին՝ վորպես «Ռուսաստանի քաղաքացու, վորը ժողովրդի կամքին հպատակվելու որինակ ցույց տվեց Սահմանադիր ժողովում»: 1917 թ. հոկտեմբերյան որերին Զինովյեվն ու Կամենևը շտրայկբրեխերներ դուրս յեկան, վորոնք դավաճանեցին հեղափոխությանն ու իշխանությունը գրավելու պատրաստվող բանվոր դասակարգի զինված ապստամբության նախապատրաստման գաղտնիքը մատնեցին բուրժուազիային:

---

[1] «Լենինյան ժողովածու» XXV, եջ 38.

Հետագա ամբողջ ժամանակի ընթացքում, բացառությամբ մի քանի ժամանակաշրջանների, նրանք տարեցտարի, որպես կանոն, քայքայիչ աշխատանք էին տանում ընդդեմ կուսակցության ու կառավարության:

Համ Կ(բ)Կ Համամիութենական XV կոնֆերենցիային տված իր զեկուցման մեջ (1926 թվի նոյեմբերի 1-ին) ընկեր Ստալինը, դիմելով այսպես կոչված նոր ոպոզիցիային, ասում էր «... ձեր բլոկի գոյության ութ կամ վեց ամսվա ընթացքում դուք աշխատում էիք կուսակցությանը հետ քաշ տալ, դեպի «հեղափոխական» ֆրազ, դեպի անսկզբունքայնություն, դուք աշխատում էիք քայքայել կուսակցությունը և հասցնել նրան մինչև կաթվածահարություն, մինչև պառակտում»[1]:

Տրոցկիստների ու զինովյեվականների կողմից 1926—1927 թ. թ. առաջադրած՝ ամենատոր «Կրեմանոյի թեզիսը», այսինքն՝ բացահայտ կոչը դեպի պետական դավաճանություն, բացահայտ կոչը դեպի պարտվողականություն, դեպի ապստամբություն ընդդեմ խորհրդային կառավարության՝ իմպերիալիստների ռազմական հարձակման դեմ-հանդիման, լրացնում է այն դավաճանական գիծը, որը սկսվել է 1926 թ. տրոցկիստական-զինովյեվական բլոկի ընդհատակյա պայքարով և վերջացավ տեռորի կազմակերպությամբ ներկայումս:

Տրոցկիստական-զինովյեվական ընդհատակում Տրոցկու առաջատար դերը դատապարտում հաստատվեց ապառիչ կերպով: Մերկացված լինելով վոչ միայն Գեստապոյի այնպիսի ագենտների ցուցմունքներով, որպիսին են Ն. Լուրյեն, Մ. Լուրյեն, Վ. Ոլբերգը, Բերման-Յուրինը և Ֆրից Դավիդը, այլև նրան առավել նվիրված մարդկանց—Սմիրնովի և Գոլցմանի ցուցմունքներով, Տրոցկին չհամարձակվեց ուղղակի ու կատեգորիկ կերպով ժխտել իր դեմ առաջադրված մեղադրանքը:

Տրոցկիստական-զինովյեվական տեռորիստական կենտրոնի գործի մեղադրական յեզրակացության առթիվ «Արբայտերբլատ» լրագրում տպագրած իր հայտարարության մեջ Տրոցկին պարտավորված էր առաջիորեն հետևյալը հայտարարելու. «Շատ հավանական է, որ գանագան, բավական բազմաթիվ տարրեր, քննադատորեն տրամադրված լինելով, վկայակոչում են իմ անունը, այսինքն՝ իմ դաղափարներն ու յերկերը»:

Մենք այժմ գիտենք, թե այդ ինչ «քննադատորեն տրամադրված» մարդիկ են: Մենք գիտենք, որ դրանք գերմանական ռիբանկայի ու ֆաշիստական գրոհայինների հետ կապված մարդիկ են: Մենք գիտենք,

---

[1] Համ Կ(բ)Կ-ի XV կոնֆերենցիայի սղագրական հաշվետվությունը, էջ 426, Բաք. 1927 թ.

վոր այդ «քննադատորեն տրամադրված» մարդիկ իր ժամանակին, կեղծ անձնագրերով, բրաունինգներով զինված, դանազան ազայթուցիկ ռումբեր պատրաստելու ռեցեպտներով մատակարարված, Տրոցկու կողմից փոխադրված են յեղել ԽՍՀՄ:

Մենք այժմ գիտենք, թե ինչ են արել մեզանում, ԽՍՀՄ-ում, այդ «քննադատորեն տրամադրված» մարդիկ և թե Տրոցկու լեզվով ինչն է կոչվում «քննադատություն»:

Տրոցկուն հաճելի յե իր ստոր ղոչաղների, այդ պրոֆեսիոնալ մարդասպանների ու դավաճանների բանդիտական սխրագործությունները «քննադատություն» անվանել... Տրոցկին, ըստ յերևության, մտածում է պրոցեսում իրեն առաջադրված մեղադրանքներից դատարկ շաղակրատությամբ ազատվել: Տրոցկին, ճիշտ է, սպառնում է հերքել այդ մեղադրանքները: Բայց, ինչպես յերևում է, նա չի շտապում հերքումներով հանդես գալու, թեև պրոցեսը վերջանալու որից բավական ժամանակ է անցել, վորպեսզի կարելի լիներ ուժերը հավաքել ու փորձել հերքելու դատավճռի թեկուզ մեկ կետը: Ինչպես մենք գիտենք, վո՛չ Տրոցկին, վո՛չ էլ նրա ջերմ պաշտպանները դանազան սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների բանակից այդ ուղղությամբ վոչ մի ռեալ քայլ չարին, սահմանափակվելով դատարկ շաղակրատությամբ և ինսինուացիաներով խորհրդային իշխանության, ՆԳԺԿ, դատախազության ու խորհրդային դատարանի հասցեին: Ցավ իրոք, կարծես հրամանով, թե՛ սոցիալ-դեմոկրատական մամուլը, թե՛ ֆաշիստական մամուլը և թե՛ այնպիսի տպագիր որգաններ, ինչպես լեհական «Նաշ պչեգլոնդ» լրագիրը (հրեական բուրժուազիայի որգանը), ինչպես ֆրանսական աջ «Ոլրդր»-ն ու «Մաթեն»-ը, մինչև այժմ էլ զրպարտչական բնույթի դատարկ շաղակրատությամբ են բավականանում, չհամարձակվելով և ի վիճակի չլինելով արտասանելու վորևե իրոք քննադատական բառ այն մեղադրանքների առթիվ, վորոնք առաջադրված են ընդդեմ տրոցկիստական-զինովյեվական կենտրոնի մասնակիցների:

Դատական պրոցեսն ոգոստոսի 19—24-ը լիակատար կերպով մերկացրեց Տրոցկու առաջատար դերը՝ ընդդեմ Համ Կ(բ)Կ և խորհրդային կառավարության ղեկավարների տեռորիստական ակտեր կազմակերպելու մեջ: Տրոցկու այդ դերի մասին Գերագույն դատարանն իր հեղինակավոր խոսքն ասաց, խորհրդային տրենքի պահանջներին համապատասխան ճիշտ և կատեգորիկ կերպով ձևակերպեց իր վորոշումը՝ Տրոցկուն և նրա վորդի Սեդովին, ԽՍՀՄ Միության տերիտորիայում բռնելու դեպքում, Ռազմական տրիբունալին հանձնելու մասին:

Տրոցկիստական-զինովյեվական միացյալ կենտրոնի Մոսկվայի

պրոցեսում Զինովյեվի ու Կամենևի կողքին գատապարտյալների նրատարանն զբաղեցրել էր գերմանական լրտեսների ու հետախույզների մի ամբողջ խումբ. Վ. Ոլբերգ, յերկու Լուբյաններ, Բերման-Յուրին, Ֆրից Դավիդ—ահա «քննադատորեն տրամադրված» մարդիկ, վորոնք վերջին 2—3 տարվա ընթացքում արտասահմանից փոխադրվել էին ԽՍՀՄ տեռորիստական ակտեր կատարելու համար:

Վ. Ոլբերգ—Տրոցկու վորդու՝ Սեդովի անձնական բարեկամը, ակտիվ տրոցկիստ, 1930 թ. սկսած բազմիցս կատարել է Տրոցկու անձնական հանձնարարությունները տրոցկիստական կազմակերպության դծով և հանդիսանում է նրա եմիսսարը Գերմանիայում: Վորպես Տրոցկու գործակալ, նա աշխատում էր տրոցկիստական-զինովյեվական կազմակերպության մեջ Բեռլինում և միաժամանակ ԽՍՀՄ-ում գտնվող տրոցկիստական խմբերի հետ անընդհատ կապ պահպանելու դծով, իրականացնելով այդ կապը Սեդովից ստացած հայտերով ու հասցեներով:

Բնորոշ է, վոր Վ. Ոլբերգը 1933 թվից սկսած յերբեք անգամ անցել է ԽՍՀՄ, միշտ ելոգտվելով կեղծ անձնագրերով՝ կա՛մ մի ինչ-վոր Ֆրեդիխմանի անունով, կա՛մ իր անունով, կամ վորպես Գոնդուրաս հանրապետության հպատակ: Հարկավոր է նշել մի հետաքրքիր մանրամասնություն. գոնդուրասյան անձնագիրը Վ. Ոլբերգը ձեռք էր բերել Բեռլինի գոնդուրասյան դեսպանի միջոցով, Պրուսիայի գերմանական վոստիկանության գործակալ Տուկալեվսկու միջնորդությամբ և Սեդովի կողմից Վ. Ոլբերգի տրամադրության տակ դրված միջոցներով:

Ոլբերգի կապը Տուկալեվսկու հետ հավատալեց Տուկալեվսկու այն այցելությանը, վորը հայտնաբերվել էր պայմանավորված հասցեյով Ստալինաբաղ ուղարկված նամակագրության մեջ: Տուկալեվսկու հետ Վ. Ոլբերգի ունեցած հանցավոր կապը դատարանում լիովին ապացուցվեց: Այս կապի մերկացումով անհանգստացած՝ Տուկալեվսկին արդեն դատական քննության յեղրակացությունից հետո ԽՍՀՄ-ի դատախազի անունով մի հեռագիր է ուղարկում, վորի մեջ բողոքում է Վ. Ոլբերգի ցուցմունքների դեմ, բայց և միևնույն ժամանակ խոստովանում է, վոր ինքը Վ. Ոլբերգի՝ վորպես սլավոնական գրաղարանի, վորի դիրեկտորն էր Տուկալեվսկին, հաճախորդի հետ իրոք ծանոթ և յեղել: Այսպիսով, Տուկալեվսկու հեռագիրը մի ավելորդ անգամ հաստատում է Վ. Ոլբերգի ցուցմունքների ճշտությունն ու իսկությունը՝ Տուկալեվսկու հետ ունեցած իր կապի վերաբերմամբ:

Տուկալեվսկին, հավանորեն, հաշվի չէր առել այն հանգամանքը, վոր Վ. Ոլբերգի հետ իր ծանոթ լինելու խոստովանությունը, կոնսպիրատիվ նամակագրության հետ միասին բռնված «թ. ք. 1936» ծածկագրով՝ Տուկալեվսկու այցելության դեպքում, բավական համոզիչ ապացույց և ծառայում այն իրական հարաբերություն-

ների համար, վոր գոյություն ունեին Վ. Ոլբերգի և Տուկալեվսկու միջև, և ե՛լ ավելի մեծ հավանականություն է տալիս այն բացատրություններին, վոր տալիս էր Վ. Ոլբերգը դատարանում այդ հարաբերությունների առթիվ:

Տուկալեվսկու և իր յեղբայր Պաուլ Ոլբերգի միջոցով Վալենտին Ոլբերգը կապվեց Գեստապոյի հետ, միաժամանակ կապված լինելով Տրոցկու հետ Սեդովի միջոցով: Ոլբերգը Տրոցկու գործակալն է, Գեստապոյի գործակալը: Նա կապված է Գեստապոյի հետ, Ֆաշիստների հետ: Նա կապված է նրանց հետ Սեդովի միջոցով: Նա, Տրոցկու կողմից սահմանի այն կողմից հատկապես ԽՍՀՄ փոխադրված այդ տեռորիստը, վորը յերեք անգամ փորձել էր «բնակություն հաստատել» ԽՍՀՄ-ում իր չարամիտ հանցագործությունը կազմակերպելու համար և համառորեն ոգտագործել էր իր կապերը տրոցկիստների հետ Մոսկվայում և Գորկիում, մեկն էր այն մարդկանցից, վորոնք առավել մոտ էին Տրոցկու վորդու—Սեդովի հետ:

Տրոցկու կողմից ԽՍՀՄ փոխադրված բոլոր տեռորիստներից Վ. Ոլբերգի Ֆիդուրան հանդիսանում է համարյա թե ամենից կոլորիտային ու ամենից բնորոշը: Չե՞ վոր Վ. Ոլբերգը պատահական մարդ չէ տրոցկիստական կազմակերպության մեջ: Դա մի տրոցկիստ է, վորն իր քաղաքական կարյերան սկսել է 1927 թվականին: Նա անմիջականորեն կապված է յեղել Տրոցկու հետ, վորի հետ պահպանել է կանոնավոր դրավոր կապ, և Լ. Սեդովի (Տրոցկու վորդու) հետ, վորը նրան մի շարք կազմակերպական հանձնարարություններ էր տալիս թե՛ Գերմանիայում և թե՛ ԽՍՀՄ-ում: Այս կազրային տրոցկիստը, վորը չփվում էր տրոցկիստական շրջանների բուն խորքերի հետ, ամենից ավելի մոտ էր կանգնած տրոցկիստական կենտրոնին, միաժամանակ կապված էր մի շարք Ֆաշիստների ու գերմանական վոստիկանության ագենտների հետ: Նա, որինակ, սերտ կապված էր Վոմն Ֆրիդմանի հետ—նույնպես տրոցկիստ և նույնպես գերմանական վոստիկանության ագենտ: Այդ կապերի վրա Ոլբերգը նայում էր վորպես միանգամայն բնական ու նորմալ ծանոթություններ: Նա ինքը հաճախակի տեսնվում էր Գեստապոյի չինովնիկների հետ, զրուցելով նրանց հետ իր դեպի Մոսկվա կատարած ճամբորդությունների մասին և տեռորիստական ակտերի նախապատրաստման պլանների մասին:

ԽՍՀ Միության դատախազության մեջ հարցաքննության ժամանակ Վ. Ոլբերգն ուղղակի հայտարարեց, վոր իր կապը գերմանական վոստիկանության հետ, Գեստապոյի հետ ամենևին էլ բացառություն չէ, վորպեսզի կարելի լիներ այդ կապի մասին խոսել վորպես իր մի ինչ-վոր անձնական մեղսագործության մասին:

«Դա,—հայտարարեց Վ. Ոլբերգը,—տրոցկիստների գիծն էր՝ հա-

մաքառումներում Տրոցկու այն դիրեկտիվի, որ տրված էր Սեդովի միջոցով։ Կապն ընթանում էր՝ ԽՍՀՄ-ում Համ Կ(բ)Կ-ի ու խորհրդային կառավարության ղեկավարների դեմ տեռոր կազմակերպելու դծով»։

Գեստապոյի հետ ունեցած Վ. Ոլբերգի կապի մասին հայտնի չեր Սեդովին, իսկ Սեդովի միջոցով, հասկանալի է, նաև Տրոցկուն։

Վ. Ոլբերգի այս ցուցմունքը լիովին հաստատեց մի ուրիշ դործով ձերբակալված նրա յեղբայր Պաուլ Ոլբերգը ևս, որը նույնպես գերմանական դաղտնի վոստիկանության դործակալ էր։ Հենց Պ. Ոլբերգն էր կապում Վ. Ոլբերգին Գեստապոյի հետ։

«Վալենտին Ոլբերգն ինձ հաղորդեց,—հայտարարեց Պաուլ Ոլբերգը ս.թ. մայիսի 16-ի հարցաքննության ժամանակ,—որ գերմանական դաղտնի վոստիկանության մի աշխատակցի կողմից իրեն հայտարարված էր, թե տեռորիստական ակտի նախապատրաստմանն ու կատարմանը մասնակցող բոլոր անձերին ապաստան կտրվի Գերմանիայում»։

Մյուս տեռորիստը—Ռուտ Ֆիշեր-Մասլովի խմբի անդամ Նաթան Լուրյեն—մտել էր տեռորիստական այն խմբի մեջ, որը կազմակերպված էր 1932 թ. նացիոնալ-սոցիալիստական կուսակցության ակտիվ անդամի՝ ռասերիկրյա մասնագետի անվան տակ հատուկ կերպով ԽՍՀՄ փոխադրված Ֆրանց Վայցի կողմից։

1932 թ. մայիսին «Գրանդ-Ոտել» հյուրանոցում տեղի չեր ունեցել Ն. Լուրյեյի տեսակցությունը Ֆրանց Վայցի և տեռորիստական խմբի ելի մի քանի անդամների հետ։ Այս խորհրդակցության մեջ առանձնապես ակտիվ դեր էր խաղում հենց այդ Ֆրանց Վայցը, որը հավաքվածներին ապացուցում էր այնպիսի «հերոսական ակտեր» կատարելու անհրաժեշտությունը, ինչպես Համկ(բ)Կ-ի ու Խորհրդային պետության ղեկավարների սպանությունը։

Զարդացնելով տեռորիստական ակտերի կատարման իր պլանը, Ֆրանց Վայցն այդ խորհրդակցության ժամանակ տվեց մի շարք գրավոր ցուցումներ, որոնք հետագայում լիովին ոգտագործվեցին այդ խմբի անդամների, մասնավորապես Նաթան Լուրյեյի կողմից։ Բնորոշ է, որ ինչպես Ֆրանց Վայցի պլանը, այնպես և տեռորիստական ակտեր կատարելու այն պլանները, որոնք մշակված էին Վ. Ոլբերգի, Բեման-Յուբինի և Ֆրից Դավիդի (Ի. Ի. Կրուդլյանսկու) կողմից, տեխնիկական կարևորագույն մանրամասների մեջ իրար համապատասխանում էին, որպիսի հանգամանքը, անտարակույս, վկայում էր նրանց սկզբնաղբյուրի ընդհանրության մասին, վկայում էր այն մասին, որ այդ պլանների հիմնական, յեթե կարելի է այսպես արտահայտվել, տեխնիկական իդեաները տրված էին միևնույն կենտրոնից, մշակված էին միևնույն տեղում, դուրս էին յեկել ընդհատակյա

միևնույն շտաբից։ Այդ շտաբը, անտարակույս, Տրոցկու և Գեստապոյի սև կաբինետներն էին։

Չէ՞ վոր Վ. Ոլբերգը, Մ. Լուբյեն, Ն. Լուբյեն, Բերման-Յուրինը և Ֆրանց Դավիդը ջուր էին խմում թե՛ մեկ և թե՛ մյուս աղբյուրից։ Նրանց տեռորիստական պլանները պատրաստվում էին մի տեղում։ Սրանց համար կոնսպիրատիվ հայտեր էին հայթայթում Տրոցկին—Սեդովը և միաժամանակ նրանք՝ ակտիվ մասնակցությամբ Վայցերի, Տուկաչևսկիների և Հիմլերի (այն ժամանակ բեռլինյան «Ս. Ս.»-ի, սև ռեյտաններիների, ղեկավարը, այժմ՝ Գեստապոյի ղեկավարը)։ Տրոցկու և Հիմլերի միջև, տրոցկիստական ընդհատակի և քաղաքական բանտերի միջև, տրոցկիստների և Ֆաշիստների միջև սահմանները ջնջվել էին վերջնականապես ու լիակատար կերպով։

Տրոցկիստական տեռորիստները տեռորի մասին դիրեկտիվներ ու բարեկամական բարի ճանապարհ էին ստանում միաժամանակ և Գեստապոյից։ Ընկ. Կ. Ցե. Վորոշիլովի դեմ մահափորձ կազմակերպելու առթիվ Նաթան Լուբյեն նախնական քննության ժամանակ ասում էր. «Մենք յենթադրում էինք հետևել և սպանել ընկ. Վորոշիլովին... Այդ առաջադրությունն յես ստացել էի գերմանական ինժեներ արխիտեկտոր, Գերմանիայի նացիոնալ-սոցիալիստական կուսակցության անդամ Վայց Ֆրանցից, Հիմլերի ներկայացուցչից»։

Ն. Լուբյեին չեր վրդովեցնում այդ կապը՝ գերմանական Ֆաշիզմի դրծակալի հետ։ Ն. Լուբյեն դատարանում անկեղծ ցինիզմով հայտարարեց. «Ցես այն յեզրակացությանն եմ յեկել, վոր յեթե տրոցկիստներն անցել են զինված պայքարի մեթոդներին, ապա այդ իր տրամաբանությունն ունի, այսինքն, յեթե Ֆաշիստը տեռորի համար առաջարկում է իր ծառայությունները, ապա այդ ծառայություններից պետք է ոգտվել։ Ցես շարունակեցի կապը Ֆրանց Վայցի հետ և աշխատում էի նրա պրակտիկ ղեկավարության տակ»։

Ո՞վ է այդ Նաթան Լուբյեն։ Բնիկ վարշավացի, այդ սրիկան 1917—1918 թ. թ. հակահեղափոխական «Դեխոլուց» կազմակերպության անդամ էր։ 1927 թվականից՝ տրոցկիստական կազմակերպության անդամ։ 1929 թ. ավարտել է Բեռլինի համալսարանի բժշկական ֆակուլտետը, մեխանիկորեն դուրս է յեկել կուսակցությունից և 1932 թ. ուղևորվել Մոսկվա՝ վորպես Ֆաշիստական վոստիկանության ու Տրոցկու կողմից հավաքագրված մասնագետ տեռորիստական ակտեր կազմակերպելու գործում։ Նա միանգամից կապվում է Ֆրանց Վայցի հետ և ակտիվորեն նախապատրաստում է իր դիվային, ամենաստոր պլանը, անձամբ և իր գործակալների միջոցով մահափորձ պատրաստելով ընկ. ընկ. Կագանովիչի, Որջոնիկիձեյի ու Ժդանովի դեմ։

Իր հանցավոր գործունեությամբ Ս. Ն. Լուբյեյի հետ կոնտակտի

մեջ և դառնվում նրան ադգանվանակից Մոիսեյ Լուրյեն: Սա «գիտնական» և, պատմաբան, վորը մի ուրիշ, համանման գործով ձերբակալված տրոցկիստ Ֆրիդլյանդի միջոցով խցկվում և Մոսկվայի համալսարանը, վորտեղ տեղավորվում և վորպես պատմության «պրոֆեսոր»: Մոիսեյ Լուրյեն ռուտֆիշերական եր: 1933 թ. գալով ԽՍՀՄ, նա խիստ սերտ կապվում և Զինովյեվի հետ: Զինովյեվի հետ իր ունեցած հանդիպումներից մեկի ժամանակ, 1934 թ., Մ. Լուրյեն Զինովյեվին ինֆորմացիա յե տալիս Տրոցկու հանձնարարության մասին և Ֆաշիստների ու Գեստապոյի հետ ունեցած իր կապի մասին:

Զինովյեվը հավանողաբար և վերաբերվում այդ հաղորդմանն ու այդ կապին: Նա նույնիսկ անհրաժեշտ և համարում խրախուսել «պրոֆեսորին», հիշեցնելով նրան այն կապի մասին, վոր ուներ Լասսալը Բիսմարկի հետ: Նա Մ. Լուրյեին խորհուրդ և տալիս չքաշվել այդ կապից և հանգիստ կերպով նայել այդ կապին պատմաբանի աչքերով:

Իմիջի այլոց, Զինովյեվն իզուր եր անհանգստանում. այնպիսիները, ինչպես Մ. Լուրյեն և, այդ փոքրիկ մարդուկը չպիկի մաներներով ու շուրերի արագավազ աչիկներով, նման բաներից չեն քաշվում: Իզո՛ւր նախազգուշացում:

Դատարանում Զինովյեվը փորձում եր ամաչկոտ դերը ընդունել. սարսափելի՛ յե, երբ թե, վոր ինքն ընկել և այդպիսի անհաճո ընկերակցության մեջ: Բայց այդ ընկերակցությունն ընտրել եր հենց ինքը Զինովյեվը, և ընդամին ընտրել եր դատավարությունից դեռևս շատ առաջ, հրավիրելով Մ. Լուրյեին իր բնակարանը և նրա հետ «պատմա-փիլիսոփայական» զրույցներ անելով՝ վոստիկանության ու Ֆաշիստների հետ կապ ունենալու թույլատրելիության թեմայի շուրջը... Ֆրանց Վայցի Գերմանիա գնալուց հետո Նաթան Լուրյեյի տեռորիստական խմբի ղեկավար մնաց Մ. Լուրյեն:

Ֆրանց Վայցը նույնքան լավ հայտնի յեր Մոիսեյ Լուրյեյին, վորքան և Նաթան Լուրյեյին: Սա ամուր և սերտ շաղկապված մի ընկերակցություն եր ֆաշիստական-տրոցկիստական մարդասպաններից, վորոնք «իմիջի այլոց» զբաղվում եյին բժշկականությամբ, պատմությամբ և ճարտարապետությամբ. ԽՍՀՄ-ում մնալու նրանց գլխավոր նպատակը՝ մեր կուսակցության ու մեր կառավարության ղեկավարների սպանության կազմակերպման մասին Տրոցկու և Գեստապոյի դաղտնի հրամաններն ի կատար ածելն եր:

Տրոցկու և Գեստապոյի կողմից ֆաշիզմի ու տրոցկիզմի դործակալների «համատեղության կարգով» ԽՍՀՄ փոխադրելու հետ զուգահեռ Տրոցկին ինքնուրույն կերպով ել ԽՍՀՄ եր փոխադրում իր մարտիկներին՝ միևնույն հանցագործ առաջադրություններով:

Այդպիսի մարտիկներից մեկն եր Բերման-Յուրինը, վորը ԽՍՀՄ եր

յեկել 1933 թ. մարտին և հետաքաքրվել եր Մոսկվայի լրագրերից մեկում՝ վորպես խմբագիր-կոնսուլտանտ։ Այդ «խմբագիրը» Մոսկվա հասնելուն պես իսկույն փնտրում-գտնում է վոմն Ֆրանց Դավիդի, վորը միաժամանակ, բայց ըստ ուրիշ հայտի, Տրոցկու կողմից նույնպես փոխադրված եր Մոսկվա, և սրանք միատեղ սկսում են մահափորձ նախապատրաստել ընկեր Ստալինի դեմ։

Բերման-Յուրինը և Ֆրից Դավիդը տրոցկիստների մոտ պատահական և հեռին մարդիկ չեյին։

Բերման-Յուրինը սերտ կապված եր վոչ միայն գերմանական մի շարք տրոցկիստների հետ (որինակ՝ Ալֆրեդ Կունտի հետ), այլև մոտ եր կանգնած Տրոցկուն ու Սեդովին, վորոնց հետ նրան ծանոթացրել եր տրոցկիստ Գրիլևիչը, տրոցկիստական «Ոպոզիցիայի բյուլետեն»-ի հրատարակիչը։

Տրոցկու և Սեդովի հետ ունեցած իր կապի մասին Բերման-Յուրինը թե՛ նախնական և թե՛ դատական քննության ժամանակ սպառիչ ցուցմունքներ տվեց։

«Սեդովի հետ,—ցուցմունք տվեց դատարանում Բերման-Յուրինը,—յես մի շարք զրույցներ եմ ունեցել։ Սեդովը սիստեմատիկաբար աշխատում եր համոզել ինձ և համոզեց, վոր պայքարը կոմունիստական կուսակցության դեմ—դա պայքար է Ստալինի դեմ։ 1931 թվի վերջին Սեդովը կանչեց ինձ ու հարցրեց, թե արդյոք յես չեմ ճանաչում մի հուսալի, հավատարիմ մարդու—գերմանացու, վորը կարողանա կատարել մի կարևոր հանձնարարություն՝ կապված Մոսկվա գնալու հետ։ Յես անվանեցի Ալֆրեդ Կունտին, վորին ճանաչում եյի վորպես ամուր տրոցկիստի»։

Սեդովի առաջարկությամբ Բերման-Յուրինը տեսնվել է Ալֆրեդ Կունտի հետ, հաղորդել նրան Սեդովի հետ ունեցած խոսակցությունը և ստացել նրա համաձայնությունը՝ Մոսկվա գնալու առթիվ։ Առաջադրությունը հետևյալն է յեղել. պետք եր Մոսկվա տանել վորոշակի հայտով յերկու փաստաթուղթ Տրոցկուց, այդ թվում Տրոցկու դիրեկտիվը տեռորիստական ընդհատակի խնդիրների մասին ԽՍՀՄ-ում։ Մոսկվայում Ալֆրեդ Կունտը պետք է կապվեր անձամբ Սմիրնովի հետ և հանձներ նրան այդ յերկու փաստաթուղթը։

Այդ ի՞նչ փաստաթղթեր եյին։ Այդ փաստաթղթերից մեկում Տրոցկին շարադրում եր իր նկատառումները միջազգային դրության մասին։ Յերկրորդ փաստաթուղթը, վոր գրված եր Սեդովի ձեռքով, իրենից ներկայացնում եր Տրոցկու դիրեկտիվ դիրքավորումների շարադրանքը՝ տրոցկիստական ընդհատակի խնդիրների և ԽՍՀՄ-ում մղելիք հետագա պայքարի մեթոդների վերաբերմամբ։

«Այնտեղ ասվում եր,—դատարանում ցուցմունք եր տալիս Բեր-

ման–Ցուրինը,—վոր պետք է պատրաստվել պայքարի վճռական ու ծայրահեղ մեթոդներին անցնելուն և վոր այդ տեսանկյունով էլ հենց պետք է ընտրել վճռական մարդիկ, վորոնք համաձայն լինեն Տրոցկու դիրքավորումներին: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել, ասվում եր նամակում, Համ Կ(բ)Կ–ի անդամ–տրոցկիստների վրա, վորոնք վարկաբեկված չեն կուսակցության շարքերում՝ ինչպես տրոցկիստները: Կազմակերպությունը պետք է կառուցել խստագույն կոնսպիրացիայի սկզբունքով, փոքր խմբերով և այն էլ իրար հետ չկապված, վորպեսզի մի խմբի տապալման դեպքում չտապալվի ամբողջ կազմակերպությունը»:

Մենք գիտենք, վոր տրոցկիստական ընդհատակը լիովին յուրացրել եր իր պարագլխի այս դիրքավորումները: Տրոցկիստական կազմակերպություններն իրոք յուրացրել են խստագույն կոնսպիրացիան, իրենց ներքին հարաբերությունները լիովին կառուցել են «շղթայի» սխեմայի համաձայն, ամեն կերպ պահպանում եյին կոնսպիրացված ու Համ Կ(բ)Կ–ի շարքերում մնացած իրենց հանցակիցներին:

Տրոցկիստների այսպիսի կոնսպիրացված, մինչև վերջին բոլշևիկում պահպանված ներկայացուցիչներից մեկին մենք տեսանք պրոցեսում ս. թ. ոգոստոսի 19—24–ին ի դեմս մեղադրյալ Գոլցմանի, վորը կարողացել եր բավական յերկար ժամանակ հաջողությամբ քողարկել իր մասնակցությունը տրոցկիստական ընդհատակին: Այդ ժամանակի ընթացքում Գոլցմանը բավական հաջող կերպով կատարել եր Տրոցկու և Ի. Ն. Սմիրնովի միջև կապ պահպանողի դերը: Հենց դրա համար էլ Սմիրնովն այնքան խնամքով պահպանում եր Գոլցմանին ամեն տեսակի «կողմնակի» (այսինքն՝ մի այլ, քան ինքը Սմիրնովն եր) տրոցկիստական կապերից և պահում եր նրան այնպիսի խորը ընդհատակում, վոր տրոցկիստական կազմակերպությանը նրա մասնակից լինելու մասին չգիտեյին այդ ընդհատակի նույնիսկ այնպիսի պարագլուխներ, ինչպես Մրաչկովսկին ու Տեր–Վահանյանը:

Գոդարկման արվեստին՝ բազմապատկած յերկերեսանությամբ, խաբեությամբ ու նենգությամբ, տրոցկիստական–զինովյեվական ընդհատակը տիրապետում եր մեծ վարպետությամբ, վորը, սակայն, չբերկեց նրան լիակատար ու դաժան ջախջախումից ու խայտառակ վախճանից:

Բերման–Ցուրինը ԽՍՀՄ յեկավ վորպես Տրոցկու «հատուկ հավատարմատար անձ»: Բերման–Ցուրինը ԽՍՀՄ յեկավ Տրոցկու կողմից ուժգին ագիտացիայի յենթարկված՝ տեռորիստական ուղղությամբ:

Ահա թե ինչ եր ասում Բերման–Ցուրինը Տրոցկու հետ 1932 թ. նոյեմբերին տեղի ունեցած իր դրույցների մասին.

«Ցեռ նրա հետ (Տրոցկու: —Ա. Վ.),—դատարանում ցուցմունք եր

տալիս Բերման–Յուրինը,—յերկու տեսակցություն եմ ունեցել: Ամենից առաջ նա սկսեց ինձ շոշափել՝ անցյալում իմ կատարած աշխատանքի տեսակետից: Հարցրեց, թե ինչու յես անցա տրոցկիզմի դիրքին: Յես նրան շատ մանրամասն ինֆորմացիա տվեցի: Ապա Տրոցկին անցավ խորհրդային գործերին: Տրոցկին ասում եր. հիմնական հարցը—դա Ստալինի հարցն է: Ստալինին ֆիզիկապես կարելի յե վոչնչացնել: Նա ասում եր, վոր պայքարի այլ մեթոդներ այժմ իրական չեն: Նա ասում եր, վոր դրա համար անհրաժեշտ են մարդիկ, վորոնք ամեն բանի պատրաստ լինեյին, վորոնք գնային անձնազոհության ի սեր այդ, ինչպես նա յեր արտահայտվում, պատմական խնդրի»:

Բերման–Յուրինը, պատմելով այդ զրույցի մասին, ընդգծում եր, թե ինչպիսի անասելի ատելությամբ ու չարությամբ եր ասում այդ բանը Տրոցկին: Ստոր բանդիտը չեր բավականանում իր ձեռնասուններին Համ Կ(բ)Կ–ի ու Խորհրդային պետության ղեկավարներին սպանելու դրդելով,—նա փորձում եր «թեորիապես» ել հիմնավորել անհատական տեռորին անցնելու անհրաժեշտությունը:

Կորցնելով իր հանցագործությունների հետքերը, Տրոցկին հրաժարիմք ե կարդում տեռորին ու խորհրդային իշխանության կողմից հանցանքի վայրում բռնված իր տեռորիստներին, վկայակոչելով իր «մարքսիստական» հայացքների անհամատեղելիությունն անհատական տեռորի հետ:

Բայց մի՞թե մարքսիզմի հետ համատեղելի յե Տրոցկու այն դավաճանական «աշխատանքը», վորի համար մեր յերկրի աշխատավոր մասսաները նրան դուրս շպրտեցին մեր պետության շեմքից այն կողմը: Մի՞թե մարքսիզմի հետ համատեղելի յե Տրոցկու աշխատակցությունը նորվեգիական ֆաշիստական «Տիդենս Տեգն» լրագրում: Մի՞թե չկան «մարքսիզմի» հետ՝ Տրոցկու նման Լիբերդանների, Նոսկեների, Ռուտ Ֆիշերների, Ուրբանների, Դորիոների և այլն և այլն տիպի «մարքսիստների» բացահայտ ֆաշիստական սպիտակ–գվարդիական գործունեության այդպիսի «համատեղելիության» որինակներ:

Բերման–Յուրինը և Ֆրից Դավիդը դատարանում լիովին մերկացրին Տրոցկու տեռորիզմը, Տրոցկու, վորը յերբեմն հրաժարվել ե մարքսիզմից ու դեռևս շատ տարիներ առաջ դավաճանել մարքսիզմին:

Բայց Տրոցկին չսահմանափակվեց Բերման–Յուրինին լոկ միայն հարդարելով, լոկ միայն ապիտացիա անելով: Նրա աջ ձեռքը—նրա վորդի Սեդովը ԽՍՀՄ մեկնող Բերման–Յուրինին մատակարարեց թե՛ ատուլդ ու լիովին պրակտիկ հրահանգներ, թե՛ հայտեր, թե՛ ծածկագիր—մի խոսքով՝ ամեն բան, ինչ պետք և այդպիսի դեպքերում:

Նման հրահանգավորում ստացավ Տրոցկուց ու Սեդովից նաև Ֆրից

Դավիդը (Ի. Ի. Կրուգլյանսկին)։ Ֆրից Դավիդը նույնպես, ինչպես և Բերման-Յուրինը, ԽՍՀՄ ուղարկվելուց առաջ բերվեց Կոպենհագեն՝ Տրոցկու մոտ համապատասխան մշակման յենթարկվելու ու «վոգելչընչ-վելու» համար։

Ֆրից Դավիդին նույնպես, ինչպես և Բերման-Յուրինին, Տրոցկին տվեց Ֆրազներ ասաց այն «պատմական միսիայի» մասին, որ նա պետք է վերցներ իր վրա, գնալով ԽՍՀՄ Համ Կ(բ)Կ-ի և խորհրդային կառավարության ղեկավարների դեմ տեռոր կատարելու։

«Դուք հասկանում եք,—ասում էր Տրոցկին Ֆրից Դավիդին,—որ խոսքը ձեր մասին չէ և վոչ էլ ձեր կյանքի մասին. խոսքը այն մեծ պատմական միսիայի մասին է, որ դուք պիտի կատարեք և որը համաշխարհային խոշոր նշանակություն ունի»։

Բայց Տրոցկին ճոռոմաբան չէ։ Նա «գործի» մարդ է, կեղտոտ, ստոր, արյունալի «գործի» մարդ։ Նա մանրամասնորեն հրահանգում է իր գործակալներին, տալով նրանց խրատներ, թե ինչպես խուսափել կործանումից ու կոնսպիրացիան բացվելուց։ Նա իր գործակալներից պահանջում է զգուշություն ու շրջահայեցողություն։ Վոչ մի ավելորդ կապ, վոչ մի աղմուկ։ Լիակատար լռություն։ Նույնիսկ ձերբակալվելիս վոչ մի ծպտուն չհանել դեպի տրոցկիստական կազմակերպությունն ունեցած իր վերաբերմունքի մասին։ Նա ապաստ մարդասպանների հետ նշանարան է սահմանում։ Նա նրանց մատակարարում է կեղծ անձնագրեր, հրահանգավորում է, մարդում, սովորեցնում և, հաստատվելով, որ ամեն բան կարգին է, նրանց փոխադրում է, վերջապես, ԽՍՀՄ... «գործի»...

Այդ քիչ է։ Տրոցկին անհամբերությունից վառվում է։ Նա մարդասպանների չտապեցնում է։ Ինչպես որ Զինովյևը չտապեցնում է Կիրովի սպանությունը, իր տուրհանդակներին ուղարկելով Լենինգրադ ստուգելու, թե որքան լենինգրադյան բանդան հաջող և նախապատրաստում իր վոճրագործ հանցագործությունը, այնպես էլ Տրոցկին, անհամբերությունից մաշվելով, Բերման-Յուրինի ու Ֆրից Դավիդի հետևից իր տուրհանդակներին քշում է ԽՍՀՄ ստուգելու համար, թե ինչ են անում ԽՍՀՄ-ում այդ տեռորիստները և ինչու յեն դանդաղում կատարելու իրենց տրված հանձնարարությունները։

1935 թ. նոյեմբերին, յերեկոյան «Լյուքս» հյուրանոցը յեկավ, որտեղ իջել էր Ֆրից Դավիդը (Ի. Ի. Կրուգլյանսկին), մի մարդ, որն ասաց պայմանավորված նշանաբանը։ Ֆրից Դավիդն էլ նույնն տրեց։ Բանից դուրս յեկավ, որ այդ մարդը յեկել էր Տրոցկու մոտից։ Սինգալևիչ, թե Սինգալովսկի ազգանունով։ Այս մարդու հետ Ֆրից Դավիդի խոսակցությունը շատ կարճ յեղավ։ Հյուրը հարցրեց

միայն մի բան. ինչո՞ւ ի կատար չի ածված տեռորիստական ակտը, ինչո՞ւ իրագործված չէ Տրոցկու հանձնարարությունը:

1936 թ. մայիսի սկզբին այս պատմությունը կրկնվեց. յեկավ նոր տերհանդակ, վոմն Ալֆրեդ, վորը Տրոցկու անունից հետաքրքրվեց միայն մի բանով. յե՞րբ կկատարվի Տրոցկու հանձնարարությունն ընկեր Ստալինին սպանելու մասին:

Այսպես եր գործում Տրոցկին, վոչ միայն դրդելով սպանելու մեր ղեկավարներին, վոչ միայն «թեորետիկությունն» անելով «մարքսիստների» համար անհատական տեռորի ընդունելության առթիվ, այլև պրակտիկորեն ղեկավարելով այդ տեռորիստական ակտերի նախապատրաստումը, ստուգելով այդ նախապատրաստման ընթացքը, աշխատելով ինչ եվ վոր լինի իր չարագործ, ստոր մտադրությունը հասցնելու մինչև վերջ:

Խորհրդային իշխանությունը քանիցս թաղող, պրոլետարական հեղափոխության ստեղծագործ գործերին չհավատացող, սոցիալիստական հաղթանակի հնարավորությունը մի յերկրում և մանավանդ ԽՍՀՄ-ում միշտ և կատեգորիկ կերպով ժխտող այդ իսկական ու պատենտավոր շուլերը, Տրոցկին, տեռորի հանեց իր վերջին հետևորդներին՝ ձեռք-ձեռքի տված Ֆաշիստների ու Գեստապոյի հետ: Դավաճանության ուղին ավարտված է...

Կանգնելով անհատական տեռորի ուղու վրա և դլոբվելով մինչև ուղղակի կապը վոստիկանության ու Ֆաշիզմի հետ, տրոցկիստական-զինովյեվական բանդան յերկերեսանիության, խաբեության ու ցերդքմնազանցության արվեստը չեր կարող չհասցնել վերջին ծայր ու ամենանուրբ կատարելության:

Զինովյեվն յուրայինների շրջանում պարծենում եր այդ «արվեստով», վորը թե՛ ինքը և թե՛ Կամենևն իրոք վոր հասցրել էին վիրտուոզության: Լրագրական կեղծավոր հոդվածներ՝ համակված քաղցրախոսությամբ ալեկուլությամբ ու փառաբանությամբ սոցիալիզմի հաջողությունների առթիվ. զղջման ճառեր—նույնիսկ «արտասուքով», ինչպես ցինիկաբար բարեհաճեց կատակել Կամենևը՝ կուսակցության XVII համագումարում Զինովյեվի արտասանած ճառի առթիվ. ըստամենայնի՝ ճշտահացում կուսակցությանը նվիրված լինելու մասին—և միաժամանակ զազանի խորհրդակցություններ կոնսպիրատիվ բնակարաններում ու մեր կուսակցության ղեկավարներին սպանելու մանրամասն պլանների մշակում:

Պրոցեսում մեզադրողի կողմից հրապարակվեց մի հոդված-նեկրոլոգ, վոր գրել եր Զինովյեվը Ս. Մ. Կիրովի մահվան առթիվ: Զինովյեվն այդ հոդվածը գրել եր Ս. Մ. Կիրովի սպանությունից 3—4 որ

հետո, մի ապանութիւն, վոր կատարել էր Նիկոլայեվը Զինովյեվի ու Կամենեվի անմիջական ու անձնական ղեկավարութեամբ:

Կարո՞ղ է արդյոք մի ավելի ստոր ու ցած բան լինել, քան տրոցկիստական-զինովյեվական յերկիրեսանիութեան այդ «արվեստը»:

«Քողարկման» ու խաբեյութեան բարձրագույն «դպրոցը» այս բանդան անցել էր կատարելութեամբ: Ինչ էլ վոր նրանք անում էին — ղեկավարում էին արդյոք «Ակադեմիան», ինչպես Կամենեվը. զբաղվում էին արդյոք գրական քննադատութեամբ, ինչպես Գիկելը. մշակում էին արդյոք «փիլիսոփայական» պրոբլեմներ կամ տրակտատներ էին գրում Գուշկինի մասին, ինչպես Տեր-Վահանյանը. աշխատում էին արդյոք տնտեսական բնագավառներում, ինչպես Ցեվդոկիմովը, Ռեյնգոլդը կամ Մրաչկովսկին. պատմութեան էին արդյոք դասավանդում, ինչպես Մ. Լուրյեն, թե իրենց նվիրում էին վիրաբուժութեան, ինչպես Նաթան Լուրյեն,—նրանք իրականում զբաղվում էին վո՛չ գրանով, վո՛չ իրենց պաշտոնական աշխատանքով: Վո՛չ, իրականում նրանք զբաղվում էին ապանութիւնների նախապատրաստութեամբ, քողարկելով այդ «պարապմունքը» ծառայութեամբ, գիտութեամբ, դասավանդութեամբ և այլն և այլն:

Այդ բոլոր «պրոֆեսիաները», «ծառայութիւնները», «զբաղմունքները» ծառայում էին վորպես քողարկում այն իսկական «գործի», վոր-բին նվիրել էին իրենց այդ մարդիկ, վորոնք փորձում էին կանգնեցնել մեր հաղթական շարժումը դեպի առաջ, փորձում էին պատմութեան անիվը հետ շուռ տալ:

Տրոցկիստական-զինովյեվական բլոկը խորը և խիստ կոնսպիրացված մի հանցագործ կազմակերպութիւն էր:

«Մենք անցանք,—ասում էր Զինովյեվը հետաքննութեան ժամանակ,—ուշի-ուշով մտածված և խորը կոնսպիրացված դավադրութեան ուղու վրա: Մենք մեզ համարում ենք «մարքսիստներ» և, հիշելով «ապստամբութիւնն արվեստ է» Ֆորմուլան, այդպիսին վերափոխեցինք այլ կերպ. «դավադրութիւնն ընդդեմ կուսակցութեան (մենք ասում էինք. «ընդդեմ Ստալինի») արվեստ է»:

Կոնսպիրացվելով, դավադիրները մի կողմ չպրտեցին բաբոյական-նութեան բոլոր պահանջներն ու սկզբունքները: Խաբելով կուսակցութեանն ու խորհրդային իշխանութեանը, նրանք խաբում էին նաև իրենց սեփական կողմնակիցներին ու համախոհներին, պատրաստվելով աբյունալից դատաստան տեսնելու, հետքերը կորցնելու համար, նույնիսկ սեփական տեռորիստների հետ: Նրանք իրենց շուրջը հյուսել էին ստութեան, ուխտազանցութեան, խաբեյութեան ու դավաճանութեան մի այնպիսի նուրբ և դրա հետ մեկտեղ այնպիսի խիստ ցանց, վոր այդ ցանցի միջով արդեն չէր կարելի նշմարել նրանց իսկական դեմքը:

Գնալով դեպի քաղաքական սպանությունների կազմակերպման հետ կապված ամենատոր հանցագործությունները, այդ պարոնները ջոկում էին այնպիսի մարդիկ, որոնց համար խորթ էին բարոյականության կանոնները: Նրանք մշակում էին ցինիկ անակդրությունքայնություն: Նրանք իրենց կադրերի մեջ դաստիարակում էին լոկ մերկ ատելություն ու չարություն, որոնք ընդունակ էին հրելու դեպի ամենատոր ու ամենալկտի հանցագործություններ:

«Համախոհներ ընտրելու հարցում հիմնական չափանիշը,—ասում էր Զինովյեվը,—ինձ համար և իմ կողմնակիցների համար հետևյալն էր. արդյոք այս կամ այն մարդիկ Ստալինի կողմնակիցներ թե հակառակորդներն են. դեռ ավելին. որքանով են այս կամ այն մարդիկ վճռական հակառակորդ Ստալինին, որքանով են այս կամ այն մարդիկ վճռական թշնամի Ստալինին, իրենց գործողությունների մեջ համարձակ ու յեռանդուն, պատրաստ իրոք պայքարելու Ստալինի դեմ մինչև վերջ: Սա մեզ համար ամենակարևորն էր»:

Դրեյցերն ել խոսում էր Լենինգրադի կողմից «կայուն և հաստատակամ մարդիկ», «կազմակերպության ամեն մի հանձնարարություն» կատարելու ընդունակ մարդիկ ընտրելու մասին:

Այդ կազմակերպության մեջ չէին հարցնում քաղաքական հայացքների մասին, քաղաքական համոզմունքների մասին: Այստեղ ամեն մի նոր անդամից հարցնում էին միայն մի բան. արդյոք նրանում բավականաչափ ուժեղ է ատելությունը դեպի սոցիալիզմի գործը և պատրաստակամությունը՝ գնալու դեպի ամեն բան, դեպի ամեն մի հանցագործություն:

Ահա թե ինչպես էին ընտրվում «տրոցկիստական-զինովյեվական բլոկի, այդ նոր Կամորրայի[1] «կադրերը»:

Տրոցկիստական-զինովյեվական բլոկը—քաղաքական մարդասպանների այդ գաղտնի ընկերությունը—նշավակված է հայրենիքի մատնությամբ ու դավաճանությամբ:

Միջազգային լարված հարաբերությունների պայմաններում, երբ իմպերիալիստներն իրենց դանակներն են սրում ընդդեմ Խորհուրդների երկրի, պատերազմ հրահրելով ու հարմար մոմենտի սպասելով ԽՍՀ Միության վրա գինված հարձակում գործելու համար, բլոկավորված սրիկաները պարտվողական ագիտացիա յեն մղում և պատրաստվում են պարտվելու նպատակով ոգուտագործել ամեն մի անհաջողություն և խառնաշփոթություն մեր շարքերում:

---

[1] Այսպես էր կոչվում այն գաղտնի ընկերությունը, որը ծագել էր XVI—XVII դարերում Իտալիայում և մասնագիտացել էր չանտաժի, դրամաշորթության, գաղտնի սպանությունների ու բանդիտիզմի մեջ:

Տրոցկին Դրեյցերի միջոցով Սմիրնովի հասցեյով ուղարկված նամակում գրում էր.

«Թանգագի՛ն բարեկամ: Հաղորդեցեք, վոր այսորվա համար մեր առջև կանգնած են հետևյալ հիմնական խնդիրները. 1) վերացնել Ստալինին ու Վորոշիլովին. 2) ծավալել բանակում բջիջներ կազմակերպելու աշխատանքը. 3) պատերազմի դեպքում ոգտագործել ամեն մի անհաջողություն ու խառնաշփոթություն՝ ղեկավարությունը խլելու համար»:

Ահա Տրոցկու, Զինովյեվի ու Կամենևի «դիծը»:

Այս բոնն ընդունեցին ու հաստատեցին դատարանում նաև ուրիշ մեղադրյալներ: Ցեվ այստեղ, այս դավաճանական պրոպագանդայում, առաջին դերը պատկանում է Տրոցկուն:

«Դուք ի՞նչպես եք կարծում,—ասում էր Տրոցկին Ֆրից Դավիդին, մատնանշելով մեզ մոտ իբրև թե գոյություն ունեցող դժգոհությունը,—ճապոնացիներին դեմ Խորհրդային Միության պատերազմի դեպքում կվերանա՞ արդյոք այդ դժգոհությունը: Վո՛չ, ընդհակառակը, [illegible] պայմաններում ռեժիմին թշնամի ուժերը կփորձեն միանալ [illegible] դեպքում մեր խնդիրն այն կլինի, վորպեսզի միավորենք [illegible] բենք այդ դժգոհ մասսաներին, դինենք նրանց ու առաջնորդենք [illegible] տիրապետող բյուրոկրատների»:

Զրպարտությամբ ու ինսինուացիաներով և համեմատ այդ բոնապարտիստն իր դրդումը դեպի դավաճանություն:

Դավաճանություն, ուխտադրժություն, սպանություններ, վերադարձ դեպի կապիտալիզմը—ահա տրոցկիստական-զինովյեվական բլոկի բանդիտային շայկայի իրական, իսկական ֆաշիստական ծրագիրը: Դատական պրոցեսը պոկեց նրանց յերեսից վերջին դիմակը և ամբողջ աշխատավոր աշխարհին ցույց տվեց նրանց գազանային, գիշատչական դեմքը:

Պրոցեսն ամբողջ աշխարհի աշխատավորներին ցույց տվեց նրանց իսկական թշնամիներին, վորոնք պատրաստ են վոչնչացնել պրոլետարական հեղափոխության նվաճումները, պատրաստ են հարվածել Խորհուրդների յերկրի ուղիղ սրտին, պատրաստ են այդ յերկիրը մատնել բանվոր դասակարգի գաղանացած դահիճներին:

Նրանք, այդ թշնամիները, տեսնում են նոր, յերջանիկ կյանքի ծաղկումը Խորհուրդների մեծ յերկրում—և նրանք չարակամությունից ու զայրույթից կատաղում են: Նրանք տեսնում են մասսաների բարեկեցության կուլտուրական ու նյութական անորինակ վերելքը մեր յերկրում—և նրանք գրգռվում են մեզ, նրանք չատպում են վորքան հնա-

բավոր և ապրանել ու վնասել մեր գործը: Նրանք տեսնում են, որ ԽՍՀՄ-ում սոցիալիզմը հաղթանակել է—Նրանք սրում են գռեհանական գանակները, որպեսզի նրանցով հարվածեն հաղթանակած սոցիալիզմի թիկունքին:

Գրոցեան ավարտված է:

Դավաճաններն ու մարդասպանները մերկացված են մինչև վերջ: Նրանք դատապարտված են ֆիզիկական վոչնչացման: Նրանք վոչնչացված են: Մեր սոցիալիստական մեծ հաղթանակների ճանապարհի վրայից վերացված է ևս մի արգելք—ջախջախված ու ճզմված է միջազգային ֆաշիզմի առաջավոր ջոկատը, որը փորձում էր ծավալել իր դավաճանական աշխատանքը մեր մեծ, յերջանիկ, ուրախ յերկրում, որը Լենինի-Ստալինի կուսակցության հանճարեղ ղեկավարության ներքո, մեծ Ստալինի առաջնորդությամբ ընթանում է դեպի նոր, անդասակարգ, կոմունիստական հասարակարգը:

«Большевик» № 18, 1936 թ. սեպտեմբեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եվ

Ահա թե ուր գլորվեցին 3

Տրոցկիստական-զինովյեվյան բանդիտները կապիտալիստական ռեստավրացիայի առաջավոր ջոկատն են 9

Հակահեղափոխական տրոցկիստներ-զինովյեվականները կապիտալիզմի ռեստավրատորներն են 30

Ա. Վասնեցով։ Կապիտալիզմի ռեստավրատորները և նրանց պաշտպանները 41

Բ. Վարեյկիս։ Դարձյալ կապիտալիզմի անարգ ռեստավրատորների մասին 48

Կապիտալիզմի ռեստավրատորների զզվելի պաշտպանները 58

Ն. Ռուբինշտեյն։ Ծխածածկույթի հետևը 68

Ա. Վիշինսկի։ Գեստապոյի գործակալները 75

Թարգմ. Մ. Հովհաննիսյան էջ 1 — 74
Ա. Տ.-Մկրտչյան էջ 75 — 106, խմբ. Գեղո Շաղգամյան,
կոնտր. սրբագրիչ Լ. Աբովյան, սրբագրիչ Ա. Տ.-Մկրտչյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Գլավլիտի լիազոր № 1101 — A, հրատ. № 406,
Գատվեր № 318, տիրաժ 5000, ինդեքս $\frac{\text{П-84}}{\text{Р К}}$
Հանձնված է արտադրության 15/XI — 1936 թ.
Ստորագրված է տպագրության 25/XII 1936 թ.
ԳԻՆԸ 70 կ.
Հայկուսհրատի տպարան, Երևան, Ալլահվերդյան № 71

A II
81726